

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊՐԻԼ

2015-ի ապրիլը համաշխարհային քաղաքականության մեջ մտավ որպես «հայկական ամիս»: Ապրիլի 12-ին Վատիկանում Նորին սրբություն Ջոզեֆ Բարնեթիսկոսը Սուրբ Պետրոսի տաճարում պատարագ մատուցեց՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Կաթոլիկ եկեղեցու քահանայապետն իր ուղերձում շեշտեց, որ 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը Հայոց ցեղասպանությունն է: Այս եվրախորհրդարանն ընդունեց բանաձև՝ կոչ անելով ԵՄ երկրներին ճանաչել Հայոց ցեղասպանությունը, շեշտելով, որ Թուրքիան չի կարող դառնալ եվրոպական երկիր, քանի դեռ չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Ապրիլի 23-ին Երևանում իր աշխատանքը սկսեց «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումը՝ համաշխարհային ճանաչում ունեցող ցեղասպանագետների, հասարակական-քաղաքական գործիչների մասնակցությամբ: Թե՛ ասելիքի կարևորության, թե՛ մասնակիցների ներկայանալիության առումով հայաստանյան այս համաժողովը առանձնանում էր այն գիտաժողովներից ու խորհրդակցություններից, որոնք կազմակերպվում են նախկին խորհրդային հանրապետություններում: Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների գլխավոր Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում Հայոց մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու արարողությանը մասնակցելու նպատակով Հայաստան էին ժամանել բարձրաստիճան պատվիրակություններ, նաև չորս պետությունների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Սերբիայի և Կիպրոսի նախագահները: Եվ սա՝ Չանաքկալեի միջոցառման խորապատկերին, որը կազմակերպել էր Երդողանը:

Այնուհայտ է, որ 1915 թ. ապրիլից 100 տարի անց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ճանապարհին գլխավոր խոչընդոտը մնում է Անկարայի ժխտողական քաղաքականությունը: Անկարան ոչ մի գնով չի ուզում ընդունել, որ 100 տարի առաջ կատարվածը ոչ այլ ինչ էր, քան ցեղասպանություն (չափ ժողովուրդներ են վախճանում ընդունել իրենց նախորդ դեկավարների գործած սխալներն ու ոճիրները): Եվ բնական է, որ Թուրքիան անմիջապես հայտարարեց, թե Արևմուտքն իր դեմ սկսել է «խաչակրաց նոր արշավանք», և որ թուրքական պետության դեմ հյուսվում է «համաշխարհային դավադրություն»:

Այս ամիս եվրոպական քաղաքակրթությունը փաստորեն հաստատեց իր դիրքորոշումը. այսուհետ Հայոց ցեղասպանությունը դիտվելու է որպես հանցագործություն՝ ուղղված քրիստոնյաների և մարդկության դեմ: Այս հարցում անհնար է գերազնահատել Ջոզեֆ Բարնեթիսկոսի դերը: Նա մատնանշեց 20-րդ դարում մարդկության վերապրած «երեք զանգվածային և աննախադեպ ողբերգությունները», որոնցից առաջինը Հայոց ցեղասպանությունն էր, մյուս երկուսը՝ նացիզմը և ստալինիզմը: Ջոզեֆ Բարնեթիսկոսը, Եվրախորհրդարանի բանաձևը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկու երկրների նախագահների այդ երևան, Գերմանիայի նախագահ Յոախիմ Գաուկի հայտարարությունը հաստատեցին, որ 100 տարի անց Հայկական հարցը վերադարձել է Եվրոպայի օրակարգ, և Հայաստանը չպիտի թույլ տա, որ հարցը փակվի, ինչպես փորձ արեցին փակել 1915-ին: Հարկ է հիշել նաև, որ 100 տարի առաջ Հայկական հարցը փակվեց Լեհին-Աթաթուրքի դաշինքի՝ այն է՝ 1921 թ. կնքված ռուս-թուրքական պայմանագրերի «շնորհիվ», ու քանի դեռ այդ պայմանագրերը գործում են, Հայաստանը չի կարող իրեն ապահով զգալ: Չէ՞ որ ցեղասպանությունն իրագործվեց այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը պայքարում էր իր պետականության վերականգնման համար: Եվ որքան էլ դաժան ու արյունալի էր հարվածը, հայ ժողովուրդը շարունակեց իր ընթացքը, այսօր ունի անկախ պետականություն և շարունակում է պայքարը ազգի բարգավաճման ու երկրի բարօրության համար: Ավելին՝ Հայաստանն այսօր ունի դաշնակիցներ, նաև ի դեմս կաթոլիկ եկեղեցու: Հոգևոր այդ միասնության վկայությունն է նաև այն, որ կաթոլիկ եկեղեցու քահանայապետ Ֆրանցիսկոս պապը Գրիգոր Նարեկացուն հռչակեց Տիեզերական եկեղեցու վարդապետ: Սա նույնպես կարևոր և արժեքավոր գործն է հայ ժողովրդի մղած պայքարում:

Հայաստանի ուժեղագույն դաշնակիցներից է նաև այն արժեհա-

մակարգը, որին մաս են կազմում Միացյալ Նահանգները, Եվրոպան և Ռուսաստանը (այստեղ էլ հստակ գիտակցեցին, որ ՌԴ նախագահի՝ Երևան չգալու դեպքում Ռուսաստանը լիովին կմեկուսանա քաղաքակիրթ աշխարհից): Սակայն արժեհամակարգը պետք է տարբերակել քաղաքական շահերից, որոնք կարող են և չհամընկնել: Հենց Հայաստանի դաշնակիցների աշխարհաքաղաքական կամ աշխարհատնտեսական շահերն են ստիպում նրանց հրաժարվել իրենց արժեքներից, հենց այդ պատճառով են նրանք հանդուրժում Թուրքիային, որին վերապահել են որոշակի դեր: Եվ ժամանակակից Թուրքիայի գոյության ծրագիրը (ինչպես ապացուցեց այս 100 տարին) հենց այդ պատճառով է գործում ի վնաս Հայաստանի:

Ցավոք, Հայկական հարցը Առաջին համաշխարհային պատերազմի խոչորագույն ողբերգություն ճանաչելու հարցից փոխարկվեց տարրական քաղաքական առումախի թեմայի, և հարկ եղած ժամանակ Վաշինգտոնը, Փարիզը, Լոնդոնը, Բեռլինը և Մոսկվան, իրենց շահերից ելնելով, ճնշում են գործադրում Թուրքիայի վրա: Աշխարհը երկար ժամանակ հույս էր փայփայում, որ աշխարհիկ Թուրքիայի նախագիծը օրինակ կդառնար ամբողջ իսլամական աշխարհի համար, բայց, ինչպես ցույց տվեց պատմությունը, այդ հույսերն ի դերն ելան: Թուրքիան որպես պետություն և նրա քաղաքական վերնախավը անհուսալի են, անկառավարելի և անգամ վտանգավոր: Եվ տվյալ դեպքում, ինչպես պարզ դարձավ, աշխարհը գործ ունի պարզուրույնի հետ: Անցած 100 տարվա ընթացքում Թուրքիան Ռուսաստանից և Արևելքից ստանում էր տնտեսական, ռազմական, քաղաքական, մշակութային աջակցություն, որպեսզի դառնար իսլամական աշխարհի ջահակիրը, փարոսը և միավորվեր քաղաքակիրթ աշխարհին որպես աշխարհիկ պետություն: Չուր ջանքեր: Թուրքիան այդ քննությունը չբռնեց: Դա հաստատեցին Ջոզեֆ Բարնեթիսկոսը և Եվրախորհրդարանը: ՌԴ նախագահ Վ. Պուտինը և Ֆրանսիայի նախագահ Ֆ. Օլանդը փորձեցին մեղմել իրավիճակը՝ իրենց հայտարարություններում չհիշատակելով Թուրքիայի անունը, իսկ Գերմանիայի խորհրդարանը, Մեծ Բրիտանիայի կառավարությունը և ԱՄՆ վարչապետը առաջին ծագումն են հարցը, բանգի քաղաքակիրթ աշխարհը տակավին պատրաստ չէ Թուրքիայի հարցում կտրուկ քայլերի դիմելու, թեպետ հստակ գիտակցում է, որ այդ պահը վաղ թե ուշ վրա կհասնի: Հայոց ցեղասպանության ճանաչումը նշանակում է, որ հարկ կլինի դիմել կոնկրետ քայլերի՝ դատապարտում և փոխհատուցում պահանջելու: Իսկ դրա համար անհրաժեշտ կլինի այսօրվա Թուրքիայի վերաձևում և ռուս-թուրքական դաշինքի ապամոնտաժում, այլ կերպ ասած՝ կհանգեցնի տարածաշրջանում անվտանգության համակարգի փոփոխության: Այդ փոփոխություններն անխուսափելի են: Իրան-Արևմուտք հարաբերություններում տեղաշարժը, ԱՄՆ օդուժի կողմից քրդերի նոր ցեղասպանության կանխումը (դրան ԻԼԻՊ-ին դրոշմ է Թուրքիան), ինչը նշանակում է քրդական գործընկերության, հիմք կդառնա տարածաշրջանում աշխարհաքաղաքական նոր իրողությունների, որոնց Հայաստանը պետք է պատրաստ լինի:

1915-ից հետո բոլոր երկրները համոզված էին, որ այլևս հայկական պետություն չի լինի, և հայերը որպես ազգային, կրոնական, մշակութային փոքրամասնություն, որպես համայնք իրենց գոյությունը կպահպանեն Ռուսաստանի կազմում: Խորհրդային Հայաստանը իր շուրջ 30 հազար քառակուսի կիլոմետր տարածքով պետք է դառնար դամբարան, որտեղ հայ ազգը հետզհետե կհանգչեր, սակայն այդպես չեղավ: Ավելին՝ Խորհրդային Հայաստանը դարձավ ԽՍՀՄ-ի փուլզման համար պայքարող ուժերի առաջատարը, հայ ժողովուրդը ձեռք բերեց անկախություն, կարողացավ ազատագրել օտարին տրված հայկական հողերը և ապացուցեց, որ պատմական ցուցանմուշ չէ և իրավունք ունի կանգնելու աշխարհի քաղաքակիրթ պետությունների և ժողովուրդների շարքում: Աշխարհն էլ այսօր ճանաչեց հայ ժողովրդի այդ իրավունքը: Եվ շարունակի ճանաչել, եթե Հայաստանն աշխարհի հետ խոսի նրան հասկանալի համամարդկային արժեքների և սկզբունքների, առաջադիմության ու բացախտության լեզվով:

Եղեռնի 50-ամյակը... Այդ օրը պիտի սուգ ու լաց լիներ...

Այս թռուցիկ-պոեմը գրվել է 1965 թվին՝ Մեծ եղեռնի 50-ամյակի հանրահայտ իրադարձությունների օրերին, հազարավոր մեքենագիր օրինակներով տարածվել քաղաքում և, ապա արտագրվել է ու բազմացվել ժողովրդի ձեռքով: Դրա վկայությունն է այն փաստը, որ 25-27 տարի անց հաջողվել է գտնել պոեմի երկու ձեռագիր օրինակները, ըստ որում երկրորդը՝ թերթում հայտարարություն տպագրելու միջոցով:

Իսկ գրվածքի հեղինակը՝ «Երեկոյան Երևան» թերթի խմբագրության գրական աշխատող Սուրեն Մելիքյանը,

համաժողովրդական ցույցին մասնակցելու, քաղաքական անվտանգության համար 1965 թվին 34 Կոմկուսի քաղկոմի պահանջով հեռացվել է խմբագրությունից:

Կարողացեք և զգացեք, թե ինչ հերոսություն էր այդ ժամանակ, չէ որ 1965-ին շատերին դատեցին... Սուրենի «դուխը» գալիս էր պապերից: Նրա պապը՝ Եփրեմը, մինչև գաղթը Իգդիրի (Սուրմալու) քաղաքապետն էր 12 տարի շարունակ:

Գոհար ՌՇՏՈՒՆԻ, լրագրող, արձակագիր, թարգմանչուհի

Սուրեն ԴԱՅԱՆ (ՄԵԼԻՔՅԱՆ)

ԱՊՐԻԼԻ ԴԱՍԵՐԸ

Այդ օրը պիտի սուգ ու լաց լիներ,
Քանզի եղել էր հայոց Մեծ եղեռն,
Եղեռն էր եղել
Եվ արյան հեղեղ,
Ոտնահարվել էր
Ու բռնաբարվել՝
Մի ողջ ժողովուրդ՝ բարի ու անմեղ:
Եվ հիսուն տարի մի ողջ ժողովուրդ
Միշտ մնացել էր անլաց, անհագուրդ,
Մի ողջ ժողովուրդ գորու չէր եղել
Գեթ մի կաթ ցավի արտատաք հեղել:

Այդ օրը պիտի սուգ ու լաց լիներ,
Որ հիսուն տարվա վերքն ապաքինվեր,
Եվ երեք միլիոն ապրողը սգար
Մահն այն երկուսի, որ արդեն չկար:
Բայց երկու միլիոն հատվածը ազգի
Արժանի չեղավ գեթ մի մահագործի,
Եվ հիսուն տարվա վարար ու հորդուն
Լացը խեղդեցին հայի կոկորդուն:
Այդ օրը պիտի սուգ ու լաց լիներ,
Քանզի եղել էր հայոց Մեծ եղեռն,
Բայց չկար անգամ կարեկցանք մի սուտ
Եվ մի կաթ արցունք,
Կամ գեթ մի դրոշմ՝ ան ծայրակապով,
Կամ սգո սալյուտ,
Գոնե միլիոնին՝ մեկ համազարկով:
Երկու համազարկ...
Այդ էլ թվաց շատ:
Քսանչորսն ապրիլի, որպես Մեծ եղեռն,
Հայ ամբողջ համար միշտ սուգ է եղել,
Եվ հիսուն տարի հայերն ամեն տեղ
Սուգ են կատարել, միայն ոչ այստեղ:

Բայց ինչպե՞ս եղավ և ի՞նչ պատահեց,
Որ Հայաստանում սուգը արգելվեց:
Սկսվեց այն բանից, երբ Կենտկոմը մեր
Հանկարծ հռչակեց «եղեռնին՝ եղեռն»:
Մինչ ազգը, որ իր ցավերն էր հիշել,
Ուզում էր սգով այդ օրը նշել:
Հիսուն տարվա մեջ առաջին անգամ
Բացված շուրթերին դրեցին փական:
Այսպես անարգվեց մի ողջ ժողովուրդ,
Մի ողջ ժողովուրդ մնաց անհագուրդ,
Երկու միլիոն սուրբ, թանկագին մեռել
Մնաց անթաղել,
Երկու միլիոն մարդ
Մնաց անշիրիմ ու անպատարագ:
Սուգ էր աշխարհի բոլոր ձեգերում,

Որ գեթ մի հատիկ հայ էր դեգերում,
Բայց սգվոր հայր մայր Հայաստանում
Սև զգեստի համար հայտնվեց բանտում:

Այդ օրը պիտի սուգ ու լաց լիներ,
Քանզի եղել էր հայոց Մեծ եղեռն,
Բայց վերից եկավ հրովարտակ մի նենգ,
Որ լաց չլինի ժողովուրդը հեգ,
Եվ սգից սուգը դարձավ ոչ թե սգո երթ,
Այլ հանդիսավոր, տոնական համերգ:
Եվ օպերայում մեր տոնահանդերձ
Համերգ էր, թեև «սգո նիստ» կոչվեց:
Բազմած են այստեղ զափս ու իր կինը,
Չամ ու այդ զամի ռուս աղախինը,
Նա, ով հայերեն խոսել չի ուզում,
Բայց ժողովուրդն է մեր ներկայացնում:
Նստած են նաև շուր տված հայեր,
Որ չգիտեն էլ, թե ինչ է եղեռն:

Այսպես, հենց սկզբից, ամեն ինչ թարսվեց.
Սուգը դարձավ ցույց, փակ լեզուն բացվեց,
Եվ ինչպես սգվորն իր ողբի ժամին
Միշտ միտն է բերում կորուստները հին,
Մենք էլ հիշեցինք մեր Մուշու ու Վանը,
Ղարսն ու Սուրմալուն, Նախիջևանը...
Հիշեցինք մեկ-մեկ թե հին և թե նոր,
Մեր կորած-թողած հողերը բոլոր:
Եվ ազգն ընդվզում, Հողերն էր ուզում...
Բայց նիստում թառած ոգին Նազարի
Թքում էր դեմքին հարյուր հազարի,
Հազարը դուրս էր կանչում Նազարին,
Զեր լսում սակայն մեկը հազարին:

Այդ էլ դեռ ոչինչ,
Մակայն կրկնվեց եղեռնը նորից,
Երբ օպերայի մեծ ջրամբարից
Նեխահոտ ջրի մի ամբողջ զանգված
Լցրեցին գլխին տաքացած մարդկանց:
Ավաղ, անձրև չէր դա մի հասարակ,
Այլ հեղեղակերպ ջրերի տարափ,
Որ պատճառում է ոչ այնքան սարսափ,
Որքան դառնություն ու վիրավորանք:
Այսպես պարզապես
Ջրում էին մեզ
Հրշեջ փողերից,
Որ մենք ձեռք չաշենք կորած հողերից,
Ջրում էին մեզ,
Որ խելացնոր մտքերից սառչենք
Կամ վախից փախչենք:

– Եկեք բանակցենք, – կանչում են դրսից,
Իսկ ներսից ահա լսվում է մի ձիչ,

Որպես հայ ազգին նետված մի ձեռնոց,
Թե՛ հասեք, ներսում ծեծում են ձեռնոց:
Եվ ծեծում էին, բայց գիտե՛ք թե ում՝
Իրենց ձեռքն ընկած այն հինգ պատանուն,
Որ հանդգնեցին դահլիճ ներխուժել,
Թեև այդ բանից ոչ ոք չէր տուժել:
Իսկ ինչ չէր տեսել մեր հին քաղաքը,
Այն էլ լրացրեց իմպոստ մահակը
Այդ գենը փորձված, որ սովորական
Միլիցիոներին դարձրեց ոստիկան:
Այսպես պատահեց,
Որ համբերության բաժակը լցվեց,
Եվ խաղաղ ցույցից հանկարծ ռումբ ստացվեց,
Եվ ռումբը պայթեց:
Ազգը սարսառաց,
Փոթորկեց, պոթթեց,
Եվ հանկարծ խուժեց
Դրսից դեպի ներս:

Մեզ մեղադրեցին, որ թեթևակի
Ջարդվեց մի քանի դուռ ու ապակի,
Բայց ինչու, ինչու՝ մենք չենք մեղադրում,
Երբ մեր մայրենի լեզուն են կոտրում,
Ինչու ենք տանում,
Երբ մեզ խոցում են, ոչ թե դարմանում,
Ինչու չենք հեծում,
Երբ մեր վիրավոր հոգին են ծեծում
Կամ էլ գլխներին սառը ջուր լցնում,
Ինչու չենք վանում,
Երբ «մեծ» եղբայրն է մեզ դավաճանում:

Համերգն ընդհատվեց, և դրա համար
Ինչ-որ մեկն իսկույն հաշիվ պիտի տար,
Ուստի գտնվեց շատ հարմար լուծում.
Ցույցն անվանեցին խուլիգանություն...
Տառապյալ լի ազգ, ժողովուրդ իմ հեգ,
Արդյոք քո մտքով անցե՛լ էր երբեք,
Որ միշտ լինելով մեծ ու պատվական
Դու պիտի կոչվես նաև խուլիգան:

Այնինչ ապրիլն էր, որ ապացուցեց,
Թե որքան ազնիվ ուժեր կան մեր մեջ:
Մեր խաղան հողին՝ արգավանդ ու ջերմ,
Ապրիլի ցանեց երկու միլիոն սերմ,
Երկու միլիոն հունդ,
Որ փոխանցվելով սերնդից սերունդ՝
Դեռ պիտի դառնան նոր ընձուղ ու ծիլ՝
Սրտից սիրտ անցնող հայության սածիլ:

40

Թե ժողովուրդ էր հայը մինչև այդ,
Ապրիլին դարձավ ժողովուրդը՝ ազգ,
Եվ մենք հայերս այնքան բարձրացանք,
Որ մեծ կոչվելու իրավունք ստացանք:
Ապրիլին ծագեց այն միտքն էական,
Որ վաթսուներկու դար պետք թվական,
Անչափ նման էր երեսուկյոթին,
Ինչպես մայր գայլին՝ նրա բիճ որդին:

Հող էինք ուզում, ջուր տվեցին մեզ,
Բայց սառը ջրից մեր միտքը պարզեց,
Եվ պաղ ցնցուղից հայ մարդիկ սթափված՝
Հանկարծ հասկացան, ինչպես են խաբված...
Ապրիլն անհամար խոր վերքեր բուժեց
Եվ շատ կարևոր մի միտք էլ հուշեց,
Որ նա, ով չունի սգի իրավունք,
Չի կարող կոչվել ազատ ժողովուրդ:
Ապրիլին էր, որ հայոց աշխարհը
Մոլորեց, սերտեց «միացե՛ք» բառը,
Մոլորեց, ինչպես պիտի ընդվզել,

Ինչպես հայրենի հողերը ուզել:
Ապրիլն անկնճի շատ դեմքեր կնճեց
Եվ չվճռված շատ հարցեր վճեց,
Իսկ պատմությունն էլ կվճռի անշուշտ,
Թե ով էր մեզնից ճշմարիտ կամ սուտ,
Թե ով էր արդար
Եվ ով ջարդարար.
Ով հայրենասեր, ազգի բարեկամ,
Եվ ով խուլիզան...
1965 թ. Երևան
(Ներկայացրել է Ռուբեն Մելիքյանը)

«Հայությունը չէր կարող անհետանալ, եթե չի եղել ֆիզիկական ոչնչացում, եթե չեն գրկել ինքնությունից, որը ևս ցեղասպանություն է»

Հայոց ցեղասպանության 100-րդ տարում ի՞նչ գիտենք մենք ցեղասպանության պատճառների ու հետևանքների, 20-րդ դարասկզբի Օսմանյան կայսրության, Ռուսական կայսրության կոկկասյան քաղաքականության, 1908-ի երիտթուրքական հեղաշրջման, 1912-ի հայկական բարենորոգումների ու դրանց ձախողման, բուն 1915-ի իրադարձությունների, 1919-ի թուրքական ռազմական ատյանի դատավարությունների, ժամանակակից Թուրքիայի Հանրապետության, հարակից տասնյակ հարցերի մասին: Մինչդեռ միայն պատմաբանները չէ, որ պիտի իմանան

պատմությունը:

«1915-2015» խորագրով «Իրատես de facto»-ն այսուհետ անդրադառնալու է հայ-թուրքական հարաբերությունների մանրամասներին՝ տարածաշրջանային հարցերով փորձագետ-վերլուծաբան ՍԱՐԳԻՍ ՀԱՅՊԼԱՅԱՆԻ աշակցությամբ՝ բացահայտելով փաստեր ու իրողություններ, որոնց իմացությունը անհրաժեշտ է ոչ միայն անցյալը, այլև ներկան հասկանալու ու ապագայում ճիշտ կողմնորոշվելու համար:

– Իբրև սկիզբ՝ սահմանենք, թե ինչ ենք հասկանում Հայոց ցեղասպանությունն առելով:

– Անհասկանալի է, երբ ինչպես սփյուռքում, այնպես էլ Հայաստանում անընդհատ օգտագործվում է «հայոց ցեղասպանություն» եզրույթը: Ես հասկանում եմ՝ հայոց լեզու, հայոց էթնիկ, հայոց պատմություն, և այլն, բայց ո՞րն է Հայոց ցեղասպանությունը: Դեռ 80-ական թթ. Ֆրանսիայում «Հառաջ» օրաթերթում ես անդրադարձել եմ այս հարցին: Ոչ թե հայոց ցեղասպանություն է, այլ հայության դեմ գործված ցեղասպանություն: Մեր սերունդները պիտի շատ հստակ տարբերեն, որ հայոց լեզուն մերն է, իսկ հայոց ցեղասպանության անվան տակ մեզ այսպես կալածը մեր դեմ այլոց գործած հանցանքն է:

Ցեղասպանությունը իրավական կատեգորիա է, 1948 թ. Ռաֆայել Լեմկինի սահմանած հասկացությունը հայերի հանդեպ կատարված ոճրագործությունների անվանման համար էր, և Լեմկինը հիմնավորում էր հայերի դեմ կատարվածի օրինակով իր եզրույթի հատկանիշները: ՄԱԿ-ը շատ հստակ կետերով ու ենթակետերով բնորոշել է, թե ինչ է ցեղասպանությունը: Ցեղասպանությունը ոճիր է մարդկության դեմ, և համամարդկայինն ու հակամարդկայինը շատ հստակ տարանջատվել են միմյանցից: Ճիշտ նույն կերպ չկա հայկական հարց, կա թուրքական հարց, որովհետև ինչ ասելու ենք թուրքերի հետ է կապված: Հարցը թուրքերն են ստեղծել, և այսօր իրենք պիտի տակնից դուրս գան: Իմ միակ հասցեատերը նա է, բայց ես Ֆրանսիայից եմ խնդրում ցեղասպանությունն ընդունել: Ոճրագործին թողած Ֆրանսիայից ի՞նչ ենք ուզում: Ֆրանսիան կարող է հանցակից դիտվել, որովհետև պատեղ էր ու ոչինչ չարեց: Պատերազմում էիր, քեզ համար չշնամի պետություն էր, դարավոր կապեր ունեիր հայության

հետ, ոչ միայն անտարբեր գտնվեցիր, այլև ցեղասպանությունից հետո էլ, փրկված հատվածին օգնության ձեռք մեկնելու փոխարեն, օգնեցիր Մուստաֆա Քեմալին և Կիլիկիան հանձնեցիր նրանց:

– Ցեղասպանության համահայկական հռչակագիրը տվեց ժամանակային սահմանները՝ 1894 – 1923, Ձեր կարծիքով՝ այդ սահմաններն ընդգրկո՞ւմ են ցեղասպանության ամբողջական պատկերը, թե՞ մինչ այդ ու հետո էլ եղել են ցեղասպանության հատկանիշներ կրող ջարդեր:

– Աշխարհի մասշտաբով բնականաբար, մինչև այդ էլ եղել են տարբեր ժողովուրդների ցեղասպանության դեպքեր: Հայության հանդեպ՝ ևս, այլապես ինչու են եղել տեղաշարժերը, Մուսա լեռում հայն ինչ գործ ունեց: Քեասարում: Եգիպտոսում: Հայերը տեղահանվել են: Դեռ սելջուկների տիրապետության ժամանակ են բռնություններ գործադրվել: Մինչ այդ եղել են արշավանքներ, տարբեր քաղաքակրթությունների դեպի հյուսիս, դեպի հարավ, դեպի արևելք, դեպի արևմուտք: Հայաստանը, Հայկական բարձրավանդակը խաչմերուկային դիրք ունեն: 16-րդ դարի ճանապարհորդները հստակ, իրենց բոլոր փաստաթղթերում գրանցել են, որ Անգորայից/որ այժմյան Անկարան է/ մինչև Թավրիզ ամբողջ արևելքում ազգային բնակչության գերակշռողը հայերն էին: Օսմանյան կայսրության կազմավորման երկրորդ-երրորդ սերունդը դեռ չկար, մենք այդ տարածքի բնակչության բացարձակ մեծամասնությունն էինք: 16-րդ դարից սկսած, ինչպես Նիկողայոս Ադոնցն է նշել, սկսվում է քրդերի ներթափանցումը պատմական Հայաստան, և քրդերի տեղավորման համար Սելիմ առաջին տուլթանը, որ միայն ութ տարի կառավարեց, բայց քառասունեց օսմանյան կայսրու-

թյան տարածքները, խաշնարած, քաղաքակրթական ավանդույթներ չունեցող ցեղախմբերին, որ սովոր էին ապրել վրաններում, պարտավորեցրեց նստակյաց կյանքի: Նրանց բաժանեցին հայկական գյուղերի վրա: Ադոնցն այդ մասին սքանչելի է գրում: Օսմանյան կայսրության հրովարտակով քրդերը դառնում են հայկական գյուղերի բնակիչներ, պետք է կերակրվեն, ապրեն նրանց հաշվին: 40 տարի չանցած՝ Բիթլիսի Իդրիսին (Իդրիսի Բիթլիսի), որ Օսմանյան կայսրությունում լուրջ դերակատարում է ունեցել, կայսերական հրովարտակով հանձնում են այդ տարածքը: Այսինքն՝ հալերը, բացի օսմանահայատակ լինելուց, հայտնվում են կրկնակի հպատակության տակ. Օսմանյան պետությանը, որին բազմապիսի հարկատեսակ էին վճարում, հավելվում են քրդերը: 16-րդ դարից մինչև 20-րդ դարասկզբը հայությունը մտաավորապես չորս միլիոն մարդու անհետացում ունի: Համեմատենք Մեծ Բրիտանիայի, որ կղզի էր ու բացի ծովային ճանապարհից այլ ելքեր չուներ, և Արևմտյան Հայաստանի, որ մեր հայրենիքի 9/10-ն էր, բնակչության թիվը: 1000 թ. Հայաստանն ունեցել է 6 000 000 բնակիչ, Մեծ Բրիտանիան 2 000 000, 1890-ին Հայաստանն ունեցել է 3 000 000 մարդ, Մեծ Բրիտանիան՝ 30 000 000, 1920-ին՝ Հայաստանը՝ 1 000 000, Մեծ Բրիտանիան՝ 40 000 000: Ուր անհետացան հայերը: Ընդունենք, որ 1915 – 1923 թթ. մեկուկես-երկու միլիոն (ըստ Թալեթի օրագրի՝ 920 հազար հայ) գոհ եղավ, ընդունենք, բայց մինչ այդ գոյություն ունեցող հայությունն ուր կորավ, ինչու չբազմացավ: Բոլոր պատմական տվյալները գրավոր, օտարազգիների, նշում են, որ հայ ընտանիքների միջին թիվը 12-20 մարդ էր, արևմտահայությունը միշտ է

50

բազմազավակ եղել: Թվային իրավիճակը պարզ է դարձնում, որ ցեղասպանությունը պարբերական է եղել: Ռաֆայել Լենկինը 20-րդ դարում պիտի գար ու սահմաններ ցեղասպանությունը, բայց այդ ոճիրը նրանից էլ շատ առաջ է եղել, ինչ անենք, որ ցեղասպանություն հասկացությունը 11-րդ դարում չկար, աշխարհի քաղաքակրթության աստիճանն այլ էր, դա չի նշանակում, որ մենք այսօր պատմական փաստերին գնահատական տալ չենք կարող: Միայն այս թվերը վկայում են, որ ոճիր եղել է, հայությունը չէր կարող անհետանալ, եթե չի եղել ֆիզիկական ոչնչացում, եթե չեն գրկել ինքնությունից, որը ևս ցեղասպանություն է երբ մարդուն գրկում են իր հավատից, լեզվից, մշակույթից, տարածքից: Խարբերում ցեղասպանության ենթարկվածների թիվը մոտ 130 000 էր, հայերի թիվը ավելի քան 250 000, ուր կորան ժառանգը: Հիմա Թուրքիայում շատերն են ընդունում, որ իրենց նախնիները հայ էին տառտ հայ էր, պապս հայ էր, տատիս մայրը հայ էր, և այլն, դա ավելացնում է հայերի թիվը, այդ տատերն ու պապերը, որոնց մասին բարձրաձայնում է այսօրվա սերունդը, հայ որբերն են եղել, որ կորցրել են հարազատներին 1894 – 1896-ին, կամ 1909-ին, կամ 1915 – 1923-ին զանգվածային սպանությունների ժամանակ: Դավաճափոխ հայերի հարցը գիտական ուսումնասիրության կարիք ունի, միայն

1514 – 1750-ական թթ. 120 000 հայություն բռնի ուժացվել է Մեքսիկայում, Եվրոպիայում, Ամերիկայում, Կեսադիայում, Գամբիայում, Գիլիկիայի հյուսիս-արևելքում, Դերսիմում, Երզնկայում, սևծովյան ափերին, ինչքան ասեք գրավոր վկայություններ կան ձեռագիր ու տպագիր: Ուժացված հայերի մեծ մասը նախընտրել է ավերակ դղբաշ կրոնի մեջ թաքնվել, որ շիա մահմեդականության ամենաձայրահեղ աղանդը լինելով, ամենահանդուրժող, համամարդկային արժեքների հետևորդ հանդիսացող իսլամն է, շատ ավելի խոր արմատներից հեթանոսությունից գալով: Մալաթիայի հյուսիս-արևելքի Ակն գավառն ունեցել է 120 հայկական գյուղ, 40 գյուղ ամբողջությամբ իսլամացվել է: Գյուղերի անուններն առայսօր հայկական են Խաչոյենց, Վարդանենց, Կրեանհայրենց: Երբ են այս գյուղերն ուժացվել: 1810 – 1870-ին: Մալաթիայի հյուսիսի Աղջաղաղ անունը կրող տարածքում 100-ի չափ գյուղեր կան, հայոց պատմության մեջ վկայվում է, որ Աղջաղաղի բնակիչները մեր ցեղից են, ժամանակին բռնի ուժացվել են, դարձել ավերակ դղբաշ: Արշակ Ալադյաճյանը «Մալաթիայի հայոց պատմությունը» գրքում վկայում է, որ երբ թուրքական զորքերը սկսում էին հայերին կոտորել, ղզբաշները փորձում էին պաշտպանել, թեկուզ 200 – 300 տարի հայությունից հեռացել են, բայց գենետիկ հիշողության մեջ շատ լավ գիտեն, որ ծագումով հայ են: Ալևի-ղզբաշներն են 1915-ին հայ

որբերին հավաքել, որ գոնե մի հատվածը փրկեն:

Հայաստանում ցեղասպանագիտությունը պետք է դասավանդման առարկա դառնար, գիտական մոտեցում ցուցաբերվեր նախորդող շրջանը, ընթացքը, հետևանքները պարզելու համար: Յեղասպանությունը հանցանք է, և այստեղ ավելի շատ հետևանքներն են կարևոր: Հայաստանում պետական հիմունքներով ցեղասպանության հետևանքները չեն քննարկվում: 100-րդ տարելիցն է, բայց հարցափույզ արեք ինչ է ցեղասպանությունը, ու պատասխանների գերակշիռ մասը կլինի թուրքը մեզ կոտորել է, հետո ... Դպրոցներում պիտի իբրև առարկա ուսուցանվի: Ինչու անընդհատ մեր երեխաների մեջ լաց ու կոծի, սգի, սպանվածի, կողոպտվածի, հայրենազրկվածի թերաթժեքության բարդույթ է մտցվում վաղ հասակից: Ու էլ դա պետք, ինչ է տալիս: Երևանում ծնված-մեծացած տղաս ինձ ասում է՝ Արարատը մեր սարն է, ինչու չենք գնում բարձրանալ: Պատասխանում է՝ չենք կարող գնալ, նախ մեր այժմյան հանրապետության սահմաններում չէ, հետո այնտեղ թուրք զինվոր կա թույլ չի տա: Երեխան զարմանում է պապա, դու էլ ես զինվոր, գնանք, թուրքին խփենք, մենք կանգնենք: Ինչու է իմ երեխան այդպես ասում: Եթե նրան բացատրեն, նա կհասկանա, ինքը պատասխաններ կորոնի՝ ինչ անել:

Անահիտ ԱՐԱՍՅԱՆ

ՎԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ – 100



1915 թ. սկզբին Արևմտյան Հայաստանի վիլայեթներում բռնկված կոտորածների ալիքը հասնում է Վանի նահանգ: Կովկասյան ճակատում պարտություն կրած թուրքական զորքերը (թվով շուրջ 12 000), նրանց միացած քրդական անկախ շոկատներն ու չերքեզական հեծելազորը Վանի նորանշանակ կուսակալ Ջուղթ բեյի հրամանատարությամբ սկսում են նահանգի հայ բնակչության կոտորածները, թալանն ու ավերածությունները: Մի շարք գավառներում (Շատախ, Հայոց ձոր, Արճեշ, Թիմար, Աջալվազն այլն) հայերը դիմում են ինքնապաշտպանության՝ համառ մարտեր մղելով թշնամու դեմ:

Երկարատև ու համառ դիմադրություն է ծավալվում նահանգի կենտրոն Վան քաղաքում, որտեղ բնակվող շուրջ 23 հազար հայերին միանում են նաև շրջակա գյուղերից փախած հազարավոր հայեր: Տեղի հայկական կուսակցությունները՝ Արամ Մանուկյանի գլխավորությամբ, սթափ գնահատելով իրավիճակը և խուսափելով վերահաս բնաջնջումից, ժողով են գումարում՝ որոշելով դիմել ինքնապաշտպանության:

Կազմվում է ինքնապաշտպանական մարմին (անդամներ՝ Արամ

Մանուկյան, Արմենակ Եկարյան, Գաբրիել Մեմրոյան, Կաջակ Առաքել, Բուդարացի Գրիգոր (Կյոզյան), Հրանտ Գալիկյան, Փանոս Թերլեմեզյան):

Հիմնական մարտերը ծավալվում են քաղաքի երկու հայաբնակ հատվածներում՝ Այգեստանում և Քաղաքամեջում: Մայրիկի 7-ին թուրքերի ձեռնարկված առաջին զրոհը հաջողությամբ հետ է մղվում. հայերը հրդեհում են Վանում թուրքական զորքի կարևոր ամրություններն ու կենտրոնները: Հաշվի առնելով թուրքերի թվական գերակշռությունը՝ Այգեստանի զինվորական խորհուրդն ընտրում է պաշտպանական մարտավարություն: Մայրիկի վերջին թուրքերին անցնում են լայն հարձակման: Ռմբակոծվում են Այգեստանի ռազմական դիրքերը, դպրոցներն ու եկեղեցիները: Մեկ օրվա ընթացքում թուրքերը օգտագործում են 400 ռումբ: Վանի տարբեր հատվածներում փոփոխակի հաջողություններով կատարվեցին մարտեր են ընթանում, որոնց ակտիվ մասնակցություն են ունենում բազմաթիվ հայ պատանիներ, կանայք ու աղջիկներ:

Մայրիկի վերջին նկատվում է ռազմամթերքի ու սննդի խիստ պակաս: Քաղաքի պաշտպանները մի քանի անգամ սուրհանդակներ են ուղարկում ռուսական բանակ՝ օգնության խնդրանքով: Թուրքական անընդմեջ հարձակումները զուգորդվում են քաղաքի շրջակա գյուղերի հայության զանգվածային կոտորածներով, որոնց զոհ է դառնում շուրջ 24 000 մարդ, թալանվում և հրդեհվում է ավելի քան 100 հայկական գյուղ:

Վանի ինքնապաշտպանությունն ունենում է հաղթական ավարտ: Մայիսի 5-ին քաղաք է մտնում հայ կամավորական հեծելազորը՝ Խեչոյի (Խաչատուր Ամիրյան) և Դրոյի (Դրաստամատ Կանայան) գլխավորությամբ: Մայիսի 6-ին Վան է մտնում նաև ռուսական զորացուկատար: Քաղաքը հասած ռազմական օգնության շնորհիվ թուրքական զորքը փախուստի է դիմում: Վանն ազատագրվում է: Արամ Մանուկյանը նշանակվում է Վանի նահանգապետ:

Շուրջ մեկ ամիս տևած դիմադրության ընթացքում թուրքական կորուստները կազմում են մոտ 1000 զինվոր և սպա, հայերը տալիս են մոտ 350 զոհ:

Վանի ինքնապաշտպանությունը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի փառավոր էջերից է: Այն տասնյակ հազարավոր հայերի հնարավորություն տվեց փրկվելու անխուսափելի բնաջնջումից՝ բացառիկ օրինակ ծառայելով այլ շրջանների հայության համար:

Լյուրթ պատրաստեց ԳՅԹԻ գիտաշխատող Սեդա ՊԱՐՍԱՅԱՆԸ

1965-ի ռուբիկոնը

Այսօր բոլորիս բնական է թվում այն, որ Երևանում կա Հայոց ցեղասպանության զոհերի թանգարան ու հուշարձան, որ այդ դեպքերի մասին հազարավոր գրքեր են գրվել, որ այդ թեմային անընդհատ անդրադառնում են թերթերը, ռադիոն ու հեռուստատեսությունը:

1965-ի ապրիլի 24-ը դարձավ հայոց նորագույն պատմության շրջադարձային էջը. ազգի մեծագույն ողբերգությունը վերջապես դադարեց լինել արգելված հարց: Բայց ի՞նչ տեղի ունեցավ: Ինչո՞ւ լռության տասնյակ տարիներից հետո առաջին անգամ պետական մակարդակով նշվեց Օսմանյան Թուրքիայում հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրն ու սկսվեց հուշահամալիրի կառուցումը:



Ումանք պատճառը տեսնում են «կյոթ» թվի մեջ. 1965-ին լրացավ ողբերգական դեպքերի 50 տարին: Բայց չէ՞ որ դրանից առաջ եղել էր քառասունամյակ, երեսունամյակ, իսկ հարցը ժառանգել էր արգելված: Հետ նայելով՝ հիմա կարելի է երկու հիմնական պատճառ նշել. առաջինը հայկական սփյուռքի միավորումն էր: Սփյուռքը, որի միջուկը հայ փախստականների երկրորդ սերունդն էր, որ կրթություն էր ստացել, քաջ գիտակցում էր իր իրավունքներն ու հանցագործության միջազգային ճանաչում ու դատապարտում պահանջում: Երկրորդը. Ստալինից հետո խորհրդային վարչակարգը քիչ թե շատ մեղմացավ, ու սկսվեց կարճատև շրջան, որին այն ժամանակ տվեցին «խրոշչովյան ձնհալ» պատկերավոր անվանումը, առաջացավ «հնարավորությունների պատուհանը»: Բայց բոլոր այս նախադրյալներն անօգուտ կլինեին, եթե «ճիշտ տեղում ու ճիշտ պահին» չհայտնվեր նախաձեռնության կարևորագույն խնդիրը ստանձնող մարդը:

Խոսքն այդ տարիներին Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար ու գործնականում Հայաստանի ղեկավար Յակով Նիկիտայի Զարոբյանի մասին է: Եթե նա վճռական քայլեր չձեռնարկեր ողբերգական դեպքերի հիշատակին նվիրված միջազգառուժները կազմակերպելու համար ու ձևական մոտեցում որդեգրեր, ամենայն հավանականությամբ «հնարավորությունների պատուհանը» առնվազն 25 տարի էլ փակված կմնար:

Զարոբյանի նպատակներն այն տարիների աներևակայելի էին, քանի որ առնչվում էին ԽՍՀՄ արտաքին քաղաքականությանն ու գաղափարախոսությանը: Պետք էր դուրս գալ միութենական հանրապետության կենտրոնի առաջին քարտուղարի իրավասությունների սահմաններից: Ավելին՝ Մոսկվային նման հարց ներկայացնելը Յակով Զարոբյանի համար կարող էր ունենալ շատ սոսաճ հետևանքներ, վտանգել կարիերան ու անթերի ծառայողական ցուցակը: Հայաստանի կոմկուսի կենտրոնի նախագահության շատ անդամներ թերահավատությամբ ու զգուշավորությամբ էին մոտենում ցեղասպանության օրվա առթիվ անցկացնելիք պաշտոնական միջոցառումներին, վախենում էին պատահարներից ու Մոսկվայի պատժամիջոցներից, քանի որ լավ էին գիտակցում, որ զարգացումները կարող են հեշտությամբ անկառավարելի դառնալ:

Հարկ է նշել, որ ցեղասպանության 50-ամյակը նշելու որոշումը ոչ թե հայրենասիրության եզակի պոթեկում էր, այլ Զարոբյանի



ընդհանուր քաղաքականության մի մասը՝ 60-ականների սկզբի Հայկական ՄՍՀ-ի քաղաքականության, որը միտված էր ամրապնդել մշակութային ինքնությունն ու վերականգնել հայ ազգի միասնությունը: Երեսուն տարի էր, ինչ Հայկական ՄՍՀ ու սփյուռքի միջև խզվել էին քաղաքական ու մշակութային կապերը. Զարոբյանի արածը մեկուսացման այս պատնեշը հաղթահարելու ճանապարհին թերևս ամենանշանակալի քայլն էր: Պետք է նաև հաշվի առնել, որ նրա համար 1915-ի դեպքերը վերացական հարց չէին. ցեղասպանության ժամանակ ընտանիքը գաղթել էր Արդվինից ու երկար տարիներ ապրել դեգերումների մեջ: Զարոբյանը մանկության ու պատանեկության տարիները անց էր կացրել գրկանքների մեջ: Հայրն ու ավագ եղբայրն էլ մահացել էին չդիմանալով կյանքի



Յակով Զարոբյանը, Անատոս Միկոյանը և Անտոն Զոհինյանը քննարկում են «թեժ» թեման

ծանր պայմաններին...

1964-ի գարնանը նա, անսալով թերահավատներին, սկսեց Ցեղասպանության օրվա նախապատրաստությունները: Պաշտոնական միջոցառումների համար անհրաժեշտ էր ԽՄԿԿ նախագահ

հույան (քաղաքային) համաձայնությունը: Հայաստանի կոմկուսի կենտրոնում մի քանի խորհակցություն կազմակերպվեց, որոնց մասնակցեցին առաջատար պատմաբաններ և այլ մտավորականներ, ու Մոսկվայի ղեկավարության համար պատրաստվեցին համոզիչ գեկույցներ:

Յակով Նիկիտովիչը մի քանի անգամ հանդիպեց Նիկիտա Խրուշչովի (Խրուշչովը գլխավորեց ԽՄԿԿ կենտկոմը մինչև 1964-ի հոկտեմբերի 14-ը), Լեոնիդ Բրեժնևի, արտաքին գործերի նախարար Անդրեյ Գրոմիկոյի ու կուսակցության գլխավոր գաղափարախոս, ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Միխայիլ Սուսլովի հետ:

Գրոմիկոն չէր ուզում խոտվեցնել թուրքերին, որոնց հետ այդ ժամանակ պետական մակարդակով լավ հարաբերություններ էին հաստատվել, մանավանդ երբ Խորհրդային Միությունը 1953-ին Հայաստանի ու Վրաստանի անունից պաշտոնապես հրաժարվել էր Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջներից: Առանձին դժվարություններ առաջացան Սուսլովին համոզելիս: Վերջինս Զարոբյանի առաջարկում տեսնում էր ազգայնամոլության հրահրում ու ոտնձգություն գաղափարախոսական դոգմների դեմ: Անաստաս Միկոյանն էլ, ընդհանուր առմամբ, նույն կարծիքն ուներ: Գրոմիկոն վերջիվերջո համաձայնեց Զարոբյանի առաջարկներին, բայց այն պայմանով, որ միջոցառումների ժամանակ չբարձրացվի տարածքային հարցը: Հայաստանի առաջնորդն իր վրա վերցրեց միջոցառումների խաղաղ անցկացման ամբողջ պատասխանատվությունը: Ազդեցիկ հայկական սփյուռքի գործոնը հիմնական փաստարկն էր, որ Զարոբյանը ներկայացնում էր Կրեմլի կուսակցական ու պետական գլխավոր գործիչների հետ բանակցելիս: Զարոբյանին հաջողվեց համոզել նրանց, որ ընդառաջ գնալով հայերի անկնկալիքներին՝ ԽՍՀՄ կստանա հայկական սփյուռքի քաղաքական օժանդակությունը, իսկ հակառակ դեպքում այնտեղ կուժեղանա հակախորհրդային տրամադրությունը:

Համաձայն Զարոբյանի գեկույցի՝ 1964-ի նոյեմբերի 13-ին Հայաստանի կոմկուսի կենտկոմի նախագահությունը հավանություն տվեց «1915 թվականին հայերի մասսայական ջարդերի 50-ամյակին նվիրված միջոցառումների մասին» նամակի տեքստին, որը հետո ուղարկեցին Մոսկվա: 1915-ի ցեղասպանության գոհերի հիշատակին Երևանում հուշահամալիր կառուցելուց բացի առաջարկվեց նաև հրատարակել գրքեր ու հոդվածներ, պատրաստել ռադիո- և հեռուստահաղորդումներ, Երևանում պետական մակարդակով հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ հանդիպումներ կազմակերպել: Հետագայում գրեթե բոլոր առաջարկները իրագործվեցին: 1965-ի փետրվարին Հայկական ՍՍՀ կառավարությունը պատրաստեց ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի կառուցման որոշման նախագիծը, Հայաստանի կոմկուսի կենտկոմը հաստատեց այն:

Հուշարձանի լավագույն նախագծի համար մրցույթ հայտարարվեց: Մոդելները հանրությանը ներկայացվեցին ճարտարապետների տանը: Երկու անգամ հայտարարվեց մրցույթ: Վերջում հատուկ հանձնաժողովը ընտրեց լավագույնն, ու շինարարությունը սկսվեց:

Զարոբյանը ջանք չիմայեց, որ այս իրադարձությունների մասին գրվի կենտրոնական մամուլում՝ ԽՄԿԿ կենտկոմի «Պրավդա» թերթում: Սա շատ կարևոր էր, քանի որ այս դեպքում Հայաստանում անցկացվող միջոցառումը կարժանապարհ համամիութենական ճանաչման: Պետք է տպվեր ակադեմիկոս Մ. Ներսիսյանի հոդվածը հայոց ցեղասպանության մասին: Բայց «Ցեղասպանություն՝ մարդկության դեմ ծանրագույն հանցագործություն» վերնագրով հոդվածը լույս տեսավ ամբողջովին աղճատված տեսքով: Ակադեմիկոս Ներսիսյանից բացի հայտնվեց հոդվածի մեկ այլ հեղինակ՝ ռժմ իրավաբանական գիտությունների դոկտոր Կ. Ուշակով: Ներսիսյանի հոդվածից մնաց միայն մի քանի պարբերություն: «Պրավդայում» ցեղասպանության մասին արտահայտվեցին հիմնականում ընդհանուր մտքեր. նշվեցին Վիետնամում ամերիկացիների հանցագործությունները, ՀԱՀ-ում ռասայական դիսկրիմինացիան, Անգոլայում, Մոզամբիկում, Գվինեայում պորտուգալական գաղութատերերի քաղաքականությունն ու... ԽՍՀՄ եղբայրական ազգերի ընտանիքում Հայաստանի հաջողությունները: Կենտրոնական մամուլի շնորհիվ միջոցառումը սաստարելու փորձը վեր ածվեց հերթական խորհրդային խեղաթյուրման:

Բնականաբար, ժողովրդի լայն զանգվածները չէին կարող անտարբեր լինել Հայաստանի իշխանությունների նախաձեռնության նկատմամբ: Հասարակությանը հայտնի դարձավ, որ Մոսկվան պարտադրել է փակել Թուրքիայից տարածքային պահանջների



հարցը: Քաղաքում՝ համալսարաններում ու գործարաններում, տարածվեցին թոռցիկներ, որտեղ կոչ էր արվում մասնակցել ապրիլի 24-ին Լենինի հրապարակում կայանալիք ցույցին:

Երիտասարդներից շատերն ընդհանրապես առաջին անգամ էին իմանում կես դար առաջ տեղի ունեցածի մասին: Սակայն 1915 թվականի դեպքերից բացի նրանք անհանգստած էին նաև Լեոնալդին Ղարաբաղի, Նախիջևանի ու հայերի հայրենադարձության հարցերով: Խնդրումների մեջ գտնվող ժողովուրդն էլ ավելի բարկացավ, երբ իմացավ, որ հնարավորություն չի ունենալու մասնակցել Օպերայի և Բալետի Թատրոնում կայանալիք ժողովին. պարզ էր, որ շենքում այդքան տեղ չկար: Տասնյակ հազարավոր մարդիկ զգացին, որ իրենց մեկուսացրել են ու թույլ չեն տվել որոշել դեպքերի զարգացումը:

Ապրիլի 24-ի առավոտյան Լենինի հրապարակում (ներկայիս Հանրապետության հրապարակը) մի քանի տասնյակ հազար երիտասարդ հավաքվեց, ու սկսվեց իշխանությունների կողմից չթույլատրված ցույցը: Մտավորականության ներկայացուցիչները դիմեցին հավաքվածներին՝ փորձելով համոզել, որ ցույցն: Բայց կոչերն արհամարհվեցին, ելույթ ունեցողներից մի քանիսի վրա էլ տեղաց լուտանքի տարափ:



Լարվածությունը գնալով աճում էր, իրավիճակը կարող էր դառնալ անկառավարելի: Ոստիկանությունը փորձեց ցրել ցույցը, պահանջեց, որ հավաքվածները հեռանան, բայց ապարդյուն. բազմահազարանոց ամբոխը նստեց աֆալտին՝ ի նշան օրինապահ մարմինների հանդեպ անտարբերության: Հետո ցուցարարները, հայրենասիրական կոչեր անելով, երթ սկսեցին քաղաքի փողոցներում: Իշխանությունները, տեսնելով, որ նրանք բռնության կամ անկարգության չեն դիմել, որոշեցին սպասել:

Ուշագրավ է մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ալեքսան Կիրակոսյանի այդ օրվա երկխոսությունը Աշոտ Հովհաննիսյանի հետ.

– Աշոտ Գարեգինովիչ, երիտասարդությունը ոչ մի կերպ չի ուզում կարգի գալ...

– Իսկ զենքեր ունեն:

– Ի՛նչ զենք, ի՛նչ բան:

– Դե, եթե զենք չկա, անհանգստանալու կարիք էլ չկա: Անգե՛ն մարդիկ ոնց որ եկեղեցի լինեն առանց զանգերի... Պետք է ուղղակի նրանց բացատրել, հանգստացնել... Այս նյարդային վիճակի պատճառն այն է, որ դեռ կենդանի է սպանողի սարսափն ապրած սերունդը, ու մենք հիմա բաց վերքի ենք կպել:

Նման բարդ իրավիճակում օպերային թատրոնի շենքում հասարա-

80



կայնության ներկայացուցիչները պետք է երեկոյան պաշտոնական ժողով ունենային՝ նվիրված ծրագրված միջոցառումների հարցին: Ժողովը նոր էր սկսվում, երբ ցուցարարները հասան շենք ու պահանջեցին իրենց ներս թողնել: Ամբոխի մեջից մեկը քար նետեց զբոսաբանի ուղղությամբ ու ջարդեց ապակիները՝ մի քանի հոգու վիրավորելով: Ամբոխի ճնշումն ուժեղանում էր: Ոստիկանությունը պոմպեղով սառը ջուրը բաց թողեց ցուցարարների վրա, բայց էլի ապարդյուն: Ոգևորված երիտասարդները վերջիվերջո կարողացան ներս խուժել՝ բղավելով «Հողերը մե քն են, մե քր»։ Մրահում ներկա գտնվող Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի խաղաղության կոչերը անօգուտ էին. նոր սկսված պաշտոնական ժողովը ձախողվեց:


Հանրապետության ղեկավարությունն անցավ ֆիլիարմոնիայի շենքն, ու այնտեղ տնօրենի կաբինետում, սկսեց քննարկել, թե ինչ անել ստեղծված իրավիճակում: Տարբեր կարծիքներ հնչեցին: Կոմկուսի նախագահության երկու անդամներ առաջարկեցին գործեր մտցնել քաղաք: Հայաստանում տեղակայված 7-րդ բանակի հրամանատար գեներալ-գնդապետ Դավիթ Դրագունսկին դեմ արտահայտվեց ասելով, որ գործեր քաղաք կարելի է մտցնել միայն ԽՍՀՄ պաշտպանության նախարարի հրամանով: Զարոբյանը, եզրափակելով ժողովն, ասաց, որ սեփական ժողովրդի դեմ գործ չի հանի: Բոլորը մտածում էին հիմա մեկ հարցի մասին՝ Մոսկվան ինչպե՞ս կարձագանքի այս ամենին: Ամենաբարդը, իհարկե, Յակով Զարոբյանի վիճակն էր, քանի որ նա էր ամբողջովին ստանձնել միջոցառումներն անցկացնելու պատասխանատվությունը: Բայց շնորհիվ նրա տոկոսության ու հավասարակշռված քայլերի, դեպքերը մնացին հանրապետական իշխանության ղեկավարման տակ, ու Մոսկվան չմիջամտեց, ինչպես սովորաբար անում էր նման դեպքերում:

Հարկ է նշել, որ այդ տարիներին խորհրդային համակարգը շատ ավելի դաժան էր վարվում Կրեմլի տեսանկյունից նույնիսկ ավելի մեղմ դեպքերում: Վառ օրինակ է Նովոչերկասկում ցույցի դուրս եկած աշխատավորների գնդակահարությունը 1962-ի հունիսին: Նովոչերկասկում տեղական իշխանությունները հեռացվեցին ղեկավարությունից, և որոշումներ սկսեցին կայացնել Մոսկվայից ուղարկված քաղբյուրոյի անդամներ Կոզլովն ու Միկոյանը: Այդ դեպքերից մի քանի ամիս անց սկսվեցին դատական պրոցեսներ: Յույցի մասնակիցներին դատեցին որպես հակախորհրդային տարրեր, իսկ իրադարձությունները պաշտոնապես ներկայացրին որպես «հանցագործների ապստամբություն», «ավազակային խմբերի» սանձարձակություն:

Երևանում օպերային թատրոնի դեպքերի կապակցությամբ էլ մի քանի տասնյակ մարդ ձերբակալվեց, բայց բոլորն էլ հեշտ պրծան, քանի որ նրանց գործողությունները որակվել էին որպես անկարգություն: Մոսկվան պահանջում էր դատել հազարավոր մարդկանց, կազմակերպել ցուցարարական դատավարություններ, բայց այդ պահանջները, ի պատիվ Հայաստանի իշխանությունների, արհամարիվեցին: Ապրիլի 25-ի կեսօրին օպերային թատրոնն արդեն մաքրվել էր, նոր ապակիները տեղադրվել, այնպես որ հաջորդ օրը Մոսկվայից ժամանած հատուկ հանձնաժողովը պատահածից որևէ հետք չտեսավ:

Հայաստանի ղեկավարությունն, իհարկե, չէր կարող ապրիլի 24-ին տեղի ունեցածին քաղաքական գնահատական չտալ: Չորս օր հետո Հայաստանի կոմկուսի կենտկոմի նախագահությունը

փաստաթուղթ ընդունեց «Երևան քաղաքում 1965-ի ապրիլի 24-ին տեղի ունեցած անկարգությունների մասին»: 6 էջանոց այս փաստաթուղթն ակնհայտորեն «արտաքին օգտագործման» համար էր: Սկզբում բավականին մեղմ կերպով նկարագրվում էին այդ օրվա իրադարձությունները: Հետո «դասական ձևով» քննադատության էին արժանանում որոշ կուսակցական կազմակերպություններ: Օրինակ, «Երևանի քաղկոմն ու շրջկոմը բավարար խստությամբ չեն վերաբերվում առաջնային կուսակցական կազմակերպություններին, ուսումնական հաստատությունների ռեկտորատներին ու կոմունիստներին, գործարանների ու հաստատությունների ղեկավարներին կոլեկտիվի անդամների մանավանդ երիտասարդության բարոյաքաղաքական վիճակի ու



1967-ին Երևանի Ծիծեռնակաբերդի բարձունքում ցեղասպանության հուշահամալիրի կառուցումը

դաստիարակության հարցերում»:

Փաստաթղթում ինքնաքննադատություն էլ կար: Նշվում էր, որ «Հայաստանի կոմկուսի կենտկոմի նախագահությունը ապրիլի



1967-ի նոյեմբերի 29. Կոմկուսի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը կառում է հուշահամալիրի հավերժական կրակը

24-ի միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցում մի շարք լուրջ բացթողումներ ունեց, որոնք արտահայտվել էին այդ կարևոր քաղաքական աշխատանքների բարդությունների ու յուրահատկությունների թերի հաշվարկի տեսքով:

Որոշման վերջը նման էր սկզբին. ոչ ոք անձնական պատիժ

չկրեց: «Ամենախիստ» պատժին արժանացավ միայն մեկը: «Նշել հասարակական կարգի պահպանության նախարար ընկեր Արգու-մանյանին, որ նա հավուր պատշաճի չի կազմակերպել Օպերայի ու Բալետի Թատրոնի անվտանգությունը, որտեղ տեղի էր ունենում Երևան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողովը»: «Անկարգությունների մասնակիցներն» ու հանրապետության իշխանության մարմիններն ուրիշ խնդիրներ չունեցան, չհաշված, որ մի քանի ամիս հետո Յակով Զարոբյանն այնուամենայնիվ հեռացվեց իր պաշտոնից ու Մոսկվայում նոր աշխատանքի նշանակվեց:

Երկու տարի անց՝ 1967-ի նոյեմբերի 29-ին, Երևանում Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա տեղի ունեցավ գեղասպանության գոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի հանդիսավոր բացումը: Հուշարձանը բացեց Հայաստանի կոմկուսի կենտրոնի հաջորդ առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը: Գաղափարախոսներն ինչպես միշտ, այս անգամ էլ փորձել էին համատեղել անհամատեղելին:

7.9. Երևանի այս ցուցերը տեղի են ունեցել 1965 թվականի ապրիլի 24-ին, Հայոց Ցեղասպանության 50-ամյակի օրը, որի արդյունքում հայոց նորագույն պատմությունը շրջադարձ ապրեց, ազգի մեծագույն ողբերգությունը վերջապես դադարեց լինել արգելված թեմա: Ապրիլի 24-ի առավոտյան Լենինի հրապարակում (ներկայիս՝ Հանրապետության) մի քանի տասնյակ հազար երիտասարդ հավաքվեց (հիմնականում՝ ուսանողություն), ու սկսվեց իշխանությունների կողմից չթույլատրված ցույցը: Մտավորականության ներկայացուցիչները դիմեցին հավաքվածներին փորձելով համոզել, որ ցույցն Միլիցիան էլ փորձեց ցրել ցույցը, բայց՝ ապարդյուն: Չսկսած բան էր. ցուցարարները նստեցին ամֆոլտին՝ ի նշան օրինապահ մարմինների հանդեպ անտարբերության: Եվ իշխանությունները, տեսնելով, որ ցուցարարները բռնության կամ անկարգության չեն դիմում, որոշեցին սպասել:

Նախ ցուցարարները, բազմաթիվ պատասխաններ պարզած, շարժվեցին պանթեոն՝

հուշարձանը բացեցին Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման 47-րդ տարեդարձի օրը: Հետագա տարիներին էլի մի քանի կարևոր քայլ կատարվեց. Կարեն Դեմիճյանը կարողացավ հաստատել ապրիլի 24-ին հավերժ կրակի մոտ պաշտոնական ծաղկեպսակ դնելու ու մեկ րոպե լռության արարողությունը: Բայց այդ ժամանակ՝ 65-ին, տեղի ունեցավ կարևորագույնը. պաշտոնական լռության պատենշը քանդվեց, ու հասարակության լայն շրջաններին հասանելի դարձավ 20-րդ դարի ամենամեծ ողբերգություններից մեկի պատմությունը, սկսվեցին գիտական հետազոտություններ, 1915-ի դեպքերի մասին հրատարակվեցին գրքեր ու փաստաթղթեր, իսկ գեղասպանության փաստը վերջապես իր տեղը գրավեց հայոց պատմության դասարգրքերում: Բացի դրանից, սա այն եզակի դեպքն էր, երբ իշխանությունն ու ժողովուրդը, չնայած տարբեր դիրքերից, պայքարում էին մեկ ընդհանուր գործի համար: Պայքարեցին ու հասան նպատակին:

Նկիկտա ՉԱՐՈՒՅԱՆ, Արմեն ԳՐԻԳՈՐՅԱՆ

3. Լ. Չարոբյանի ախիվից, հայոց գեղասպանության թանգարան-ինստիտուտ, ժողովուրդ
<http://imyerevan.com/hy/society/view/2263>

Ճաղկեպսակ դնելու Կոմիտասի շիրիմին: Հետո վերադարձան Լենինի հրապարակ, իսկ կեսօրին արդեն շուրջ հարյուր հազարի հասնող բազմությունը դուրս եկավ հրապարակից և վանկարկելով «Մեր հողերը, մեր հողերը» շարժվեց Երևանի գլխավոր փողոցներով ու կրկին վերադարձավ Լենինի հրապարակ: Այնուհետև ցուցարարները որոշեցին շարժվել դեպի Օպերա, որտեղ Ցեղասպանությանը նվիրված պաշտոնական նիստ պետք է տեղի ունենար: Օպերայի հրապարակում կրքեր էլ ավելի են բորբոքվում՝ ցուցարարների ճնշումը գնալով ուժեղանում էր: Միլիցիան պնդվեցով սառը ջուրը բաց թողեց ցուցարարների վրա, բայց՝ ապարդյուն: Օպերայի ապակիները կոտրվելուց հետո, ոգևորված երիտասարդները վերջիվերջ կարողացան ներխուժել շենք: Սրահում ներկա գտնվող Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն երիտասարդներին խաղաղելու կոչեր էր անում, իսկ սկսված նիստը փաստորեն ձախողվեց...

ՇՈՒՇԻԻ ՄԱՐՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ 95-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Ադրբեջանի պետական ահաբեկչության և էթնիկական գտումների քաղաքականությունը ենթակա է դատապարտման

Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական գտումների քաղաքականությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջաններում առաջուր միջազգայնորեն չի դատապարտվել, իսկ արյան ու ավերածությունների միջոցով ստեղծված այդ պետությունը պատասխանատվության չի ենթարկվել: Անպատժելիության գգացումը Ադրբեջանի ղեկավարության ոճրագործ ձեռքերին ազատություն է տվել նորից նախաձիռներ նյութելու բնիկ ժողովուրդների դեմ, բարբարոսաբար ոչնչացնելու նրանց ստեղծած քաղաքակրթային արժեքները: Այսպես կոչված՝ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կարճատև գոյությունն անհամեմատելիորեն հարուստ է պատերազմների սանձազերծումով, բռնություններով, ավազակային հարձակումներով ու կոռուպցիաներով, էթնիկական գտումներով և բնիկներին պատկանող պատմաճարտարապետական կոթողների զանգվածային ոչնչացումով: Թուրքական սվինների օգնությամբ ստեղծված այդ խամաճիկային պետությունն ինքնահռչակման օրից՝ 1918 թ. մայիսի 27-ից ի վեր Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջաններում իրականացնում է պետական ահաբեկչության քաղաքականություն, դառնալով գեղասպանության թուրքական քաղաքականության կուրյ գործիքը: Այդ քաղաքականության սահմոնկեցուցիչ դրուսորուսները Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանի պատմության մոայլ

էջերն են կազմում: Դրանցից հատկանշելի են Բաքվի 1918 թ. և Շուշիի 1920 թ. եղեռնագործությունները: Իր պատմական հայրենիքից հայ ազգաբնակչության բռնի տեղահանության քաղաքականության շուրջ 70-ամյա անպատժ գործադրումն այսօր հայրենագրվել է կես միլիոնից ավելի ադրբեջանահայերի, մարդկային ու մշակութային վիթխարի և անդաճալի կորուստների պատճառ դարձել: Բայց այդ ամենին քաղաքական գնահատական չտալը, չդատապարտելը և հանցագործ Ադրբեջանի պատասխանատվության չենթարկելը հանգեցրել են նրան, որ այդ պետությունն այսօր դարձել է տարածաշրջանի ամենաազդեցիկ, սպառնալիցությունների մրցակազմով և նոր պատերազմ սանձազերծելու մոլուցքով տառապող մի անկանխատեսելի ու վտանգավոր կազմավորում, պատերազմի մշտական օջախ, որը սպառնում է հարավ-կովկասյան տարածաշրջանի անվտանգությանը, միջազգային կառույցների տնտեսական, քաղաքական և տարածաշրջանային այլ ծրագրերի իրականացմանը: Այդ սպառնալիքը հատկապես ակնհայտ է հայկական կողմի համար, քանզի տասնամյակների փորձը վերջինիս օգնում է ավելի լավ ճանաչելու խարդախ հարևաններին, կանխատեսելու նրանցից եկող վտանգը: Միաժամանակ, դա մեզ իրավունք է տալիս դիմելու զինված ինքնապաշտպանության, ինչպես արդեն իսկ արել ենք XX դարի 90-ականների սկզբներին Ադրբեջանի նախահարձակմանը դիմադրավելու ժամանակ կամ էլ կանխարգելիչ

հակահարված հասցնելու սահմանագծում հակառակորդի դիպուկահարների ու դիվերսիոն-հետախուզական խմբերի չդադարող սադրանքների ու ոտնձգությունների զսպման նպատակով: Իսկ համաշխարհային ուժային կենտրոնները, կաշկանդված իրենց հակասական շահերից և կուրացած ադրբեջանական քաղաքականության կեղծիքների խաբուսիկ ցուլից, դեռևս հապաղում են բռնել պանթուրքական զանանցանքներով տառապող ոճրագործի ձեռքը, դատապարտել պատերազմի սպառնալիքներով ու հրադարձի ռեժիմը խախտելով, զանազան սադրանքներով իրավիճակը ապակայունացնելու և խաղաղարար գործընթացը տապալելու Ադրբեջանի քաղաքականությունը: Առաջընթացի հասնելու համար հայկական կողմի անելիքները ես շատ եմ, մանավանդ, որ ճշմարտությունը տեղ հասցնելու համար պահանջվում է երկարատև ու անդադար պայքար: Այս տեսակետից կարելի է հատկանշել նաև հասարակության ակտիվության գործոնը: Այդ դաշտում կարելի է առանձնացնել Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական գտումների քաղաքականությունը՝ դատապարտելու և միջազգային հանրությանը դրա անհրաժեշտությունը ներկայացնելու «Կաճառ» գիտական կենտրոնի նախաձեռնությունները: Արդեն իններորդ տարին է, ինչ Շուշիում Կենտրոնի կողմից կազմակերպվում են զանազան միջոցա-

103

ռուսներ՝ նվիրված 1920 թ. մարտյան ողբերգության հերթական տարելիցներին: Յեղասպանություն վերապրած մեր հայրենակիցների սերունդների նպատակը ոչ միայն Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական գտուսների քաղաքականության դատապարտումն է, այլև միջազգային հանրությունից, նախ և առաջ, Ադրբեջան-ԼՂՀ հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված պետություններից նույնն ակնկալելն ու պահանջելն է:

Այսպես կոչված՝ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կողմից ծրագրված ու կազմակերպված Բաքու և Շուշի քաղաքների հայ բնակչության ջարդերը և Արցախի երբեմնի ծաղկուն մայրաքաղաքի հրկիզումը էթնիկական գտման ադրբեջանական քաղաքականության հերթական դրսևորումներն էին, ոչ միայն արմենոցիդի թուրքական քաղաքականության շարունակությունը, այլ նաև ոտնձգություն ամբողջ մարդկության ու ժողովրդավարության դեմ: Կազմակերպված միջոցառումների մասնակիցները դատապարտել են Ադրբեջանի ոճրագործությունները և վստահություն են հայտնել, որ միջազգային հանրության կողմից այդ երկրի պետական ահաբեկչության ու էթնիկական գտումների շարունակվող քաղաքականության դատապարտումը կամ դրան համարժեք քաղաքական, իրավական գնահատական տալը կարող են դառնալ նման հակամարտկային դրսևորումների կանխարգելման ամենաարդյունավետ միջոցը:

Ներկայիս Ադրբեջանը, լինելով Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության իրավահաջորդը, և օգտվելով անպատժելիությանից, որդեգրել է իր նախորդի ոճրագործ քաղաքականությունը: Դրա վկայությունն են հանդիսանում 1987 – 91 թվականների ադրբեջանահայության ջարդերը և բռնատեղահանությունները, ագրեսիայի նախաձեռնումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ, իսկ ներկայում՝ սահմաններ փակելով, հրադադարի ռեժիմը պարբերաբար խախտելով, խաղաղարար գործընթացին խոչընդոտելով պատերազմի ու սպառնալուծությունների մրցավազքի մըշտական հրահրումը:

Թուրքիայի ու Ադրբեջանի ցեղասպանա-

կան քաղաքականությունը վերապրածների սերունդները դատապարտում և անընդունելի են համարում քաղաքական հիմախնդիրները բիրտ ուժի միջոցով լուծելու այդ երկու կազմավորումների քաղաքական գիծը: Թեև մեր ժողովուրդը միշտ էլ կարծել է, թե միայն քաղաքակիրթ ճանապարհով կարելի է լուծել պետությունների միջև վիճահարույց հիմախնդիրները, սակայն պատմությունը սովորեցնում է, որ ծառացած խնդիրները պետք է լուծել ապավինելով սեփական ուժերին, մեր ազգի բազկի ու մտքի հավաքական գործողությանը: Ուստի, Շուշիի հայերի հանդեպ եղեռնագործության 95-րդ և Արևմտյան Հայաստանի ու Թուրքայի տարածքում հայ ազգաբնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցներին մեր ժողովուրդը միջազգային հանրությունից ընդամենն ակնկալում է դատապարտել Ադրբեջանի՝ տասնամյակներ շարունակվող հակահայկական գործողությունները ու բոլոր հնարավոր միջոցներով այդ երկրի ավտորիտար իշխանություններին հետ պահել Հարավային Կովկասի անվտանգությանը մշտապես սպառնալու անմիտ մարտավարությունից: Կամ՝ գոնե համակողմանիորեն աջակցել Ադրբեջանի ագրեսիվությունը զսպելու կարևոր առաքելությունն արդեն ավելի քան երկու տասնամյակ իրականացնող Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և նրա փառապանծ Պաշտպանության բանակին...

Անթույլատրելի է այք փակել նաև ամենաբարձր մակարդակով Նախիջևանում իրականացվող հայկական մշակութային արժեքների ոչնչացման վրա: Երբ ծայրահեղական իսլամիստները Սիրիայում գազանաբար ոչնչացնում են մշակութային համամարդկային արժեքները, առավել քան զգացվում է Նախիջևանում ադրբեջանցիների կողմից հայկական բացառիկ խաչքարերի ջարդողիչորեն անելու նախադեպը և վանդալիզմի այլ գործողությունները դատապարտելու, ինչպես նաև Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Նախիջևանյան թեման շարունակությունն է Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական գտուսների քաղաքականության մերկացման և Արցախի հետ սերտորեն առնչվում է ինչպես Ադրբեջանի հետ հակամարտության համատեքստում, այնպես էլ այն առումով, որ հենց Նախի-

ջևանի ողբերգական ճակատագիրը մղեց Արցախի հայ ազգաբնակչությանը պարզելու պայքարի դրոշմ՝ Ադրբեջանի ոճրագործ քաղաքականությունից ինքնապաշտպանվելու նպատակով: 1920 թ. մարտյան ողբերգությանը գոհ գնացին նաև ժամանակին Ագուլիսից Շուշի տեղափոխված մեր հայրենակիցները, ուստի Արցախի ոստանի ու Նախիջևանի կապը ոչ միայն պատմականորեն է, այլ նաև նույն ոճրագործ քաղաքականությանը ենթարկվելու դժբախտությունն ունենալու տեսանկյունից:

Շուշիի մարտյան ողբերգության 95-րդ տարելիցի առթիվ այս հրապարակումը նպատակ ունի ևս մեկ անգամ բարձրաձայնել Արցախի երբեմնի ոստանում Ադրբեջանի կազմակերպած հայերի կոտորածների մասին, միջազգային հանրության ուշադրությունը սևեռել հիմաահարցի վրա և իրավասու մարմինների ուշադրությանը ներկայացնել սահմանված ընթացակարգով համապատասխան միջազգային ատյաններ դիմելու և Ադրբեջանին իրավական ու քաղաքական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Շուշիում Ադրբեջանի կողմից կազմակերպված ոճրագործությունները հայ ազգաբնակչության նկատմամբ ցեղասպանության տասնամյակներ շարունակվող քաղաքականության հերթական դրսևորումն էին և բացահայտում են Ադրբեջանի ահաբեկչական, ագրեսիվ ու անմարդկային բնույթը: Մեր օրերում, երբ տեղաբնիկների ցեղասպանության միջոցով ձևավորված Ադրբեջանի ղեկավարները բարձր ամբիոններից ճամարտակում են ժողովրդավարական արժեքների մասին, պետականորեն կազմակերպված ու իրագործված ոճրագործությունների համար ցինիկորեն մեղադրում դրանց գոհ գնացած հայերին, ավելի քան հրատապ է, մանավանդ՝ ներկայում լայն թափ ստացած տեղեկատվական պատերազմի պայմաններում, անցյալի ողբերգական իրադարձությունների վերաիմաստավորումը, դրանց համարժեք գնահատական տալը և, դրանով իսկ Ադրբեջանին դիմակազեծ անելը:

Միեր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հայ և համաշխարհային մեծերը հայերի և հայոց լեզվի մասին

Հայերենը հայուն խորհուրդն է:

Վիլյամ ՄԱՐՈՅԱՆ

Բյուզանդիայի մեջ հայ բառը հունանիշ էր ազնվականության և քաջարիության:

ՖԻՆԼԵՅՆ

Ես անչափ զարմանում եմ, երբ հանդիպում եմ անտաղանդ հայի:

Գաբրելին ՆԺԴԵՀ

Ուր որ հայրենի երգեր կլսվի՝ հոն հայրենիքը ողջ է:

Ղևոնդ ԱԼԻՇԱՆ

Խելացի ու աշխատասեր է հայ ժողովուրդը... ուր էլ լինի սիրավիր ընդունելության է արժանանում բոլոր ժողովուրդների կողմից:

Էմանուել ԿԱՆՏ

Հայոց ամենաուժեղ զենքերից մեկն էլ հայ երգն է, էդ երգով նաև պիտի թուրքին յաղթենք:

Աշոտ ՂՈՒԼԵԱՆ (ԲԵԿՈՐ)

Ինչ էլ գրես՝ ստացվում է հայեցի:

Անոն ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Ամեն հայ պիտի զգա, որ առանց իրեն հայրենիքը կը փլուի:

Աշոտ ՂՈՒԼԵԱՆ (ԲԵԿՈՐ)

Որքան հպարտանալու բան կունենային հայերը, եթե իմանային իրենց պատմությունը: Դժբախտաբար չգիտեն:

ՖԻՆԼԵՅՆ

Եւ ուխտեցինք հաւետ ժալ հայ ժողովրդի ճշմարիտ գաւալը...

ԿՈՄԻՏՍՍՍ

Հայերենը ոչ միայն կը հաւասարի եւրոպական լեզուներու, հապա կը գերազանցէ զանոնք: Ոճի տեսակետով հնդեւրոպական ոչ մէկ լեզու չի գերազանցեր հայերենը, նոյնիսկ չի հաւասարիք անոր:

Անտոն ԱՄԵՆ

Հայ երաժշտությունն իր մեջ կանուցանե ոգին իր իսկ ցեղին, որովհետև երաժշտությունը ամենն մաքուր հայելին է ցեղին:

ԿՈՄԻՏՍՍՍ

«Երբ պատմության էջերը թերթում են, ամեն տեղ դիմացդ գալիս է Իսրայել Լազարևիչ Գելֆանդը, բոլորին հայտնի իբրև Ալեքսանդր Պարվուս»



Ցեղասպանության պատմության վերաբերյալ «Իրատես de facto»-ի հարցերին պատասխանում է տարածաշրջանային հարցերով փորձագետ-վերլուծաբան ՍԱՐԳԻՍ ՀԱՅՊՆՆՅԱՆԸ:

–1908-ի թուրքական հեղաշրջումը ի՞նչ դեր ունեցավ հայերի դեմ իրականացված ցեղասպանության մեջ, հայերն ի՞նչ մասնակցություն ունեցան սուլթան Համիդի պաշտոնանկությանը, հայ քաղաքական ուժերն ու հայերը ի՞նչ հույսեր ունեին երիտ-թուրքերից:

– Կատարված իրոք հեղաշրջում էր, բայց գաղափարապես սուլթանն ու երիտթուրքերը իրարից տարբեր չէին: Երիտթուրքերը Եվրոպայում ուսանած երիտասարդներ էին, որ շատ երկար աշխատել են հայերի հետ, և հայերը ևս մասնակցել են սուլթանին պաշտոնանկելու գործընթացներին: Այդ ժամանակահատվածում հայ իրականության մեջ կար երկու քաղաքական կուսակցություն՝ սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, որ հիմնվել էր 1878-ին, Ժնևում, և Հայ հեղափոխական դաշնակցությունը, որ հիմնվել էր 1890-ին, Թիֆլիսում: Բնարկել, կային մշակութային կազմակերպություններ, մարզական, կրթական, եկեղեցասիրաց և այլն, բայց քաղաքական ուժերը երկուսն էին: Ստեփանոս Մալախ-Գյուլյանը, որ հայոց քաղաքական մտքի ռահվիրա կարող է կոչվել, սքանչելի գիրք ունի՝ «Պատասխանատուները», որ այս հարցին ուղիղ պատասխան է տալիս: Բնչքան գիտեմ՝ թուրքերն այժմ նախաձեռնում են նրա գիրքը թարգմանել թուրքերեն: Ո՞վ է պատասխանատու ցեղասպանության համար: Նրա գրքում շատ ուղղակի մեղադրանք կա ՀՅԴ-ի դեկավարությանը: Մալախ-Գյուլյանը պարզ ասում է՝ չի կարելի խաբվել, թուրքերի զարգացած ավելի վտանգավոր է, քան Աբդուլ Համիդը: Սուլթանի հետ կարելի է ինչ-որ կերպ լեզու գտնել, այս մարդիկ մի խնդիր ունեն՝ ուզում են շատ կազմակերպված, զուտ թուրքական ազգային պետական միավոր ստեղծել, իրենք ինտերնացիոնալիստ չեն՝ հայ, թուրք, քուրդ, ասորի, բուլղար, հույն, սերբ չեն ճանաչում ու կայսրության հատկապես քրիստոնյա հատվածն ուզում են վերացնել ազգովին: Դաշնակցականներին նա ասում էր՝ յուր կուտը կերել եք, մի թե ազգիս պատմությունը չգիտեք, ինչպե՞ս կարելի է կոկկասահայի աչքերով նայել Օսմանյան կայսրության հպատակ արևմտահայության հարցերին: Նա զգուշության կոչ էր անում՝ կանխատեսելով, որ այդ դիրքորոշումը կարող է արհեստիքի հասցնել, որի պատասխանատուն կլինեն: Նրան առարկում էին, որ հոռետես է, որ ի վերջո գտնվել է թուրքի այն տեսակը, որ հայերին եղբայր է տեսնում, արդարություն է ուզում, ասում է՝ բարենորոգումներ պիտի լինեն... Երիտթուրքերը հաճախ էին հանդիպում դաշնակցականների հետ և ջանում էին, որ իրենց հանդիպումներին ներկա չլինեն հնչակյանները, որովհետև նրանց կարծր դիրքորոշումը չէր փոխվում ու զաղուտորեն ծրագրվածին խանգարում էր: Հեղաշրջումից հետո տեղի ունեցած մեծ ցույցին դրոշները ձեռքներին մասնակցում են նաև հայերը՝ «Եղբայրություն,

ազատություն, արդարություն» կարգախոսով: Նրանց լուսանկարները մամուլում կան: Ելույթներ են ունենում, որ այսուհետ թուրքը հայի հետ եղբայր է դառնում: Հնչակյան կուսակցությունը կրկին դատապարտում է, կրկին հիշեցնում է, որ թուրքերն ուզում են իշխանությունն ամբողջությամբ իրենց ձեռքը վերցնել: Երիտթուրքերին սաստիկ հակառակ ընդդիմադիր կուսակցություն կար՝ «Ազատություն և համաձայնություն» (Հուրիյեթ վե Իթիլաֆ) անունով այս կուսակցությունը՝ զգուշացնում էր հայերին, որ չեն հասկանում ինչ խաղի մեջ են հայտնվել, որ իթթիհասականները ի վերջո հայերին վերացնելու են: Նրանք առաջարկում էին իրենց կուսակցական ցուցակներով ընտրություններին մասնակցել երիտթուրքերի դեմ: Հնչակյանները Իթիլաֆի հետ երկխոսություն են սկսում: Հայկական քաղաքական երկու ուժերը բաժանվում են՝ քաղաքական շրջահայացության պակասը թույլ չի տալիս ՀՅԴ-ին հասկանալ, որ քաղաքական յուրաքանչյուր հարաբերություն փոխադարձ առաջարկների ընդունում է, ոչ թե միակողմանի ծառայություն: Դաշնակցությանը գրպանեցին երիտթուրքերը: Նրանք խաբվեցին, որովհետև ՀՅԴ-ի որոշում կայացնող պարագլուխները կովկասահայեր էին, նրանց մեջ արևմտահայ ազդեցիկ դեմքեր գրեթե չկային, ու նրանք չէին ճանաչում թուրքական իրականությունը: Արևելահայաստանում նստած որոշումներ էին կայացնում և ամեն անգամ հետևանքը արևմտահայության գլխին էր ջարդվում: Նրանք քաղաքականապես հասուն չէին ընկալելու իրավիճակի ամբողջ բարդությունը: Նույնը նաև հնչակները: Արևմտահայաստանի, Գիլիկիայի, Պոսի հնչակները այս ամենը շատ լավ հասկանալով անընդհատ զգուշացնում էին Եվրոպայում, Ամերիկայում եղած իրենց կուսակցիկներին, թե ինչ վտանգներ կան, զգուշացնում էին, որ օվկիանոսի մյուս ափից պիտի չաշխատեն: Տարբեր ժողովների արձանագրություններ կան, որ երբ դրսից հակակայսերական գործողություններ են ցանկացել կատարել, տեղի կառույցները հակառակվել են, ասել են՝ լավ, կանենք, մի երեք հոգու կապանենք, բայց կգան՝ երեք ցուղ կկոտորեն, մեք ի վիճակի ենք նրանց պաշտպանել: Նրանց մեջ եղել են լրջում մարդիկ, բայց եղել են և շատ անհեթեթ քայլեր: Եթե Մասնո ապստամբությունները նայեք, ամեն անգամ հայ բնակչությանը հարվածի տակ են դրել: Մեկ-երկու-երեք անգամ ջարդվելուց հետո ինչպե՞ս կարելի է չորրորդ անգամ ջարդվել: Ռուբեն Տեր-Մինասյանը յոթ հատորով «Հեղափոխականի մը հուշերը» անունով գիրք է գրել, որ համարյա ծայրեծայր խաբեություն է, կեղծիք, բարեխախտաբար պատմաբան Լեոն նրա այդ անհեթեթությունը բացահայտում է չորս ֆիդայի են ուղարկում, ապստամբություն են անում, հետևանքը հայերի կոտորածն է, ու ոչ մի պատասխանատու: Մեղադրում են ոչ զինված հայությանը, որ բնակչության 99,9 տոկոսն է, որ զինված չէ, ֆիդայական շարժման մասնակից չէ և սոսկ բարեփոխումների պահանջատեր է:

– Ովքե՞ր էին երիտթուրքերը և ինչպե՞ս հայտնվեցին քաղաքական ասպարեզում:

– Երբ ասում են երիտթուրքեր, չեն փորձում հասկանալ՝ սուլթանական Թուրքիայում նրանք որտեղից հայտնվեցին, ինչպե՞ս, ինչո՞ւ: Միոնիզմի մարգարե, իսկական անունով Բենիամին Ձեն (Թեոդոր) Հերցլը ավստրա-հունգարացի հրեա, առաջին անգամ 1901թ. մայիսին հանդիպում է սուլթան Աբդուլ Համիդի հետ՝ նրան առաջարկելով թույլ տալ Եվրոպայում ապրող հրեաներին ներգաղթել Պաղեստին, որ օսմանյան տիրապետության տակ էր, ու այդտեղ համախումբ ապրել, փոխարենը խոստանալով Օսմանյան կայսրության առողջացման ծրագիր: Բսկ Օսմանյան կայսրությունն այդ ժամանակ կքում էր պարտքերի տակ, և Եվրոպայում Օսմանյան կայսրությունը կոչում էին «Հիվանդ մարդ»: Հերցլը հիշեցնում է բանկային համակարգում, լրատվական աշխարհում հրեաների դիրքերը և խոստանում փակել թուրքերի բոլոր պարտքերը: Ձեր երկիրն ամբողջությամբ հայերի ու հույների ձեռքին է հասկացնում է Հերցլը, պետական, տնտեսական, առևտրական, ռազմական բոլոր

123

համակարգերում թուրքեր գրեթե չկան, մենք ձեզ կօգնենք 1878-ից լուրջ գլխացավ դարձած Հայկական հարցից վերջնականապես ազատվել: Սուլթան Աբդուլ Մամիդը մերժում է: Ոչ այն պատճառով, որ մայրը՝ Վերժինեն, հայ էր: Սուլթանը գիտեր, որ ինքը նստած է այդ ճյուղի վրա՝ հայն ու հույնը չլինեն, կայսրությունը չի լինի: 1894-1896 թթ. համալիյան ջարդերի, որ իրականում ցեղասպանություն էին, հեղինակը լինելով հանդերձ սուլթանը 1902 թ. հուլիսին կրկին մերժում է նույնպիսի առաջարկով իրեն դիմած Հերցլին: «Ես թեզ ցույց կտամ՝ աշխարհը քանի անկյուն ունի»՝ հետևում է Հերցլի պատասխանը: Որոշում է կայացվում Օսմանյան կայսրությունում վաղուց ստեղծված ընդդիմադիր ուժ՝ «Միություն և առաջադիմություն» (Բթթիհադ վե թերաքքի) կուսակցությունը տեղից շարժելով սկսել սուլթանին տապալելու գործընթացը: 1889 թ. Սալոնիկում ստեղծված երիտթուրքերի կազմակերպության հիմնադիրներից շատերը ծագումով հրեաներ էին, որոնք տնօրինում էին քաղաքի տնտեսական ու քաղաքական իրավիճակը: Օսմանյան կայսրությունում հիմնվել և աշխատում է իբր թուրքական մի կազմակերպություն, ու հիմնադիրներից շատերը թուրք չեն: Ինչպե՞ս: «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գրքում Ջոն Կիրակոսյանը խորհրդային տարիներին՝ 1982-ին պատասխանում է այդ հարցին, բնականաբար՝ իր ժամանակ նա չէր կարող առկա բոլոր աղբյուրներին ծանոթ լինել: Նրանք ոչ միայն հիմնել են կազմակերպությունը, այլև կոնկրետ հրաման են իջեցնում հայտնի հրեաներին՝ ընդունել իսլամ, անուն-ազգանունը փոխել և համաթուրքական պանթուրանական կազմակերպության զարգացման համար աշխատել: Պանթուրքիզմի գաղափարախոսության հիմնադիրները թուրքերը չեն: Հրեաներն ու քրդերն են: Հնարավոր է: Թուրան երկրի երազանքը հրեայինը կամ քրդի՝ նր լինի: 1883 թ. ծնված, հրեա հոգևորականի զավակ, իսկական անունով Մոհի Բոհեն, բալկանյան պատերազմի տարիներին փոփոխված թուրքական անունով Մուսիա Թեքինալին ու 1876 թ. Տիգրանակերտում ծնված քուրդ Ջիյա Գյոքալվիր այդ անմարդկային գաղափարախոսության առաջնորդներն են հանդիսացել: Երբ երիտթուրքերը տարիներ առաջ կայացնում են հայերին վերացնելու գաղտնի որոշումը, կազմակերպության ներսում վիճաբանությունների ժամանակ ծագումով թուրք անդամները փորձում են հակառակվել ինչպե՞ս, ոչ ոք վերացնել ամբողջ ժողովրդին իր բնօրրանում: Երբ 1948-ին Իսրայել պետությունը իրեն անկախ հռչակեց, այդ բոլոր հողատարածքները հրեաների կողք կողքի գնած հողերն էին, ինչպես դուք տնամերձ զե գնում մի տեղ 500 քառակուսի մետր, մի տեղ 400, մի տեղ 200, մի տեղ 700: Եթե արանքում օտար մեկը կա, ստիպում եք, որ իր հողը վաճառի, գնա: Օսմանյան կայսրության ժամանակահատվածում այդ բոլոր աշխատանքները սուսուփուս կատարվել են, բայց կան գեկուցագրերը «Այլանս իսրայելիտ» կազմակերպության: Նրանց քաղաքական միջնորդն ու ֆինանսական հովանավորը Ալեքսանդր Պարվուսն էր: Նա է Լենինին Շվեյցարիայից Պետերբուրգ բերել՝ հեղափոխություն անելու, և նա է Արևմտյան Հայաստանի կորստի ամրագրման աշխատանքների երկրորդ հատվածի հեղինակը: Ցեղասպանության ան-

ընդհատության մեջ բոլշևիկյան Ռուսաստանի դերակատարումը, Լենին-Աթաթուրք հարաբերությունները, ամեն ինչ պտտվում են Պարվուսի շուրջ: Նա կար 1890-ին Աբդուլ Համիդի ժամանակ, կար երիտթուրքերի ժամանակ ու ամբողջությամբ ֆինանսավորում էր նրանց, հովանավորում կոնկրետ նպատակներով ուղարկված հրեաներին, եկել ու ապրում էր Կոստանդնուպոլսում՝ տեղում աշխատելով դեսպանությունների հետ: Պատրաստ էր փակել Օսմանյան կայսրության բոլոր պարտքերը, պահում, զարգացնում էր երիտթուրքական կազմակերպությունը, իշխանության բերում և ամրացնում նրանց: Նույն ժամանակահատվածում ամեն ինչ անում է, որ թուրքերը լեզու գտնեն ռուսների հետ: Բայց ոչ Ռուսմոսկովսկի ցարական Ռուսաստանի հետ, այլ նորերի, որոնց իշխանության է բերում: Ովքե՞ր էին բոլշևիկները: Լենինը, Տրոցկին, Կամենևը, Զինովև, Սվերդլովը: Մեծմասամբ ծագումով հրեաներ: Բելառուս չէին, լատիշ չէին, ֆինն չէին, իսկ չէին, վրացի չէին, հրեա էին: Զարգացած, խելոք ուրիշ մարդ չկա, որ ռուս սոցիալ-դեմոկրատների հիմնադիրները հրեաներն էին: Երբ պատմության էջերը թերթում ես, ամեն տեղ դիմացդ գալիս է Պարվուսը: Դա համակարգված, ծրագրված աշխատանք էր: Եվ ցեղասպանություն հայերի հանդեպ, ոչ միայն Արևմտահայաստանում, այլև Կիլիկիայում, Թրակիայում, Բուլթանիայում, Գամիքում: Մտածե՛լ եք ի՞նչ եղավ Ալեքսանդր Մանթաշյանը, Բաքվի նավթարդյունաբերությունը հայերի ձեռքում էր, նավթարդյունահանող գրեթե բոլոր ընկերությունները հայկական էին: Որտեղի՞ց ու ինչպե՞ս հայտնվեցին Ռոսշիլդները: Ալեքսանդր Մանթաշյանը պրպտող, աշխատատեղ, խելացի, հարուստ, ոչ վերացավ: Ի՞նչ եղավ հայության առևտրատնտեսական հսկայական համակարգը: Օսմանյան կայսրության տնտեսության համարյա 80 տոկոսը հայության ձեռքում էր, կապված էր Մանչեստրի, Նյու Յորքի, Փարիզի, Վենետիկի հետ: Ու միանգամից կտրվե՛ց: Իսկ հայությունն ի՞նչ եղավ: Ծրագրի համաձայն բնաջնջվում էր ոչ միայն հայությունը ֆիզիկապես, այլև քանդվում էր առևտրատնտեսական կառույցը ծայրից ծայր: Ինչու՞ ա այս ամենը չի բացվում, չի ներկայացվում, ի՞նչ են անում դրամաշնորհով աշխատող կազմակերպությունները: Այս բոլոր իրողություններով ինստիտուտներ պիտի աշխատեին, ոչ թե մեկ, այլ այլընտրանքային տեսակետներ ներկայացնեին ու մեր սեղանին արդեն դրած լինեց իրենց աշխատանքները: Չկա: Չենք ճանաչում անցյալը: Ինչու՞: Ովքեր էին սպիտակ թուրքերը: Գիտե՛ք:

**Յրապարական պատրաստեց
Սևահիտ ԱՐԱՄՅԱՆԸ**

¹ Ստեղծվել է 1911 թ.՝ 1908-ի սահմանադրության հռչակումից հետո առաջացած ընդդիմադիր մանր կուսակցությունների և խմբավորումների հիմքի վրա: Այդ կուսակցությանը միացել են ազգային իրողամասնությունների համարյա բոլոր քաղաքական կազմակերպությունները: Նրանց աջակցությունը ստանալու և նրանց հետ դաշինքը պահպանելու նպատակով «Ազատություն և համաձայնություն» կուսակցությունն իր ծրագրում ներառել է ազգային մարզերի ինքնավարության և Օսմանյան կայսրության վարչական ապակենտրոնացման սկզբունքը՝ տարածքային ամբողջականության պահպանմամբ:

² Պատմության առաջ չմեղանչելու համար պետք է նշել, որ հենց իթիլաֆականների ստեղծած կառավարությունն էր Կ. Պոլսում կազմակերպել երիտթուրքերի դատավարությունը (1919 – 20 թթ.):

Հայ և համաշխարհային մեծերը հայերի և հայոց լեզվի մասին

Զմայլված եմ հայ տառերի գեղեցկությամբ: Իրականում հայկական տառերը գեղարվեստական գրաֆիկա են և դրանց գրաֆիկական պատկերը ցնցող է: Ի՞նչ հանձարեղ ձեռքեր են ստեղծել դրանք:

Ստեփան ՏՈՒՆԵԻԴՉ

Աստուծոյ հետ խօսելու միակ լեզուն հայերէնն է: Հայերէնը հարուստ լեզու է, լիովին պարունակում է մարդկային ձայների բոլոր հնչյունները:

Ձորք ԲԱՅԸՆ

Երբ հայերն ինչ-որ բանով են զբաղվում, ապա անապայման արդյունքում արվեստ է ստեղծվում:

Ֆյոդոր ՇԱԼՅԱ ՊԻՆ

Գիտցի՛ր, որ քանի ապրում եմ, իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է և կմնա, հայոց լեզվին տիրապետելը:

Վիկտոր ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Հայ ժողովուրդը տարբերվում է կենսասիրությամբ, տոկունությամբ, սեփական ճշմարտության հանդեպ ունեցած վստահությամբ, կամքով: Հենց այս որակների շնորհիվ այն մշտապես հաղ-

թանակված է դուրս գալիս ցանկացած փորձություններից:

Էմիլ ՎԵՐՆԱՐԸ

Հանգիստ սրտով պիտի մեռնիմ, երիտասարդ հայ, եթե քո սերնդի օրով «հայրեն» բառը մեր ժողովրդի բարեկամների և թշնամիների կողմից գործածվի «քաջորեն» բառի իմաստով:

Գաբրիել ՆՏԴԵՉ

Իմ քույրեր, ձեր վրա եմ ես հույս դնում: Հայ մայրեր, իմ հույսս ձեր վրա է, դուք պետք է ձեր զավակներին կրթեք, դաստիարակեք և նրանց ներշնչեք հերոսական ոգի, սեր դեպի իրան հայ եղբայրները...

Ձորավար ԱՆԴՄԱՆԿ

Շրջահայաց եղեք, սիրեցեք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը և միմյանց:

Ղեկնղ ԱԼԻՇԱՆ

Нет никого храбрее моих маршаллов, потому что в них течет армянская кровь.

Наполеон БОНАПАРТ.

ՄԵՆՔ ՈՒԺԵՂ ԵՆՔ, ԵՐԲ ՄԻԱՍԻՆ ԵՆՔ

2015 թվականին Հայաստանը, աշխարհասփյուռ հայությունը միջազգային հանրության հետ հիշում և դատապարտում են մեկ դար առաջ Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանությունը, ոգեկոչում 1.5 միլիոն անմեղ զոհերի հիշատակը: Յուրաքանչյուր հայ, աշխարհի որ անկյունում էլ գտնվի, զգում է Մեն եղենի հետևանքները թե՛ բարոյափոխության, թե՛ մշակութային, թե՛ լեզվական և թե՛ քաղաքական առումներով:

Մ.թ. ապրիլի 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Նորին Սրբություն Հռոմի Պապ Ֆրանցիսկոս Առաջինի կողմից պատարագ մատուցվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հայրերից Սբ Գրիգոր Նարեկացին Կաթողիկ եկեղեցու կողմից հռչակվեց Տիեզերական եկեղեցու վարդապետ, ինչը համաշխարհային նշանակություն ու հնչեղություն ունեցող պատմական մեծ իրադարձություն է հայերիս համար:

Այս օրերին ողջ աշխարհում կազմակերպվող ոգեկոչման տար-




բեր միջոցառումները հավաստում են հայ ժողովրդի միասնությունը, նպաստում համայնքների համախմբմանը, Սփյուռքում հայապահպանությանը, հայի ինքնության հաստատմանը, և ուրախալի է, որ ավելանում է Ցեղասպանության ճանաչման աշխարհագրությունը, դատապարտման և ժխտման համար պատասխանատվություն սահմանող երկրների, կառույցների թիվը:

Ապրիլի 24-ը նշանավոր օր էր նաև Կալուգայի մարզի Օբնինսկ քաղաքի հայության համար. քանի որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ նրանք համախմբվել էին հայկական խաչքարի բացման և օծման արարողության առիթով: Ողջունելի է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 100-րդ տարելիցին նվիրված խաչքար տեղադրելու, Յավի, հիշողության և պահանջատիրության միջոցառումներ կազմակերպելու նրանց



նախաձեռնությունը:

Օբնինսկում խաչքար տեղադրելու կամ եկեղեցի կառուցելու մասին Կարեն Ղուկասյանի և Հովիկ Հովակիմյանի ընտանիքները երազում էին դեռևս 2015թ. ապրիլի 24-ից մի քանի տարի առաջ: Բայց, ինչպես ասում են, Աստծո որոշումները անկանխատեսելի են: Տարիներ առաջ մի առիթով հանդիպել էին Բորիս և Գլեր ռուս ուղղափառ եկեղեցու Տեր հայր Ալեքսեյի հետ: Զրույցի ընթացքում շոշափվել էր խաչքար տեղադրելու հարցը: Նրանք ասել էին իրենց երազանքի Օբնինսկ քաղաքում



խաչքար ունենալու մասին: Եվ անչափ շատ էին զարմացել, երբ նրանց լսելուց հետո Հայր Ալեքսեյը ասել էր, որ կարող է տեղ հատկացնել եկեղեցու տարածքում: Կարեն Ղուկասյանը և Հովիկ Հովակիմյանը հավատացին, որ դա կարող է իրականություն



140

դառնալ: Ոգևորությանը չափ չկար: Եվ որոշեցին, որ այդ ազգանվեր գործը պիտի անեն: Բայց ժամանակն անցնում էր, իսկ ցանկությունը դեռ հեռու էր իրականություն դառնալուց՝ թե ժամանակի աղության, թե նյութական խնդրի, թե շրջապատի կողմից չխրախուսվելու պատճառներով: 2015 թ. փետրվար ամսին Գարեն Ղուկասյանի մայրը հիվանդ էր, բժիշկն ու դեղորայքը չէին օգնում նրան, ի դեպ Գարենի մայրը շատ հավատացյալ և աստվածավախ կին է: Մի օր նա խնդրում է ընտանիքի անդամներին, որ Հայր Ալեքսեյին հրավիրեն տնօրինների արարողություն կատարելու: Մինչ այդ նրանց հանգիստ չէր տալիս այն միտքը, որ մոտենում է Մեն Եղեռնի 100 ամյակը, բայց խաչքարն այդպես էլ չտեղադրեցին: Այդ օրը Հովհիկի կինը նորից այդ հարցը բարձրացրեց Հայր Ալեքսեյի մոտ: Զրույցին մասնակցում էին եղբայրը Գարեն Ղուկասյանը և ամուսինը Հովհիկ Հովակիմյանը: Եվ այդ օրը վերջնական որոշում ընդունվեց նրանց կողմից՝ պետք է հասցնեն ապրիլի 24-ին խաչքարի բացումն անել: Արագ տեմպերով անցան գործի:

Եվ եկավ բաղձալի օրը: Դեռ մեկ շաբաթ առաջ՝ ապրիլի 17-ին տղաների քրտնաջան աշխատանքի շնորհիվ Աստծո կամոք խաչքարը տեղադրվեց եկեղեցու բակում:

Օբնիսկում հայկական խաչքարի տեղադրումը լրացրեց աշխարհի տարբեր անկյուններում գտնվող Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշակոթողների շարքը, որը, որպես խոստով կա՝ նպաստում է 20-րդ դարասկզբին մարդկության դեմ իրա-

գործված առաջին աննախադեպ ոճրագործության ճանաչմանը, որ մեկուկես միլիոն անմեղ հայի կյանք խլեց: Մա նպաստում է նաև հայ-ռուսական հարաբերությունների ու դարավոր բարեկամության առավել խորացմանը:

Մենք հավերժ երախտապարտ ենք բոլոր այն պետություններին ու ժողովուրդներին, նաև բարի կամքի տեր անհատներին, որոնք այդ արհավիրքի տարիներին և դրանից հետո ապաստան են տվել մեր ժողովրդի հազարավոր զավակների՝ նրանց հնարավորություն տալով վերապրելու, սեփական ինքնությունը պահպանելու, տվյալ երկրի հասարակության լիարժեք անդամ դառնալու համար:

Հայաստանի և Սփյուռքի համատեղ ջանքերի շնորհիվ եկող տարիներին առավել կահագնանա Ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացը, կակտիվանա ժխտողականության, ուրացման դեմ պայքարը, կստեղծվի համաշխարհային մթնոլորտ՝ բացառելու նոր ցեղասպանությունները: Այդ գործընթացում՝ հանուն մարդկության խաղաղ կեցության, հայ ժողովուրդը առաջամարտիկ է:

Համայն հայության իղձերի իրականացման գործում օբնիսկիների հայանպաստ այս նախաձեռնությունը հարգանքի է արժանի:

Մենք ուժեղ ենք, երբ միասին ենք:

Վահրամ ԲԵԿՉՅԱՆ

«ՕՏԱՐ, ԱՄԱՅԻ՝ ՃԱՄՓԵՔԻ ՎՐԱ...»

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

«1915 – 2015» շարքից

Օտա՛ր, ամայի ճամփեքի վրա՝
Ամենուր փռած կապույտ անմոռուկ,
Իմ գենը դարձյալ ես պահում եմ հայ,
Դու ամեն տեղ էլ նույն գեհենն ես, թո՛ւ Կրթ...
Ու թե՛ քո որջույն, թե՛ որջիցդ դուրս,
Օտա՛ր, ամայի ճամփեքի վրա,
Դու ազգությունն ես, որը չունի գույն,
Իսկ թե՛ ունի էլ, երանգն է՝ արյան:
Օտա՛ր, ամայի ճամփեքի վրա
Ես հա՛ր մի վրեժ ունեմ եռագույն,
Նրա կապույտի երկինքը ճեղքած
Երանս պիտի դեռ հասցնեմ Տուն:

Քո գինին արյունն էր կարմիր...
– Սովա ծ եմ, մարեմ, քիչ մը հաց...

Քո հյացը թո՛ղ դառնա լաց,
Էդ ո՛նց քո կոկորդով գնաց...

Էն ձեռքը մեկնած ժառանգ,
Որ մի դար մարե է կանչում,
Իմ ձայնով երկու Սևակ
Սև հոգուդ խղճի են կոչում:

Իմ ձայնով Վարուժան, Զոհրապ
Դարերում դեռ երգեն պիտի,
Էրգիրս ծաղկումը իր նոր
Մասիսից դեռ պիտի դիտի:

Տես՝ «Կրունկ, ուստի՞ կուգաս...»
Երգս ո՛նց աշխարհի գիտի,
Երբ քոնը թաղերում էժան
Հացկատակ կլկլոց ժառանգ...

Լիլիա ՄԱՇԻՆՅԱՆ

– Բայց սպառվում է մինչև իսկ
սրբի համբերությունը,
ինչպես հոտում է մինչև իսկ
ջուրը՝ արգելակումով:
Մենք հաջորդներն ենք
Մուրթ Նահատակաց,
սակայն բնավ էլ սուրբ չենք ինքներս,
մա՛րդ ենք հասարակ
Էմ... հավատում ենք,
որ պիտի դառնա
մեր յուրաքանչյուր խլյակը՝
այլակ միատեղումի,
եւ յուրաքանչյուր փշուրը՝
պաշար մոտալուտ վաղվա,
ժառանգը՝ աճողը,
մատուցը՝ մտուրք,
սփյուռքը՝ ապառք,
նշխարը՝ աշխարհ...

Պարույր ՍԵՒԱԿ,

«Եռաձայն պատարագ»,


փետրվար, 1965 թ.:

«Մասունցի Դավիթ» ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ

«Մասունցի Դավիթ» շարասյունը ստեղծվեց 1944 թվականին, սփյուռքի հայերի և Էջմիածնի վանքի տրամադրած նյութական միջոցներով: 1943-ի հունվարին Սմենայն Հայոց կաթողիկոսությունը «Մասունցի Դավիթ»-ի ֆոնդին հանձնեց 800 հազար ռուբլի արժույթամբ թանկարժեք «Մասունցի Դավիթ» շարասյունը նվերներ և զարդեր, 1000 անգլիական ֆունտ ստեռլինգ և 50 հազար ռուբլի սովետական դրամ: Գևորգ Զ Զորեքչյանը հաստուկ կոնդակով դիմեց սփյուռքի հայերին կոչ անելով մասնակցել տանկային շարասյուն ստեղծելու նպատակով կազմակերպված հանգանակությանը (1943): 1943 թվականի մարտի 7-ին Նյու Յորքում տեղի ունեցավ



հայկական գաղութի ներկայացուցիչների միտինգ, որտեղ ընտրվեց «Մասունցի Դավիթ»-ի ֆոնդի համար միջոցներ հանգանակող կոմիտե: «Մասունցի Դավիթ»-ի ստեղծմանը մասնակցեցին նաև Հարավային Ամերիկայի, Իրանի, Կիպրոսի, Հորդանանի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Եթովպիայի, Եգիպտոսի և այլ երկրների հայերը: Հավաքված միջոցներով պատվիրվեց 21 տանկ (S-34): 1944 թվականի փետրվարին 119-րդ առանձին տանկային գնդին հանձնված այդ տանկերի աշտարակներին հայերեն գլխատառերով գրվեց Մասունցի Դավիթ: Ուկրաինական ռազմաճակատում մարտ-մայիս ամիսներին, գնդի կազմում, տանկային շարասյունը հարձակողական գործողություններ ծավալեց Պերվոմայսկի, այնուհետև Ցասսիի (Ռումինիա) ուղղությամբ: 1944 թվականի մայիսին տանկային գունդը համալրվեց «Մասունցի Դավիթ» երկրորդ տանկային շա-



160

բայություն (22 տանկ): Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի 6-րդ գվարդիական բանակի կազմում հունիս-օգոստոսին շարաայունը մասնակցեց Վիտեբսկի ու Պոլոցկի ագատագրմանը, Շյաուլայի շրջանում հակառակորդի խոր էշելոնացված պաշտպանության ճեղքմանը, 5-րդ գվարդիական տանկային բանակի ստորաբա-

ժանուժների հարձակողական գործողություններին: Այնուհետև շարաայունը գնդի հետ տեղափոխվեց Պանենժիսի շրջանը և մինչև օգոստոս կռվեց ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Հ. Բաղդամյանի ենթակայության ներքո: 1945 թվականին գունդը, որի կազմում էր «Մասունցի Դավիթ» շարաայունը, արժանացավ գվարդիականի կոչման և ստացավ 135-րդ կարմրադրոշ առանձին տանկային գունդ անվանումը:

ՀԱՅԵՐԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ

Մեծ է հայ ժողովրդի ավանդը ֆաշիստական Գերմանիայի դեմ պայքարում: «Հայ մարտիկները զինվորից մինչև մարշալ, իրենց ծածկել են քաջարի ռազմիկների անթառամ փառքով», – ասել է մարշալ Ժուկովը:

Շուրջ 650 հազար հայ մասնակցեց պատերազմին Խորհրդային Միությունից և ամբողջ աշխարհից, նրանցից մոտ 350 հազարը զոհվեց մարտի դաշտում: Պատմության մեջ երբևէ հայ ժողովուրդը միաժամանակ ռազմի դաշտ չի հանել այդքան զինվորներ և որևէ պատերազմի ժամանակ այդքան մարդկային կորուստներ չի տվել:

Զնայած Հայաստանում ռազմական գործողություններ, բարեբախտաբար տեղի չունեցան, սակայն մեծ էր վտանգը հայրենիքի այս մի պատառն էլ ընդմիշտ կորցնելու: Ֆաշիստական Գերմանիայի հետ պատերազմի սկզբում բարեկամության դաշն կնքած Թուրքիան 26 դիվիզիա էր կենտրոնացրել սահմանի վրա և ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար սպասում էր Ստալինգրադի ճակատամարտի ելքին: Սրանով է, թերևս, նաև բացատրվում հայորդիների ցուցաբերած անօրինակ սխրանքը:

Հայերը ԽՍՀՄ ժողովուրդների շարքում չորրորդն էին ռազմածովային նավատորմի գեներալների, ռազմաօդային ուժերի, իրենամային զորքերի սպաների կազմում և վեցերորդը՝ ԽՍՀՄ հեռոսների ցանկում: Իսկ եթե հայ ժողովրդի զոհերի և հեռոսների թիվը համեմատենք այդ տարիների ՀԽՍՀ բնակչության թվի հետ, հայերն առաջատարն էին...

Հայկական «Թամանյան» դիվիզիան Գերմանիա հասած և Բեռլինի ճակատամարտին մասնակցած միակ ազգային դիվիզիան էր:

Հայազգի 1 զորահրամանատար զբաղեցնում էր ռազմաճակատի հրամանատարի պաշտոնը (Հովհաննես Բաղդամյան), 3-ը՝ բանակի, 6-ը՝ կորպուսի, 28-ը՝ դիվիզիայի, 100-ը՝ բրիգադի ու զնդի հրամանատարներ էին: 80 հազար հայ պարզակառուցված մեդալներով ու շքանշաններով:



Բեռլին, 1945 թ. Հայ զինվորներ պարում են «Բեռլ» ազգային պարը Ռեյխսպագի պարերի մոտ

Ցուցաբերած խիզախության ու արիության համար բարձրագույն պարգևի՝ Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ հայ ժողովրդի 106 զավակ:

ԱՌԱՋԻՆ ՎԱԳՈՆԱՎԱՐԻ ՄԻԱԿ ՆԱՄԱԿԸ

1921 թվականին հեռավոր Կաղզվան քաղաքից երևան գաղթեց դեռևս 20 տարին չբոլորած Նազար Մեսրոպի Ղազարյանը:

Հաճախեց բանֆակ, աշխատանքի անցավ էլեկտրագնացքների երթուղիների շինարարությունում: Կարճ ժամանակում աչքի ընկավ իր եռանդուն, նվիրված աշխատանքով, և այդ էր պատճառը, որ էլեկտրագնացքների վարչությունը, վագոնավարների կարգեր պատրաստելու նպատակով, Նազարին մի խումբ երիտասարդների հետ գործուղեց Կրասնոդար՝ վագոնավարի մասնագիտություն ձեռք բերելու: Վեց ամիս անց վարչության պետը ուրախությամբ ընդունեց իր առաջին վագոնավարներից մեկին:

1933 թվականին առաջին տրամվայները սուրացին մայրաքաղաքի փողոցներով:

Ինը երկար տարիներ նա վարեց էլեկտրագնացքները երևանի մեկը մյուսի հետևից կառուցվող փողոցներով, պողոտաներով:

1942 թվականին, երբ Նազարն արդեն

իր համեստ աշխատանքի վարպետն էր, երբ նրան գնահատում, ճանաչում ու սիրում էին արդեն, հայկական հրաձգային դիվիզիաներից մեկի կազմում մեկնեց ռազմաճակատ՝ պաշտպանելու հայրենիքը: Երբ շոգեքարշը մեկնելու ազդանշան տվեց, մայրը, սրբելով արցունքոտ աչքերը, կրծքին սեղմեց որդուն եւ ասաց.

– Գնա՛, բալե՛ս, ջախջախիր թշնամուն... Ես կադրեմ քեզ ու բոլորի համար...

Մեկ ամիս անց սպիտակահեր փոստատարը թակեց Սաթենիկ մայրիկի դուռը և եռանկյունի ծալած մի ծրար հանձնեց նրան.

– Վերցրո՛ւ, մայրիկ, ուրախացիր, տղայիցդ է: Ամիսն հրձվանք ապրեց 66-ամյա կինը, դողդողացող ձեռքերով բացեց նամակը և ուրախության արցունքն աչքերին կարդաց.

«ԲԱՐԵՎ, ՍԻՐԵԼԻՆԵՐ

...Այժմ արդեն վերջին կայարանում եմք, որտեղից այսօր պետք է շոգենավով մեկնենք Կերչ:

Ես գնում եմ ճակատ՝ ընկերներիս հետ միասին պաշտպանելու իմ հայրենիքը և ուղևորական անելու այն գազաններին, որոնք նենգաբար հարձակվել են մեզ վրա: Եթե հարկ լինի, կյանքս էլ կտամ:

Ձեր Նազար

3 ԱՊՐԻԼԻ 1942 թ. »:

Սակայն նրան վիճակված չէր այլևս գրել: Դա նրա միակ նամակն էր ռազմաճակատից: Կերչում հայրենիքի փրկության համար 1942 թ. գարնանը ծավալված թե՛ մարտերը կտրեցին հայրուրավոր հայրենասերների կյանքի թելը: Նրանց թվում էր և Նազար Ղազարյանը:

Մայրն այլևս նամակ չստացավ սիրասուն որդուց: Հերոս քաղաք Կերչի գեղատեսիլ մի անկյունում բարձրանում է մի հսկա ու շքեղ կոթող՝ թե՛ մարտերում հերոսաբար ընկած հայրենասերների հիշատակին, բազմազգ ժողովուրդների զավակների հիշատակին, որոնց հետ էր և Նազար Ղազարյանը՝ մայրաքաղաքի տրամվայի առաջին վագոնավարը:

Գարիկ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԴԻԿ, ՏԱՐԻՆԵՐ, ՃԱԿԱՏԱԳՐԵՐ

ՍԽՐԱՆՔ ՈՂՋ ԿՅԱՆՔՈՒՄ



Պատերազմը նրա հետ շատ երկար քայլեց: Անգամ հաղթանակից հետո: Բայց չկարողացավ ընկճել: Այնքան զորեղ էին ապրելու տենչն ու ձգտումը, որ գլխուղեղում «բնակալած» թշնամու գնդակն անգամ տեղի տվեց: Միայն ժամանակ առ ժամանակ սաստկացող գլխացավերն էին հիշեցնում նրա գոյությունը: Իսկ մարդը, ի հեճուկս դրա, կարողացավ ոչ միայն ապրել, տքնել ու արարել, այլև ավելի սաղարթախիտ դարձնել իր տոհմածառը և սեղան նստել տասը զավակներով:

Սա արդեն ինքնին մի յուրօրինակ սխրանք է, որ ոչ բոլորին է հատուկ: Դեռ այս հանգամանքն էլ մեզ հուշեց պատմել այդ անսովոր մարդու և նրա բազմանդամ զերդաստանի մասին:

Հանգամանքների բերումով խմբագրություն եկավ նրա ավագ որդին՝ Երևանի Մ. Արագու անվան համար 29 միջնակարգ դպրոցի կուսակազմակերպության քարտուղար, ֆիզկուլտուրայի ուսուցիչ Վլադիմիր Մակարյանը: Հուզված էր վաստակաշատ մանկավարժն ու տխուր: Տակավին մի քանի օր առաջ էր հողին հանձնել հորը՝ 86-ամյա Մկրտիչ Մակարյանին, մի մարդու, որը շատ բան էր տեսել ու ճաշակել կյանքում և միայն բարության ու լինելության սերմեր ցանել: Ճակատագիրը ժլատ չէր գտնվել նրա հանդեպ: Չորս տղա և վեց դուստր է պարգևել հայրենիքին, հանել նրանց ինքնուրույն վաստակի ուղեծիր: Տասը զավակ, տասը քայլող «հուշարձան»:

Երեխաներից հինգը հետպատերազմյան սերունդ են, իրենց ավագ քույրերի և եղբայրների հետ միասին աշխատում են ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում: Նրանցից չորսը ստացել են բարձրագույն կրթություն, երկուսը նվիրվել են մանկավարժությանը, չորսը գնացել են հոր հետքերով, համալրել կուսակցության շարքերը: Բոլորն էլ, ի դեպ, գտել են իրենց

տեղը կյանքում, դարձել իրենց գործի իսկական վարպետներ: Շատերը վաղուց ամուսնացել են, տուն ու տեղ կազմել: Հիմա Մակարյանների գերդաստանը հինգ օջախ ունի Երևանում և այդքան էլ՝ Կիրովականում: Մկրտիչ և Շարմաղ Մակարյանների թոռների ու ծոռների թիվը հասնում է երեք տասնյակի:

Բայց միայն այսքանն ասել այդ իսկական հայ զերդաստանի մասին՝ նշանակում է ոչինչ չասել: Թերևս, այդպես էր ընկալում մահ նրանց ավագ որդին՝ Վլադիմիրը, որը տենչում էր ավելի հանգամանորեն անդրադառնալ իր հոր կենսագրությանը, բայց չգիտեր որտեղից սկսել և ինչպես: Թղթապանակից հանում է տպագիր ու անտիպ մի շարք փաստաթղթեր ու գրություններ և ասում.

– Ծանոթացեք, խնդրեմ, ահա այս մեկին, կարծում եմ՝ նման փաստի հազիվ թե հանդիպած լինեք:

Եվ, իրոք: Աչքի են անցկացնում Կիրովականի քաղաքային «Կայծ» թերթի այս տարվա ապրիլի 5-ի համարում տպագրված «Անսովոր դեպք» վերնագրով թղթակցությունը.

«Կիրովականի Լ. Արեշյանի անվան հիվանդանոցում դիախերձման ժամանակ անսովոր փաստ արձանագրվեց: Հանգուցյալի գլխուղեղի աջ կիսագնդի մակերևույթից 7 սմ խորության վրա, անցնելով ուղեղային հյուսվածքի ստվարաշերտը, գնդակը հայտնվել էր մարդու գլխուղեղի աջակողմյան փորոքի խոռոչում: Գնդակի երկարությունը մոտավորապես 4 սմ է, տրամագիծը՝ 1 սմ, կշիռը՝ գրեթե 14 գրամ»:

Ի դեպ, տպագրված էր այդ գնդակի լուսանկարը: Դիախերձող բժիշկը՝ պաթոլոգ-անատոմիկ Ա. Պառապյանը պատմում է.

– Այս դեպքը ապշեցուցիչ է, եզակի: Վիրահանքը լիովին սպիացել էր: Գլխուղեղի ծանր վնասվածքից հետո վերապրուկային երևույթները, շնորհիվ օրգանիզմի անհատական, ազդագերծող միջոցների /առանց վիրաբուժական միջամտության/, մարտիկին չէին զրկել հետագա ակտիվ ապրելակերպ ապահովելու հնարավորությունից: Գլխուղեղի նման բնույթով ու ծավալով նույնիսկ անենաթեթև վնասվածքները հաճախ մահվան պատճառ են դառնում... Մինչդեռ այդ մարդը նման վնասվածքից հետո էլ ապրել ու աշխատել է 44 տարի: Սա անմասնադեպ երևույթ է, որի բացատրությունը մինչև օրս չկա բժշկական գրականության մեջ:

Ե՛րբ և ի՞նչ հանգամանքներում է այս անսովոր փորձությանը ենթարկվել 1921 թ. ՍՄԿԿ անդամ, Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման մասնակից, Հայրենական պատերազմի և աշխատանքի վետերան, միութենական կարգի անհատական թոշակառու Մկրտիչ Արտեմի Մակարյանը: Որտեղի՞ց է սերվել նա և ի՞նչ ճանապարհ անցել մինչև մեծ աշխարհամարտն ու նրանից հետո: Առանց այս հարցերի համառոտ պատասխանն իմանալու հազիվ թե հնարավոր լինի ծանոթանալ նրա կյանքի պատմությանը:

Ծնվել է դարասկզբին, Իջևանի շրջանի Ջողազ գյուղում: Մանկությունն ու պատանեկությունն անցել է բազում հոգս ու ցավի մեջ, հայրենի խաղաղ եզրերից հեռու: Աշխատանքային գործունեությունն սկսել է վաղ հասակից: Դեռևս 15-ամյա պատանի էր, երբ սկսում է մի կտոր հաց վաստակել՝ բատրակություն անելով Գյանջայում (այժմ Կիրովաբադ): Դեռն այստեղ էլ շրփվում է բոլշևիկյան ընդհատակի հետ և անդամագրվում կուսակցությանը: Եղել է 11-րդ ազատարար բանակին օգնող կարմիր պարտիզանների շարքերում, ապա դարձել այդ բանակի առաջին հրետանագնդի կամավորներից մեկը: Երկու անգամ վիրավորվելուց հետո զորացրվել և վերադարձել է հայրենի շրջան, լծվել գյուղի վերակառուցմանը:

1930-ական թվականներին նա բնակության է մեկնում Կիրովական: Աշխատում է տեղի երկաթուղային հանգույցում, կղմինդրի և լինոնադի գործարաններում: Արդեն կոփվել էր բանվորական «դարբնոցում», դարձել ընտանիքի հայր, երբ պայթեց պատերազմը: Հայրենիքը վտանգի մեջ էր: Չէր կարող կրկին չզինվորագրվել հեղափոխության նախկին մարտիկը: Ձինկոմիսարիատից վերադարձավ զորակոչի վկայականը ծեծքին: Գլխիկոր ու թախծոտ հայացքով նրան էին նայում հինգ

180

մանկահասակ զավակներն ու կինը: Առաջինը ծանր լուրջությունը խախտեց ու հոր գիրկը նետվեց ավագ որդին՝ 12-ամյա Վոլոդյան: Ապա հերթով մոտեցան ու զգվեցին դուստրերը՝ Ռոզան, Էման, Լենան: Իսկ ամենակրտսերը՝ մեկամյա Սվետլկը, մանկան անմեղ չարաճճությամբ մեկ նրանց էր նայում, մեկ մոր արտասովոր աչքերին՝ չհասկանալով, թե ինչ է կատարվում: Հայրը մեկ-մեկ համբուրեց զավակներին, ավո՛վ փաղաքշեց, շոյեց կնոջ վարսերն ու հուսադրող տոնով ասաց. «Դե, մնաք բարով, գնացի: Շատ չտխրեք: Ամեն ինչ լավ կլինի: Դիմացեք»:

Առաջին անգամ չէր զինվորի համազգեստ հագնում: Հասցրել էր շնչել վառողի ծուխը, բազում դժվարություններ հաղթահարել: Դրա համար էլ մեծ հարգանք ու պատիվ էր վայելում զորային



պիտակացվում: Առաջին բուժօգնությունը նրան ցույց է տալիս մույն գնդի նախկին սանհրահանգիչ, կիրովականցի Հրանտ Բուլղադարյանը: Թշնամու ահեղ կրակի տակ, կյանքը վտանգի ենթարկելով, նա իր հայրենակցին դուրս է բերում մարտադաշտից և հասցնում բուժսանգումարտակ:

Եվ ահա, մեծ արհավիրքից տասնամյակներ հետո, նախկին ռազմիկը, իմանալով իր համերկրացու գլխուղեղում ճարպակալված ու անշարժ մնացած գնդակի մասին, կասի. «Ա՛յ թեզ հրաշք: Ո՞վ կհավատար: Իսկ ինձ թվացել էր, թե վերքն այնքան էլ սարսափելի չէ: Որովհետև այսօրվա պես հիշում եմ, որ վիրավոր Մ. Մակարյանին օգնություն ցույց տալու և տեղափոխման ժամանակ նրա գիտակցությունը տեղն էր: Դեռ ավելին, խախտված չէին նրա մտակողմնորոշումն ու շարժադաշնությունը և անկաշկանդ հաղորդակցվում էր շրջապատի հետ»:



ընկերների շրջանում: Բոլորը պատկառանքով էին վերաբերվում նրան, վստահում էին ու խորհրդակցում հետը: Սահմանամերձ մարտերից մի քանիսում նա արդեն հասցրել էր աչքի ընկնել իր սխրագործություններով: Արժանացել էր Կարմիր աստղի շքանշանի, մեդալների: Կիրովոգրադյան թիվ 409 դիվիզիայի 684-րդ գնդի դասակի հրամանատար Սկրոիչ Մակարյանի մարտական ուղին ընդհատվեց 1944 թ. գարնանը, մոլորական հողում: Հենց այստեղ էլ, Քիշինևից ոչ հեռու մոլոր կատաղի մարտերից մեկում, նա հրազենային գնդակով վիրավորվում է գլխից և հոս-

Ինչևիցե: Փաստը մնում է փաստ, որ հոսպիտալում մի քանի ամիս բուժվելուց հետո, 1944 թ. օգոստոսին Մ. Մակարյանը, որպես երկրորդ կարգի հաշմանդամ, զորացրվում է ու վերադառնում հայրենի քաղաք:

Այստեղ էլ Մակարյանը չի կտրվում կյանքից: Նա շարունակում է ակտիվորեն աշխատել քաղաքի ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում, ղեկավար պոստեր զրավելով Կի-

192

րովականի հաշմկողություն, Հայառուն, կոլտնտեսության շուկայում, տպարանում և այլուր: 1957 թ.-ին, վաստակած հանգստի անցնելուց հետո էլ, հնագույն կոմունիստը, պատերազմի և աշխատանքի վետերանը ակտիվորեն է մասնակցում երկրի հասարակական-քաղաքական կյանքին և իր նպաստը բերում երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Այսուհանդերձ, հետպատերազմյան շրջանի նրա ամենամեծ սխրանքը, թերևս, այն էր, որ նա կարողացավ նորովի շենացնել ու ծաղկեցնել իր մեծ օջախը և դառնալ բազմամյա ընտանիքի իսկական նահապետ: Պատերազմից հետո էլ նրա հարկի տակ դրվեց հինգ օրոքոց: Մանկան ճիշտ լավեց ևս հինգ անգամ: Մեկը մյուսի հետևից լույս աշխարհ եկան զավակները՝ Ռաֆիկը,

Լաուրան, Անահիտը, Դավիթն ու Կամոն և մանկական հոգս ու աշխույժով լցրին նրա կյանքը:

Մակարյանների կյանքում հիշարժան իրադարձություն կատարվեց տասը տարի առաջ: Տոնական սեղանի շուրջ հավաքվեցին ազգ ու բարեկամները՝ նշելու Մկրտիչի և Շարմաղի ամուսնության կեսդարյա հորեյանը, պանծացնելու նրանց «ոսկե պսակը»: Այդ տոնախմբությունը նկարահանվեց հանրապետական հեռուստատեսությամբ և հաղորդվեց «Լրաբեր» ծրագրով:

Եվ բոլոր նրանք, ովքեր մասնակցում էին այդ յուրօրինակ տոնակատարությանը, անթաքույց հրճվանքով էին նայում տարեց «հարս ու փեսային», որոնց կյանքի օրինակը արժանի է դրվա-տանքի:

Հր. ՄԱՅԻՆՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆ», 23 հուլիսի 1988 թ.

1992 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 9-ԻՆ ԱԶԱՏԱԳՐՎԵՑ ՇՈՒՇԻՆ

ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԱՐՑԱՆԻ ԵՐԿՆՔՈՒՄ

23 տարի առաջ մայիսի 9-ը Հայոց պատմության մեջ նշանավորվեց կարևորագույն իրադարձությամբ. ազատագրվեց հայոց հինավուրց բերդաքաղաք Շուշին, այսպիսով վճռական բեկումն մտցվեց Արցախյան ազատագրական պայքարում, և նախանշվեց հետագա հաղթանակների ուղին:

Շուշիի ազատագրումը այսօր էլ հրաշքի հավասար մի բան է թվում. և քաղաքի անառիկ դիրքը, և հակառակորդի մարդկային ու ռազմական տեխնիկայի գերակշռությունը գրեթե բացառում էին քաղաքը արագ ու առանց մեծաթիվ զոհեր տալու թշնամուց մաքրելը: Սակայն Շուշիի ազատագրումն այլևս անհնար էր հետաձգել: 1992-ի փետրվարի կեսերից սկսած Արցախի երբեմնի մայրաքաղաք Շուշիից Ստեփանակերտի ու հարակից բնակավայրերի վրա կարկուտի պես հրթիռներ էին տեղում: «Դրությունն անտանելի էր: Ստեղծվել էր կիսաօդակ, որը Ստեփանակերտը պահում էր մշտական զնդակոծության տակ», – պատմում է Ինքնապաշտպանության ուժերի հրամանատար, Շուշիի ազատագրման գործողության հեղինակ Արկադի Տեր-Թադևոսյանը՝ լեգենդար Կոմանդոսը: Ստեփանակերտը գրեթե 70 տոկոսով ոչնչացված էր, մարդիկ ապրում էին նկուղներում, բացակայում էին տարրական կենցաղային պայմանները, չկար ոչ հաց, ոչ ջուր: Այդպես շարունակվելու դեպքում Ստեփանակերտում չավերված տուն և ողջ մարդ չէր մնա: Իրավիճակը պարտադրաբար պահանջում էր ազատագրել կրակակետերը՝ հուցալուից մինչև Շուշի:

«Հարսանիք լեռներում»... այս պայմանական ռազմական գործողության համար թերևս արտառոց անունով կնքվեց Շուշիի ազատագրման գործողությունը: «Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը կարծում էր, որ նման օպերացիա իրականացնելու համար դեռ վաղ է, որ դրան պետք է լավ պատրաստվել: Ռազմական տեսանկյունից մենք պատրաստ չէինք, և Վազգեն Սարգսյանն ասաց, որ շտապել պետք չէ, բայց Շուշին պետք էր ազատագրել: Այդ ժամանակ ես խոստացա նրան, որ եթե մենք գրավենք Շուշին, ապա լեռներում կկազմակերպենք նրա հարսանիքը: Այդպես առաջացավ օպերացիայի «Հարսանիք լեռներում» անվանումը», – պատմում է Կոմանդոսը:

Շուշին ազատագրելու գործողությունը սկսվեց մայիսի 8-ի գիշերը ժամը 2:30-ին Քիրսի ռազմական դիրքերը գրավելով: Շուշիի ուղղությամբ սկսվեց հրետանային պատրաստությունը, որից հետո սկսվեց գրոհը քաղաքի վրա չորս ուղղություններով միաժամանակյա հարձակումներով (հրամանատարներ Արկադի Կարապետյան, Վալերի Զիթյան, Սամվել Բաբայան, Մեյրան Օհանյան): Գնդապետ Արկադի Կարապետյանի գումարտակը 400 զինվորով սկսեց հարձակումը Շուշիի կողմից: Հյուսիս-արևելյան ուղղությամբ գրոհեց Աշոտ Դուլյանի 1-ին վաշտը: Արևելյան կողմից հարձակումը սկսեց Դուշման Վարդանի վաշտը, որն իր զինվորներով արդեն առավոտյան քաղաքի մերձակայքում էր: Հարավից գրոհեցին աֆղանական վետեաններ Նվեր Զախոյանի վաշտը և Ժիրայր Սեֆիլյանի ու Աշոտ Խաչատրյանի գումարտակները: Նույն ժամանակ 400 մարտիկներից բաղկացած առանձին ջոկատը գնդապետ Մեյրան Օհանյանի գլխավորությամբ շրջանցեց քաղաքը և մոտեցավ հարավ-արևմուտքից՝ ազատագրելով Քուսար, Բաշքենդ, Ջավադլար և 17 այլ գյուղեր: Արթուր Առաքելյանի 100-հոգանոց ջոկատն ազատագրեց Ստորին Ջառսլուն, իսկ Ալբերտ Ավադեղյանի ջոկատը՝ Վերին Ջառսլուն: Արդեն առավոտյան նրանց միացավ Վալերի Զիթյանի գումարտակը: Հենց այդ գումարտակի 4-րդ վաշտին բախտ վիճակվեց առաջինը մտնել քաղաք: Երեկոյան կողմ հիմնականում ավարտվել էր Շուշիի «մաքրման» գործողությունը: Մայիսի 9-ին առավոտյան 4:30-ին, Արկադի Տեր-Թադևոսյանին հաղորդեցին, որ քաղաքն ազատագրված է:

Շուշիի ազատագրումը մեկ անգամ ևս փաստում է մեզ համար այլևս արքայադատիկ այն իրողությունը, որ երբ բռնկվում են Հայոց ռազմական համարներ ու մարտական ոգին, հաղթանակն անկասելի է դառնում:

Այդ օրերի մասին բազմաթիվ հուշեր կան գրված և գրառված: Մեր ընթերցողներին ներկայացնում ենք հերոսական այդ օրերի մասին գրող, հրապարակախոս, ռեժիսոր, ազատամարտիկ ԳՐԻԳՈՐ ԲԱԲԱՅԱՆԻ փոքրիկ հուշը:

Շուշիյան եկեղեցու զանգակատանը, որքան գիտեմ, մինչև այսօր զանգ չկա: Սուրբ պատարագի զանգը, սակայն, երկնքում դողանջում է: Այն 220-ից, որ Քիրսի բարձունքից նայում էին կրակ բռնած Շուշիին, մի քանի տասնյակը հիմա մարմնապես չկան: Մարմինները խոցու-վեցին գնդակից, պատահականաբար բեկորներից, պայթեցին ականների վրա ու ռումբերի տակ: Հոգիները թռածուն են Արցախի երկնքի գմբեթում:

Դուշմանը, Երոն, Արայիկը, Դուդուլը, Վալիկը, Մերգելը...

220-ը դասակ առ դասակ շարվել էին Քարինտակի հանդիպակաց լանջի հետևում: Սպասում էին մթնելուն, որ շարժվեն: Ժիրոն ասաց.

– Քայլելու ենք երկար, Քիրսն ենք անցնելու: Ճանապարհը շատ դժվար է: Անցնելու ենք թուրքի դիրքերի միջով: Ով հոգնեց՝ կթողնենք ճամփին, ճար չունենք: Մեղադրելու չէ՝ կհասկանանք, ով իր վրա վստահ չէ՝ դուրս գա շարքից:

Քար լուրջությամբ: Տղերքը վախենում էին շարժվել, որ հանկարծ մեկի զենքը չզնգա, հայացք չգրավի:

Ժիրոն նայեց լուռ շարքերին, ծայրը խստացավ:

– Գնում ենք հետ չգալու համար: Վախկոտներին կգնդակահարենք:

Լուրջությամբ:

– Հառաջ...

Եվ հինգ ժամ քայլելուց հետո տեսանք Շուշին կրակների մեջ: Թշնամու Շուշին, որ յոթ տասնամյակ առաջ դադարել էր մերը լինելուց, և որը, հրով մաքրագործված, վերստին պիտի մերը դառնար: Թշնամի Շուշին, որը քանի ամիս արդեն գլխներիս երկաթ էր խփում...

Հաղթանակի տարեդարձի այս օրվա ցնծությունը իմ մեջ հանդարտվում է այն տխրությամբ, որ ընկերներիս հիշատակներն են բերում:

Նրանց հոգիներն են դողանջում Արցախի երկնքում: Հաղթանակի ցնծությամբ:

«Երկիր», 8 մայիսի, 1993 թ.

3.4. – Այսօր Շուշին եռում կյանքով է ապրում, քաղաքում իսկական հարսանիքներ են տոնվում, իսկ Շուշիյան լեռներում թողնողների ծայրերի փոխարեն արծազանգվում է Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու զանգերի դողանջը:

Րաֆֆու Խենթի իրական պատմությունը

1877 թվականի սեպտեմբերին Թիֆլիսից Երևան ճանապարհվելիս Րաֆֆին Դիլիջանում հանդիպել է Բայազետի պաշտպանությանը մասնակցած վիրավոր զինվորների, որոնք էլ պատմել են, որ իրենք փրկվել են մի զինվորի հնարամտության շնորհիվ: Նա խենթ թուրդ ձևանալով՝ ձեռքով է այդ տարածաշրջանում գտնվող թուրքերի ու քրդերի զինված շրջափակումը, լուր հասցրել գեներալ Արշակ Տեր-Ղուկասովին, որի օգնությամբ էլ ազատագրվել են Բայազետի պաշարված բերդում գտնվող հայ և ռուս զինվորները: Րաֆֆին այս նյութը դարձնում է արդեն ծրագրված վեպի թեմա, որը հայտնի է մեր օրվա ազգային ազատագրական պայքարի: Դեպքերի մանրամասներին ծանոթանալու համար գրողն անձամբ հանդիպում է այդ քաջ զինվորի՝ Սամսոն Տեր-Պողոսյանի հետ, որն էլ այդ հանդիպման մասին գրում է. «Ես ինչ-որ հանձնարարականով էջմիածին էի եկել, երբ կապույտ ակնոցով, մեծ, սև բեղերով ինչ-որ մարդ առաջ կտրեց, ծանոթացավ, անվանելով իրեն Մելիք-Հակոբյան, և ասելով, որ ինձ հետ կարևոր խոսակցություն ունի, տարավ միաբաններից մեկի խուցը և ահա այստեղ սկսեց ինձ հարցափորձի ենթարկել իմ մի տարի առաջ Բայազետում և գեներալ Տեր-Ղուկասովի բանակում արածների մասին: Ես ամեն կերպ աշխատում էի կարճ կապել, բայց այս մարդը յալիցս բռնել, պոկ չէր գալիս, հարցեր էր, որ տալիս էր և ասածներս գրում էր ծոցատետրում: Այդ պահին ներս եկավ բժիշկ Բագրատ Նավասարդյանը, որ գաղթականներին բուժող ու խնամող վանքի բժիշկն էր, և կամացույց ասաց ակնաջիս սա մեր հայտնի գրող Րաֆֆին է, մանրամասն պատմիր, նա կարծես, ինչ-որ բան է ուզում գրել այդ պատերազմի մասին: Եվ ես սկսեցի պատմել ու պատասխանել նրա տված հարցերին, որից հետո դուրս եկա ու գնացի իմ գործին» (Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. չորրորդ, Ե., 1984, էջ 445-446):

Սամսոնը դարձավ «Խենթ» վեպի գլխավոր հերոսի Վարդանի նախատիպը: Վեպն առաջին անգամ լույս տեսավ 1881 թվականին Շուշիում: Սյունիքում հրատարակվեց ու վերահրատարակվեց բազմաթիվ այլ լեզուներով: Այս ստեղծագործությամբ Րաֆֆին ցանկանում էր ժողովրդի մեջ արթնացնել ազգային ինքնագիտությունը, ազգի ճակատագիրը սեփական ուժերով տնօրինելու և գեներոսով հայրենիքն ազատագրելու գաղափարը: Կարելի է ասել, որ վեպն իր առջև դրված խնդիրը կատարեց: Ժամանակին այն մեծ արձագանք է ստանում ընթերցողների շրջանում, հայրենասիրության այլք բարձրացնում: Լեոն (Լեո, հ. 9, էջ 334-335) այդ առիթով գրում է. «19-րդ դարի կեսերին կար հասարակության ավելի ընդարձակ տրամադրություն, որ ասում էր, թե ձրի ոչինչ չէ տրվում մարդուն, թե ազատությունը չէ շնորհվում իբրև ողորմություն, այլ նվաճվում է իբրև իրավունք: ...Այս ընդհանուր հոսանքին հարկավոր էր դեկավարող խոսք, հարկավոր է ծրագիր»:

Ժամանակի այս մեծ պահանջի իրականացում էլ վիճակվում է Րաֆֆու տաղանդին: «Ջալալեդդինից» հետո հրատարակվում է նրա «Խենթը», որի գործած տպավորությունը անհամեմատ ավելի մեծ է, ավելի դյուրիշ: Ընթերցող հասարակությունը հմայված է:



Շուշի քաղաքում, ձմեռային մի ցուրտ գիշեր, ես պատահել եմ շուկայի գիշերապահին, նստած մի խարույկի առջև «Խենթը» կարդալիս: Նա գանգատվում էր ինձ, որ չէ կարողանում ընդհատել ընթերցանությունը և կատարել իր պաշտոնը: «Խենթը» առանձին գրքով տպագրվեց Շուշիում և մի ամսվա մեջ սպառվեց ամբողջովին: Առաջին ներգործությունը նա արավ տպարանի գրաշարի վրա, որ ուզում է թողնել ամեն ինչ և գնալ Թուրքաց ճայաստանն ազատելու չունենալով ձեռքին նույնիսկ գեներ: Կարճ միջոցից հետո ճայաստան ճանապարհվեց տեղական ռեալական դպրոցի աշակերտներից մեկը, բայց ճանապարհից ետ բերվեց: Սյունիքում այդպիսի դեպքեր շատ պատահեցին և ուրիշ տեղեր:

Երիտասարդությունը վարակված էր փրկամտ տենդով, ամեն մեկն ուզում էր «Ջալալեդդինի» կամ «Խենթի» հերոսներից մեկը դառնալ: Եվ Վարդանը, Մելիք-Սանսուրը, Դուռուկյանը գրքի էջերից դուրս էին գալիս կյանքի մեջ մարմին և արյուն ստանալու համար»:

Բայազետում տեղի ունեցած դեպքերի իրական մանրամասները կարդում ենք Վ. Պիկուլի «Բայազետ» պատմավեպում: Ահա մի հատված այդ վեպից, որտեղից տեղեկանում ենք Սամսոն Տեր-Պողոսյանի մասին (Պիկուլ Վ. Ս., «Բայազետ» պատմավեպ, Երևան, 1989, էջ 460): Ի դեպ, այստեղ նա ներկայանում է որպես Սամսոն Պետրոսով: Պետրոսը նրա պապն էր իր հոր տեր Պողոս քահանայի հայրը:

«...Շտոկոլմից գնաց իր սենյակը, սերթուկի գրպանից իր լոխկիսեց կաշվե երեք տոռլ քսակներ: Շտոկոլմից կազմատ, որտեղ տեղավորված էին փախստականները և միլիցիայի ժաշտները: Ոչ մի բառ չասելով պարետն արձակեց քսակներից մեկը, և սեղանի վրա ծանր զնգոցով թափվեցին տասանոց ոսկիները»:

– Ահա, – ասաց նա ոսկին կույտ անելով, – հարկավոր է դուրս պրծնել Բայազետից, կապվել գեներալ Տեր-Ղուկասովի հետ և պատմել նրան այս ամենի մասին... ո վ կհամարձակվի գնալ:

Մթության միջից դուրս եկավ խիստ դեմքով, կորաքիթ մի երիտասարդ լեռնի՝ ձեռքի ափերը երկար դաշույնի վրա դրած:

– Ես Պողոսի որդին եմ Սամսոն Պետրոսով: Թուրքերը սպանել են իմ մորը և հրկիզել իմ տունը: Ինձ փախցել են միայն իմ կինը և ահա այս դաշույնը: Թույլ տուր, ռուս հրամանատար, և ես կգնամ Մուրբ Հովհաննես, նույնիսկ չվերցնելով այդ փեշքեշը:

– Վերցրո՛ւ, – ասաց պարետը: – Պատերազմից հետո քեզ պետք կգա: Բայց հիմա դրանք թող կնոջդ մոտ... բերդից կիջնես պարանով, որ քեզ ոչ ոք չնկատի: Կհագնվես քրդի պես: Ես քեզ գրություն կտամ ուղղված Արգաս Արտեմիսին: Եվ մենք քեզ համար կաղոթենք աստծուն...»:

«Իմ գլխին, – պատմում է Սամսոն Տեր-Պողոսյանը 1878 թվականին ռուսական թերթերից մեկին տված հարցազրույցում, – թաղիքե քոլոզ հագցրին, փաթաթեցին լաթերով, քրդի նման գուգեցին: Սպասելով մինչև լույսը տիրի և դառարի փոխհրաձգությունը, ինձ իջեցրին պատից, որը մի սածեն բարձրություն ուներ: Ես ընկա այստեղ ու այնտեղ թափված դիակների վրա:

Ջզվելի հոտը և նրանց այլանդակ տեսքն իմ մեջ սարսափ առաջացրին: Երջակայքի թափառական շները հաչոց բարձրացրին: Քրդերը գլխի ընկան, որ բերդից մարդ է դուրս եկել: Սկսվեց հրաձգությունը, բայց ոչ մի գնդակ ինձ չկապվ: Ես շարունակեցի սողալ դիակների միջով և արդեն գտնվում էի ժայռի եզրին, երբ հանկարծ տեսա քրդերին, որոնք գալիս էին իմ կողմը: Ես այն ժամանակ ժայռից ինձ կիրճը զցեցի, որի պատճառով էլ վնասեցի ոտքս:

Պարզվեց, որ կիրճից դուրս գալը դժվար է. հողը փխրուն էր, և անընդհատ սահում էր վար: Այդպես տանջվեցի ամբողջ գիշերը և միայն լուսադեմին ոտքերիս տակ շոշափեցի արահետը: Կոշիկներս հանեցի և այդ արահետով մի կերպ դուրս եկա կիրճից: Այդտեղ անսպասելիորեն հանդիպեցի թուրք ուղեկալների: Որպեսզի կապկածները հեռացնեի ինձանից, ես ինքս նետվեցի նրանց կողմը, դեռ հեռվից բղավելով:

– Փրկեցե՛ք, ռուսները դուրս են գալիս բերդից...

Տագնապ բարձրացավ: Քրդերը մի ակնթարթում հայտնվեցին ձիերի վրա և սլացան տարբեր կողմեր: Սակայն շուտով ինձ նոր սոսկում պատեց. մի երկու հարյուր քուրդ երևացին ինձանից ոչ հեռու: Կորս, մտածեցի ես, և ինձ զցեցի ջրով լցված փոսի մեջ: Ափիս մեջ մի քիչ հող վերցրի և ջուր լցրի վրան: Դա, որոշեցի ես, կլինի իմ հաղորդությունը, եթե տեսնեմ, որ հարկավոր է բաժանվել կյանքից: Բայց քրդերն անցան կողքովս չնկատելով ինձ:

Ես ուղղվեցի դեպի հայկական Արցին գյուղը, որպեսզի որևէ հայից նմույշ վերցնեմ և արագ վանամ փնտրելու չհրկվանի ռազմաճակատը: Սակայն, ավադ, ինչ տեսան իմ աչքերը հենց գյուղի մուտքի մոտ... Բնակիչները դուրս էին գալիս տներից: Նրանց ձեռքերը պարաններով կապած էին կրծքերին ու մեջքերին: Ես տեսա և շատ հալածվեցի: Ես ընկա իմ հաղորդությունը, որի հյուրասիրությունից հաճախ էի օգտվում, այժմ տեսնում էի կոտորված: Իսկ նրանք, ովքեր կապված էին, ման էին գալիս իրենց տների մոտ, քրդերն էլ թալանում էին նրանց ունեցվածքը: Մեկը յուրն էր հանում տնից, մեկը պանիրը, մեկը

անդրկները:

Ինչ էր ժամում ինձ անելու: Եվ ահա ես, քուրդ ձևանալով, մտա տներից մեկը, վերցրի մի մեծ պարկ և սկսեցի նրա մեջ բուրդ լցնել: Երկու քողեր, որոնք տնօրինություն էին անում այդ տանը, նայեցին ինձ ու դուրս եկան: Շուտով վերադարձան ուրիշ քողերի հետ: Ես այնքան վախեցա, որ քիչ էր ժամում ինձ մատնել: Հարկավոր էր լռել և թալանել, իսկ ես սարսափից սկսեցի խնդրել:

– Մի բարկացեք, եթե ես էլ ինձ համար քուրդ վերցնեմ:

Այստեղ նրանք ինձ բռնեցին և սկսեցին ծեծել, գոռալով:

– Մենք քեզ տեսել ենք Բայազետում... դու լրտես ես, ծախվել ես ռուսներին... Ասա ո՞վ ես դու և որտեղից:

Ես քրդերեն խոսում էի շատ վատ, և դրա համար նրանց պատասխանեցի թաթարերենով:

– Խնայեք ինձ: Ես Մուստաֆա-օղլու (Մուստաֆա-օղլուն Բայազետում բոլորը գիտեին) ծառան եմ... Ես ընդամենը Խոյի աղքատ թաթարներից եմ և իմ տերը թույլ է տվել ինձ որևէ բան ձեռք բերել իմ ընտանիքի համար... Բաց թողեք ինձ, բարի և ազնիվ բեկեր:

Քրդերը չստեղծ իմ ձիւն ու աղաղակը, ինձ լրիվ մերկացրին և սկսեցին թափ տալ հագուստս, որպեսզի ապացույց գտնեն իրենց կասկածների համար՝ նամակ կամ ոսկի: Մակայն պարոն Շոտկովիչի տված գրությունը ես վաղուց արդեն կուլ էի տվել, դեռ այն քրդերին տեսնելու ժամանակ, երբ պառկած էի փոսի մեջ: Քրդերով իմ ցնցոտիները և կասկածելի ոչ մի բան չգտնելով՝ քրդերն ինձ բաց թողեցին: Ես վերցրի բրդով լցված պարկը և կաղալով սկսեցի որքան հանարավոր է արագ դուրս գալ գյուղից: Ես լաց էի լինում տեսնելով իմ հայրենակիցների աղետները: Երբ արդեն դուրս եկա Արցիխի շրջապարիսպից, ես պարկը գցեցի և շարժվեցի առաջ:

Հանապարհին մի քիչ պառկեցի հանգստանալու, որպեսզի խնայեմ ցավոք ոտքս: Կողքից արշավելով մի քուրդ անցավ և նկատեց ինձ: Նրա հարց ու փորձին պատասխանեցի նույն ձևով, ինչ որ առաջ: Մակայն այս քուրդը նորից տկուրացրեց ինձ և նկատեց, որ իմ շապիկը քրդական չէր: Նա նիզակի սուր ծայրը դեմ տվեց կրծքիս, որպեսզի միանգամայն վերջ տա ինձ: Այն ժամանակ ես ծնկի եկա նրա առաջ, լաց եղա և խնդրեցի, որ չսպանի ինձ: Քուրդը ծիծաղեց իմ արցունքների վրա, անվանեց ինձ հիմար կին և, վերցնելով շապիկը, որը ինչ-որ բանով դուր էր եկել նրան, նորից ձի նստեց ու սկսեց վազել...

Ես շատ ուրախացա և շարունակեցի ճանապարհս: Ինձ թվում էր, թե մոտենում եմ Ղարաքիլիսին, երբ հեռվում վրաններ և կարմիր հագուստով հեծյալներ երևացին: Ես հիմարաբար որոշեցի, որ դրանք ռուսներ են, և ինքս վազեցի նրանց ընդառաջ: Մակայն պարզվեց, որ դրանք դարձյալ քրդեր են, և ինձ քարշ տվեցին ուղիղ շեյխի (նրանց մոտ շեյխը, ինչպես հայերիս մոտ նահապետը) վրանը: Այստեղ ես ձելալ էդդինի առջև կանգնեցի, նորից անվանվեցի Մուստաֆա-օղլու ծառան: Ես լաց եղա և ասացի, որ չամի էի բերում այստեղ վաճառելու, բայց քո քրդերը, լուսափայլ շեյխ, ճանապարհին կոդպտեցին ինձ և խլեցին նույնիսկ էշս:

Այդ ժամանակ ձալալ էդդինը զայրացած գոռաց ինձ վրա:

– Դու ինքդ ես մեղավոր: Հիմա մարդիկ մարդկանց արյունն են ջրի պես թափում, և ոչ ոք դրա մասին չի բողոքում: Իսկ դու, հիմար ոչխար, ափսոսում ես քո էշին... Հեյ,

ծառան՝ ր, մտրակով մի լավ քոթակեք դրան և թող սողալով կորչի գնա լիզելով իր վիրավորանքը:

Ինձ մտրակներով մի լավ ծեծեցին ու բաց թողեցին: Եվ այդպես ահա ես վերջապես հասա մինչև Սուրբ Հովհաննես: Այստեղ ինձ լավ դիմավորեցին ռուսները, բայց մի մայրը ենթադրեց, որ ես քուրդ եմ և Ֆուլի փաշայի լրտեսը: Ես իզուր էի նրան հակառակորդ համոզում, նա կարգադրեց իր կազակներին ինձ դուրս բերել բակ ու գնդակահարել:

– Մի թե քուրդը կարող է ռուսներն այնպես լավ խոսել, ինչպես ես, ասացի մայրորին:

Մայրոն ինձ անգամ լսել չուզեց: Կազակները ձեռք դրախտ Մամսոն Պետրոսովին դուրս բերեցին և կապեցին պատին: Մակայն այդ պահին սմբակների թփփոց լսվեց, մոտեցավ մի ուրիշ ռուս սպա: Նա կարողանում էր խոսել հայերեն և տեսնելով իմ արցունքները, համբերատարությամբ լսեց ինձ: Ապա այդ սպան սկսեց հայեցել մայրորին և կտրտեց իմ ձեռքերի պարանները: Հետո բոլորի ներկայությամբ նա սկսեց համբուրել դեմքս, աչքերս, ուսերս: Նա կազակներին և այդ մայրորին ասաց, որ ես արժանի եմ ոչ թե գնդակահարության, այլ մեծ պարգևի:

Ինձ անմիջապես կերակրեցին, փոխեցին հագուստս ու ձի տվեցին: Կազակային պահակախմբի ուղեկցությամբ մենք սկսեցինք ինքնուրույն ճանապարհով, սկսեցինք ինքնուրույն ճանապարհով, սկսեցինք ինքնուրույն ճանապարհով: Բանակում դեռ ոչ ոք չգիտեր: Եվ հիմա ինչ է կատարվում Բայազետում: Տեր-Ղուկասովը կարողացել էր Պացկի զեկույցները և կարծել, թե թուրքերը վաղուց ջախջախված են գլխովին: Գեներալ-նահանգապետ Ռոսլավլը բայազետցիներին ոչ մի օգնություն չի ցուցաբերում: Միայն հիմա բոլորը հասկացան, որ Բայազետը զսպում է թուրքերին Երիվանը ջախջախելուց և քրդական հեծելազորին Թիֆլիսի վրա արշավելուց, որովհետև Գովկասի ներքում գրեթե բոլորովին գործեր չէին ծագել...»:

Հետո Վ. Պիկուլը ավելացնում է. «Մենք մեզանից ավելացնենք, որ հայորդի Մամսոն Պետրոսովը հենց այդ ժամանակ էլ ստացավ Գետրգիկյան ոսկե խաչ, հայրուր քսան կիսաիմպերիալ և դառնալով ռուսական բանակի սպա, ռոճիկից բացի, իր սիրագործության համար ամեն ամիս ստանում էր ևս հայրուր քսան ռուբլի: Դա բոլորն է, ինչ մենք գիտենք նրա մասին»:

Հայտնի է, որ հետպատերազմյան տարիներին նա շարունակել է ծառայությունը ռուսական բանակում, կատարել է հետախուզական առաջադրանքներ, թարգմանչի պարտականություններ, ավելի ուշ զբաղվել է թիկունքային սպասարկման խնդիրներով, բարձրացել սպայական աստիճանակարգով և արժանացել գնդապետի կոչման: Շատայն է Թիֆլիսում և Սանկտ Պետերբուրգում: Շատայնությունից արձակվելուց հետո վերադարձել է Հայաստան: 1903–1906 թվականներին եղել է Վայոց ձորի գավառապետի օգնական, ապա գավառապետի պաշտոնակատար, 1906–1911-ին Էջմիածնի գավառի ջրաբաշխ: Նրա այդ ժամանակվա գործունեության մասին տեղեկանում ենք ակադեմիկոսներից մեկի նամակից, գրված 1984 թվականին Մամսոնի թոռանը՝ Տաթևովին ապրող Մամսոն Արսենի Տեր-Պողոսյանին:

«...Ձեր հանգուցյալ պապ, Բաֆթու Խենթ Մամսոնին առաջին անգամ տեսել եմ

1908 թվականին իմ ծննդավայր Էջմիածնի շրջանի Գրամփա գյուղում, երբ նա Էջմիածնի գավառի ջրաբաշխն էր: Օգոստոսի կիզող օրերից էր: Մամսոն Տեր-Պողոսյանը եկավ սպիտակ ձիով: Գլուխը բաց էր, հագին սպիտակ վերնաշապիկ, դեմքը վարդագույն, գեղ, լայն այտերով, արծվի հայացքով, գեղեցիկ ու մեծ աչքերով, լայնաթիկունք: Եկավ կանգնեց գյուղամիջի մեծ չինարի ծառի դիմաց: Գյուղացիները, որ մինչ այդ չորացող հողից էին խոսում, միանգամից վերադարձան իրականություն փրկության ափ: Շատի ստվերում անմիջապես գործ գցեցին, բարձր երեցին ու հյուրին առաջնորդեցին հանգստանալու:

Գյուղացիները խոսեցին երաշտի մասին, ասացին, որ եթե մոտակա օրերին ջուր չլինի, խաղողի ամբողջ բերքը կփչանա: Մամսոնը լսեց բոլորին և մի կես ժամից շքախմբով պատվեց դաշտերում: Տեսածը գերազանցեց գյուղացիների պատմածը: Դաշտից վերադարձավ զայրագին ու ասաց, որ երկու օրից ջուրը կլինի: Նա խոսքի տեր մարդ էր, և գյուղացիները նրա խոսքին հավատում էին: Ջրաբաշխի պաշտոնը չափազանց դժվարին պաշտոն էր: Էջմիածնի գավառում հայտնի ջրաբաշխներ եղել էին, բայց Մամսոնի նմանը չկար: Նրա նման արդարադատ, անշահախնդիր, քաջ ու անվախ պաշտոնյա ոչ թե Հայաստանում, այլ Անդրկովկասում էլ չկար: Եվ եթե նա ասաց, որ ջուր կլինի, այդպես էլ լինելու էր: Եվ իրոք, երկու օրից Էջմիածնի գյուղերի կիզվող հողերը կենարար ջուրը ստացան...» (Միքիան ՄՈՒԴԱՐՅԱՆ):

Ժողովրդի մոտ Մամսոն Տեր-Պողոսյանի բարձր հեղինակությունը մասին են վկայում մի քանի փաստեր:

1956 թվականին, մահվանից մեկ ամիս առաջ գեներալ Մմբատ Բորոյանը (Մախլուտ) Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված նամակում գրում է. «Հավատքիս համար ինձ կթաղեք Ս. Էջմիածնում, իսկ քաջությանս համար «Խենթի» կողքին: Եթե հարմար կդառնա: Մախլուտ»:

1983 թ. նախաձեռնող գաղտնախմբի առաջարկությամբ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Մարգարյանը հանդիպում է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հետ՝ խնդրելով վերջինիս աջակցությունը Լճիկի հայրենադարձված աճյունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, 19-րդ դարի հայ ազատագրական շարժման և ռուս-թուրքական պատերազմի հերոս Խենթի Մամսոն Տեր-Պողոսյանի կողքին գաղտնի ամփոփելու համար: Կարճ ժամանակ անց հասկանալի պատճառներով այդ խնդրանքը մերժվում է:

Մամսոն Տեր-Պողոսյանն իր ժամանակի կրթված մարդկանցից էր. ավարտել էր Գետրգյան ճեմարանը, տիրապետում էր մի քանի լեզուների: Հրաշալի գիտեր պատմություն և համոզված էր, որ ազգի արժանապատիվ ապագայի համար կարևոր է գրագետ սերունդ դաստիարակելը: Այդ մտահոգությամբ նա իր անձնական միջոցներով 1890-ին հայրենի Արագոտում հիմնել է դպրոց, որի ուսուցիչներին վճարելու համար մինչև իր մահը (1911 թ.) ամենամյա ֆինանսական օգնություն է հատկացրել: Այս տարի լրանում է այդ դպրոցի 125-ամյակը, սակայն մինչ օրս դպրոցն անանում է: Կարծում ենք՝ լավ առիթ է վերջապես վերականգնելու պատմական ու բարոյական արդարությունը՝ դպրոցն անվանելու իր հիմնադրի Խենթի անունով:

Մարիետա ՅՈՒՆԱՆԻՍՅԱՆ, դոցենտ, ԵՊՀ (Մամսոն Տեր-Պողոսյանի եղբոր ծոռուհին)

Պոլոզ Մուկուչի եւ Ծիտրո Ալեքի Կենսագրության հայտնի ու անհայտ էջերը



Պոլոզ Մուկուչը (Մկրտիչ Ղազարի Մելքոնյանը) ծնվել է 1891 թ. հունվարի 7-ին Գյումրիում, երկաթագործ-արծաթագործ Ղազարի ընտանիքում։ Վերջինիս արհեստանոցը դարբինների արհեստանոցի կողքին էր, 45 համարի տակ։ Մկրտիչը Ղազարի երկրորդ զավակն էր։ Բարձր հասակի համար գյումրեցիները նրան «Պոլոզ» մականունն էին տվել։

Լինելով բնիկ գյումրեցի՝ Մկրտիչը հագնում էր «ֆանաթի» ձևով կարված թափովի շալվար, լաստիկ կտորից արխալուղ, կրում էր կաստոր կտորից գլխարկ, որը գյումրեցիները շափիսա էին անվանում, փափուկ կաշվից կոշիկներ։

Չնայած հայրը քաղաքի հայտնի և հմուտ արհեստավորներից էր, սակայն Մկրտիչն այդպես էլ ոչ մի արհեստ չի սովորում։ Նա ընդամենը տարրական կրթություն էր ստացել «դայտոպլան» կոչվող դպրոցում, ու դրանով էլ սահմանափակվել էին ուսման նկատմամբ եղած ձգտումները։

Չունենալով կրթություն և չտիրապետելով որևէ արհեստի՝ Պոլոզն, այնուամենայնիվ, ուներ զբաղմունք՝ փողոտայի եր։

Գրեթե ամեն օր նրա ձիասայրը հայտնվում էր քաղաքի տարբեր մասերում գտնվող խանութ-կրպակներում ու շուկայում։ Պոլոզ Մուկուչը հաճախորդներին մրգի հետ միասին մատուցում էր համով-հոտով կատակներ։

Պոլոզ Մուկուչին վերագրվող անեկդոտի վերածված և ժողովրդի մեջ տարածված շատ պատմություններ իրական հիմքեր ունենին։ Պոլոզը երբեք պատասխանի համար «գրպանը մտնելու» կարիք չուներ։ Այդ յուրահատկությունը Պոլոզ Մուկուչի մոտ նկատվել էր դեռ մանկությունից։

Մայրը պատանի Մուկուչին ուղարկում է Ղունկի աղայի խանութ։

– Գնա տես ապրանքի գներն ի՞նչ է, մի քիչ բան-ման առնենք, – հանձնարարում է մայրը։

Մուկուչը գնում է, տեսնում է գների մեջ փոփոխություն չկա։ Կանգնում է դռան մոտ ամրացված հայելու դիմաց, մազերը հարդարում, դուրս է գալիս։ Այսպես կրկնվում է մի քանի օր։ Չորրորդ անգամ, երբ Մուկուչը դուրս գալուց առաջ նորից սկսում է սանրել մազերը, խանութպանը զայրացած հարցնում է.

– Օո, խանութ ես եկել, թե՛ վարսավիրանոց։

– Ապրանքների գներուն օր կաշեն, մազերս բիզ-բիզ կկայնին, կսանրեն, նոր դուրս կուգամ, – պատասխանում է Մուկուչը։

1899 թ. ավարտվում է Ջաջուռի երկաթուղային թունելի շինարարությունը, և առաջին շոգեքարշը մտնում է Գյումրի։ Իր ընկեր Մադոյենց Նապոյի հետ Մուկուչն էլ է գնում երկաթուղու կայարան։ Երկար նայելուց հետո Մուկուչը դիմում է ընկերոջը.

– Նապո, էս պարավորը ընչո՞վ կերթա։

– Բոլով՝ գոլորշով կերթա, – պատասխանում է ընկերը։

Ութամյա Մկրտիչը չի ուզում հավատալ։ Նապոն որքան էլ բացատրում է, ընկերը չի հավատում և հենց կայարանում Մուկուչը հայտնում է իր կասկածը։

– Օո, օր պարավորը բոլով էրթա, Ձիթոցոնց բաղնիքը հմի շուտունց Լոնդոն էր հասել։

Ջատկի տոներին Պոլոզ Մուկուչն այցելում է Հովհաննես և Կարապետ Չաքմաշյանների խանութ։ Եղբայրներից ավագը՝ Կարապետը, խրատական տոնով դիմում է Մուկուչին.

– Մուկուչ ջան, իմ ցավը կուգա, հերիք չէ՞ դու փողոտայություն էնա։ Նայե, օղու, արհեստ սորվի, կնիկ-երեխա ունեցիր, էսոնց պահե։ Առանց վիրավորվելու Մուկուչը պատասխանում է.

– Ուստա Կարապետ, դու իմ վենձ ախպերն ես։ Եթե մարդ նայելով արհեստ սորվեր, դասաբնոցի շները հիմի վաղուց դասաբ էին դառել։

Մուկուչն իր չամուսնանալը, երբ հարցրել են, պատճառաբանել է այսպես.

«Մենձ ախպերս կնկանից բաժնվալ, էս էլ կարգվիմ ու բախտս չերե, բաժնվիմ, էս անգամ գյումրեցիք պոի ըսեն, թե Պոլոզենց շենը շեն չէ, հարս չի դիմանա, ըդուր համար էլ չեն պսակվի, թող մեր գերդաստանի անունը չկոտրվի»։

Մուկուչի ժամանակակից սրամիտների թվում էին «Ծիտրո» Ալեքը, «Թուխալ» Հարությունը, Մադոյենց «Միրուն» Նապոն, Տիրատուրենց Մարգարը, «Նալըն» Կարոն, կոշիկի կաղապար պատրաստող Հովհաննեսը՝ «Գրամաֆոն Օնեսը», «Չաղլենց» Ներսեսը, դամբալի ուստա Կոլան, «Մոխ» Հեյվարեն, դիոչի երկան Աշոն։

Սրանք նաև Ծիտրո Ալեքի (Տիգրան Հարությունյան) սրճարանի մշտական հաճախորդներն էին։ Հակառակ Մուկուչի կատակասեր ու համեստ բնավորության, Ծիտրոն շատ կովարար էր և սիրում էր խոսքը համեմել հայիտյանքներով։ Ծնվել է 1896 թ., Պոլոզ Մուկուչի ծննդից 5 տարի անց։

Բնակվել է 39 փողոցի 212 տանը։ Նրա հայրը հին շուկայի տարածքում ունեցել է սրճարան, որը հոր մահից հետո Ծիտրոն է տնօրինել։ Թե ինչու է Տիգրանը դարձել Ծիտրո, դրա հետ կապված հիշատակվում է հետևյալ պատմությունը։ Գյումրիում շատ էին աղաճառ սիրահարները։ Աղաճառ պահողներին կոչում էին դուշ-բազներ։

Աղաճառներ էր նաև Տիգրանը։ Եվ ահա, մի կիրակի նա տոնական հագուստներով մտնում է քիլարը՝ աղաճառներին կեր ու ջուր տալու։ Դուրս գալիս հայրը նկատում է, որ Տիգրանի նոր կարած չուխայի վրա աղաճառ ձերտ կա։ Հայրը խիստ զայրացած ապստակում է նրան և արտոմ է.

– Այ օղու, քեզի վո՞վ ստիպեց թագա շորով մտնիս հաճախ, որ դու խի ձերտ եղի։

Իսկ թե ինչու Ծիտրոյից բացի տղային է կանում նաև Ալեք անունը, կա այսպիսի մի պատմություն։

Անհայտ քրեական գործի կապակցությամբ Տիգրանի հորը՝ Թորոսին, տանում են ոստիկանատուն։ Այդ լուրը հասնում է Պոլոզ Մուկուչի ավագ եղբորը՝ Ալեքին, ով շատ մոտ է եղել Ծիտրոյի հոր հետ։ Երբ Ալեքը գնում է ոստիկանատուն, Թորոսը նրան տեսնելով՝ ասում է.

– Ալեք ջան, կարող է ընձի դատեն, գուզեն քեզի մե օսյաթ (հանձնարարություն) տամ։ Ծիտրոյիս հանձնում եմ քեզ, քեզի էլ՝ Աստծուն։ Եթե ընձի բան եղնի, իրան զավակիդ պես կնայես։ Թող ըսեն Ծիտրո Ալեքի։ Ահա այդ օրվանից էլ Տիգրանին կոչում են Ծիտրո Ալեք։

Տիգրանը՝ գյումրեցիների սիրելի Ծիտրո Ալեքը, մահացել է 1936 թ., Պոլոզ Մուկուչի մահվանից 5 տարի անց։ Գյումրեցի երեկի սրախոս Պոլոզ Մուկուչը մահացել է 1931 թ., ասում են՝ որքան որ ինքն էր

Հիմնահարց

Եկել է Մեծ Ֆուտբոլին վերադառնալու ժամանակը

(Վանաձորում ֆուտբոլային լավագույն ավանդույթների վերականգնման համար լրջագույն հնարավորություններ արդեն կան)

Ժամանակին ֆուտբոլը հանրապետության երրորդ քաղաքում առաջադարձ մարզաձևերի առաջին շարքում էր: Վանաձորի փորձով մարզասերները հիշում են, որ «Լոռի» վարպետների թիմի՝ համանուն մարզադաշտում կայացող հանդիպումներին, քրիբունաներում ասեղ գցելու փող չէր լինում: Արդյունաբերական հսկա քաղաքը փառացիորեն շնչում էր Մեծ Ֆուտբոլով: Դեռ մինչև երեկ՝ ֆուտբոլային փառավոր անցյալ ունեցող քաղաքում «մեռելային» լռություն էր, եւ ամեն հույս թաղված էր խորհրդավոր, անթափանց մշուշի մեջ:

Հիշում են, թե «Լոռի» թիմի մասնակցությամբ բոլոր հանդիպումներն ինչպես էին վերածվում յուրօրինակ տոների. փոքրերի ու մեծերի հորդափոս շարքերը դեռ խաղից ժամեր առաջ ձգվում էին դեպի գովաստում ամուսնի փեշին փռված մարզադաշտ: Խաղից առաջ հարյուրավոր պատանիների շուրթերից միայն կլսեիր «Քեռի, ինձ քեզ հետ ներս տար» խնդրանք-պաղատանքը. նրանք մեծերին խնդրում էին խոժոռ հսկիչների մոտ հանդես գալ որպես ծնող, և ծնողի իրավունքով իրենց ուղեկցել ֆուտբոլային ներկայացման: Հիմա են հասկանում, որ հսկիչներին հրահանգված է եղել ֆուտբոլասեր պատանիներին հնարավորություն տալ առանց տոմսի համար վճարելու դիտել խաղերը՝ սեր արթնացնելու, ֆուտբոլը նաև այդ կերպ մասսայականացնելու, ֆիզկուլտուրայի և սպորտի ոգով պատանիներին և երիտասարդներին դաստիարակվելու հնարավորությունը:

րությունը ընձեռնելու նպատակով: Իսկ ֆուտբոլն, իրոք, ֆուտբոլ էր՝ կրակոտ, հարուստ անգիջում պայքարի դրվագներով, ուժի, հնարամտության, կամքի դրսևորման հետաքրքիր ու լայնածավալ ասպարեզ: Դրանք էին գերում բազմահազար հանդիսականներին, դրանք էին մեծի ու փոքրի կլանում և քաղաքի ծայրամասում գտնվող մարզադաշտ առաջնորդում: 60-ականների հսՄՄ առաջնությունների Բ խմբում հանդես եկող լոռեցիների խաղերն առավել մարդաշատ ու տոնական էին դառնում, երբ մեր թիմը հայտնվում էր աղյուսակի վերին հորիզոնականներում: Իսկ դա հաճախ էր պատահում: Բոլորի շուրթերին գրեթե կուռք դարձած ֆուտբոլիստների անուններն էին՝ Զմայակ Մխոյան (Աղվես Զամո), Հայկազ Գևորգյան, Ռուդիկ Ամիրխանյան (Կոդ), Հենրիկ Շահբաջյան, Սաշիկ Քերոյան, Հովհաննես Կիրակոսյան, Լյովա Պողոսյան, Լյովա Մովսիսյան, Արայիկ Հովհաննիսյան, Վանիկ Հովհաննեսյան, Էդիկ Հարությունյան, Վրեժ Պողոսյան, Սերգեյ Ջաքարյան և ուրիշներ: Սի քանի խաղաշրջան թիմի կազմի կեսից ավելին սպորտի վարպետներ էին, նրանցով էր համալրվում նաև լեգենդ դարձած «Արարատ» ֆուտբոլային թիմը: Իսկ «Լոռին» համալրվում էր Վանաձոր քաղաքի հեռանկարային ֆուտբոլիստներով, որոնց պատրված ծագում էր մանկապատանեկան մարզադպրոցներում, «Քիմիկ» և գործարանային այլ թիմերում, բակային, թաղային խա-

225

230

երևելի, նույնքան էլ թաղումն է եղել երևելի:

Պոլոզ Մուկուչի հիվանդության ու թաղման վերաբերյալ գյումրեցի հայտնի կառապաններից Վիպուի Վարդանի հիշողությունները գրառել է արձակագիր, երգիծաբան և լրագրող Հենրիկ Գևորգյանն իր «Սրամիտների քաղաքը» գրքում, որից ներկայացնում են մի հատված. «Էդ տեսակ մարդիկ խոսքերը ջրի մեջ են պահել: Մուկուչը հեշ չհասկցանք ինչըդ հիվանդավ, ինչըդ մեռավ», – տխուր ու մտախոհ սկսեց Վիպուի Վարդանը:

– Ըշտը գնացիք հասանք Թիֆլիս, գտանք հիվանդանոցը, ներս մտանք: Մուկուչը թիկնել էր բարձին, քիթը սրված, դեմքը դեղնած, աչքերը փոս ընկած: Հիվանդությունը քամել էր էնոր, միսը ոսկրեն չէր ջոկվի: Մեզի ճանչցավ: Մե քանիմ խոսք ըսավ ու դառավ Հարություն:

– Ձեզի օսյաթ կենեմ, իմ ազիզ ախօրտիք, բան է, վով գիտե, մահը մարդու անգջի ետևն է, մեկ էլ տեսար՝ մեռա... Ընձի որ տարաք թաղելու, թողեք աջ ձեռն դազողից ցած կախվի:

– Իյա , էդ ընչի , Մուկուչ ջան, – զարմացավ Հարությունը:

– Համ ընկերտանցս, իմ հարազատ Գյումրու մասս բարով կենեմ, համ էլ վատ մարդկանց կհասկցնեմ, որ աշխարհքս ունայն բան է, անցավոր, մաացեք բարով:

– Մուկուչ, ի՛նչ կխոսաս, դու 100 տարի կապրիս, դու մեռնող հիվանդ չես, – մխիթարեց Հարությունը:

– Ընձի սխալ չհասկնաք, ես իմ մեռնելու դարդը չեմ, – տնքաց Մուկուչը, – կվախենամ Գյումրու համա ու լազաթը Էրթա:

– Էն ինչ թաղում էր, – վրա բերեց կիստուկ Աշոտը, – ժողովրդի մեծերը բոշի մայլեն էր, մեկն էլ գերեզման էր հասել:

– Քաղաքն էլ տեսակ թաղում չէր տեսել, – գրույցը եզրափակեց Հարությունը:

«Կումայրի» թերթի ամենաերկարակյաց թղթակից Վազգեն Հարությունյանն իր «Գյումրին, նրա մարդիկ, սովորույթները» գրքովյում արդեն ակնատեսի աչքերով է նկարագրում գյումրեցի արախոսի թաղման արարողությունը. «21 տարեկան էի, երբ 1931 թ. փետրվարի վերջին մահացավ Պոլոզ Մուկուչը, – հիշում է Վազգեն Հարությունյանը, – հայրս, որ նրանց ծխատեր քահանան էր, կատարեց սգի պատարագը: Երբ այցի գնացի, տեսա, որ ծաղկեպսակ

էին բերել ոչ միայն հանգուցյալի հարազատներն ու մերձավորները, այլև վաճառականներ, արհեստավորներ, իսկ մի սև ժապավենի վրա գրված էր. «Ավետիք Բաահակյանից՝ սիրելի Մուկուչին»: Բաահակյանը պատիվ էր արել ծաղկեպսակ դնել ընկերոջ գերեզմանին:

Պատարագն ավարտելուց հետո հարազատները դազաղը դուրս բերեցին եկեղեցուց, և չնայած դիակառքի առկայությանը՝ հուղարկավորները որոշեցին դազաղը մինչև գերեզմանոց տանել ուսերի վրա: Թափորի առջևից գնում էին 4 քահանաներ խաչ ու խաչվառով, հետևից՝ երաժիշտները, կատարելով հայտնի երգահանների սգո մեղեդիները:

Թաղման արարողությունից հետո Բաահակյանի ուղարկած պսակը դրվեց գերեզմանի գլխին և նրա հիշատակի համար խմեցին մոտ 400 մարդ, և դատարկ 22երը շարվեցին գերեզմանի շուրջ»:

Պոլոզ Մուկուչի գերեզմանը 20 տարի անշիրմաբար է մնում: 1952 թ. Գյումրի է այցելում Ավետիք Բաահակյանը՝ մոր գերեզմանաքարը կառուցելու նպատակով վարպետ Միմիկին հանդիպելու համար:

Սի օր գերեզմանոցից դուրս գալիս մեծանուն բանաստեղծն ու վարպետ Միմիկը տեսնում են երեք երիտասարդի, ովքեր ինչ-որ մի գերեզմանաթմբի մոտ ողորմաթաա են խմում: Վերջիններս հրավիրում են Ավետիք Բաահակյանին և ուստա Միմիկին միանալ իրենց և խմել Մուկուչի համար՝ ասելով, որ իրենք էլ Թիֆլիսից են եկել, եկել են Պոլոզին տեսության:

Ավետիք Բաահակյանը վատ է զգում տեսնելով Մուկուչի գերեզմանն անշիրմաբար և, դառնալով վարպետ Միմիկին, խնդրում է, որպեսզի իր կողմից մի մահարձան էլ Մուկուչի համար պատրաստի՝ ասելով, թե այդքան պատվական մարդու գերեզմանը չի կարող մնալ առանց տապանաքարի:

Ամիսներ են անցնում այդ օրվանից, և երբ գերեզմանաքարը սարքվում է, վարպետը հանդիպում է ուստա Միմիկին, գրպանից փող է հանում, թե վերցրու, հալալ է քեզ, Մուկուչին հարմար շիրմաքար ես կառուցել:

– Չեղավ, վարպետ, Պոլոզը մենակ քուկո չէ, ամենքինս է, – ասում է ուստա Միմիկն ու փողի կեսը վերադարձնում: Կոնաձև, կարմրաքար մահարձան է Պոլոզ Մուկուչի համար պատրաստված տապանաքարը՝ մի կողմում գրված. «Պոլոզ Մուկուչին (Մկրտիչ Ղազարոսի Մեղրոնյանին)»: Մյուս կողմում՝ «Հիշատակ բանաստեղծ Ավետիք Բաահակյանից»:

Երանուհի ՍՈՐՈՅԱՆ

240

դադաշտերում և մրցասպարեզներում: Վանաձորցիներն այսօր էլ հպարտությամբ են հիշում, որ 80–ականներին «Կաշվե զնդակ» համամիութենական խաղերում մեր պատանի ֆուտբոլիստները խՍՀՄ անունով լայնածավալ երկրում մեկ անգամ չէ, որ հասել են ցնցող արդյունքների: Այո, հանրապետության երրորդ քաղաքը ապրում և շնչում էր ֆուտբոլով, այն զարգանում էր, ծավալվում տիտանական քայլերով, քաղաքային իշխանությունները, հիմնարկ-



Ռիգա, 1981 թ. Կիրովականի «ԶԻՄԿ»: ԽՍՀՄ ֆուտբոլի Ֆեդերացիայի եւ ՀԼԿԵՄ ԿԿ «Կաշվե զնդակ» համամիութենական մրցույթների չեմպիոն: Մարզիչներ՝ Ռ. Հովհաննիսյան, Վ. Պողոսյան, Լ. Վարդիկյան, թիմի պետ Եւ. Խորհրդապետ: Ն. Զուլյան: Նախագահ՝ ԽՍՀՄ սպորտի Վաստակավոր վարպետներ Ս. Ալիմովը, Ն. Սպարտապիլեց, Մ. Սուշկովը եւ Ռուսաստանի ԽՍՀ ֆուտբոլի ֆեդերացիայի Նախագահ Վ. Նեմչինովը:

ծեռնարկություններն ամեն հնարավորն անում էին հանուն Մեծն Ֆուտբոլի: Ֆուտբոլային հաջողությունների, նվաճումների մասին կարելի է բազմաթիվ էջերով հիշատակել:

Յետահայաց հիշելով այս ամենը՝ այսօր չես կարող առանց զարմանքի մտածել, թե ինչպե՞ս պատահեց, որ համընդհանուր լույսից և առաջընթացից հետո ֆուտբոլի համար եկան այսպիսի դժոճակ ու խավար օրեր, այնքան խավար, որ հեռվում առկաժող հույսի շողն անգամ նկատելի չէր ոչ մեկիս: Բավական է ասել, որ երրորդը համարվող քաղաքը հանրապետության առաջնությունում հանդես եկող թիմ չունի այս էլ քանի տարի, ու դեռ հայտնի չէ, թե երբ կունենա: Մեծ Ֆուտբոլը լիովին անտերության է մատնված: Մեղավորներ փնտրելու նպատակ չունենք: Անավոր գահավեժում մեղքի մեծ չափաբաժին ունեն ֆուտբոլի պատասխանատուները, մասնագետները, ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառի ղեկավարները, քաղաքային և մարզային իշխանությունները: Ֆուտբոլի «ողնաշարը» եթե չկուտրվեց, ապա ստույգ է, որ անդամների վնասներ կրեց նաև այն բանից հետո, երբ որոշվեց հաստոցաշինական գործարանի համար նոր մասնաշենք կառուցելու նպատակով գործարանին նվիրել Վանաձորի խորհրդանշներից մեկի՝ գեղահորաշ «Քիմիկ» մարզադաշտի տարածքը: Փոխարենը խոստանում էին նոր, ավելի մեծ ու շքեղ մարզադաշտ կառուցել: Ո՛ր էլ այդ նորը, տեղը չենք կարող ցույց տալ՝ չկա: Հիմա «Լոռի» մարզադաշտում էլ չեղածի հաշիվ է: Վիճակը լիովին աղետալի է: Մասնագետների պնդմամբ՝ գլխավոր և մարզումային դաշտերի կանաչ խոտածածկը եթե կարելի է ինչ-ինչ նպատակի օգտագործել, ապա ոչ ֆուտբոլային հանդիպումներ անցկացնելու կամ մարզվելու, այլ, կոտրվածքներից խուսափելով, պարզապես գնդակ «տռելու» համար: Վտանգավոր է: Տրիբունա գրեթե գոյություն չունի, նստելատեղերում ծառեր են աճում, լուսավորության աշտարակները թալանված են, ցանկապատերը շարքից դուրս են գալիս: Անհույս, «մեռյալ» իրավիճակ: Ի՞նչ ֆուտբոլի ու ֆուտբոլի զարգացման մասին կարող է խոսք գնալ, եթե բացակայում է առաջին ու գլխավոր պայմանը. բարվոք, ժամանակի պահանջները բավարարող մարզադաշտ չունենք:

Ստեղծված իրավիճակն անհամապատասխան է բոլորին՝ սկսած մարզասերներից, քաղաքային իշխանություններից, մինչև Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա: Եկավ պահ, երբ ամենքը ոգևորվեցին: Մի քանի տարի առաջ ՀՀԿ նախագահ Ռուբեն Հայրապետյանը այցելեց Վանաձոր, քաղաքային Սամվել Դարբինյանի հետ եղավ մարզադաշտում, տեսավ, զննատես իրավիճակը: Պատրաստակամություն հայտնեց ծեռնամուխ լինել մարզադաշտի և հարակից մարզումային խաղադաշտի ենթակառուցվածքների հիմնա-

նորոգմանը, ստադիոնին կից արհեստական խոտածածկություն մոր դաշտ կառուցելու աշխատանքներին: Այդ ամենը պիտի կատարվեր, եթե հարգվեր մարզադաշտը սեփականության իրավունքով ՀՀԿ-ին փոխանցելու առաջարկը: Հարցը մի քանի անգամ քննարկվեց ավագանու նիստերում, վերջապես՝ ցանկալի վճիռը կայացվեց: Ու թվում էր սառույցը շարժվեց, վերջ մշուշին ու անհայտությանը, մարզադաշտը կվերակառուցվի, կդարձվի միջազգային չափանիշներին համապատասխան: Կանկածները, թե մարզադաշտը այլևս չի ծառայի քաղաքին, փարատեց Վանաձորի



Ալյեր, 1988 թ. սեպտեմբեր, ՖԱ «ԼՈՒՌ»՝ Ե. Կիրովական: Մարզիչներ՝ Էդ. Ա. Հարությունյան եւ Յժ. Պ. Միտյան: Ֆուտբոլային ակումբի Նախագահ և խորհրդապետ՝ Ն. Զուլյան: 2-րդ լիգայի թիմերի մեջ Համիկ Գավաթի գավաթակիր: Եզրափակիչում հաղթել են Կիրովաբադի «ՊԵՆԱՆՈՒ-Զյալազ»-ին 2:0 հաշվով:

քաղաքապետը՝ հանրայնորեն խոստանալով, որ այն բացառապես օգտագործվելու է քաղաքում ֆուտբոլի զարգացմանն ու արմատավորմանը, համայնքային կարևորագույն միջոցառումների անցկացմանը: Եվ որպեսզի հիմնադրոգուն ինքնանպատակ չլինի և զարկ տրվի մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանը, նախատեսվեց, որ նորաստեղծ Տարոն թաղամասի ամայի հողամասերում կկառուցվեն մի քանի խաղադաշտեր (դրանք այսօր արդեն կառուցված են, կառուցվում են), հեռանկարում էլ կար մարզական համալիր ստեղծելու նպատակը (այս գործընթացն էլ հաջողությամբ իրականացնում է, ըստ տեղեկությունների՝ շուտով Վանաձորում կգործի ֆուտբոլի ակադեմիա): ՀՀԿ-ի նախագահը վստահեցրեց, որ մեկ-երկու տարվա ընթացքում ամեն ինչ կարվի, հույս հայտնեց. «Հավատարմե՛ք, որ առաջիկայում տեղի թիմերը էլ դուրս կգան միջազգային մասարեզ ու եվրոպական խաղերը կանցկացնեն տանը»: Սակայն հասարակական մի կազմակերպության սըրտով չեղավ մարզադաշտի փոխանցումը, որը համարեց անհիմն նվիրատվություն: Ու մինչ վանաձորցիները կմտածեին, որ «կարևորը ստադիոնի վերակառուցումն է ու վերջնական կործանումից փրկելը, որևէ մեկը այն իր հետ չի տանելու, մնալու է քաղաքում, անկախ նրանից, թե ով է սեփականատերը», անցած երկար ու ծիգ տարիներին հարցը վիճարկվում էր դատական կարգով: Վերջապես, տեղեկացանք, դատարանն ի վերջո վճիռ կայացրեց՝ հօգուտ ստադիոնի վերակառուցման-վերականգնման: Լավատես ֆուտբոլասերներին և ֆուտբոլի ջատագովներին լուրը խանդավառեց նոր ուժով, ոգևորեց և հուսադրեց: Համոզված ենք՝ ՀՀԿ-ն ծեռնամուխ կլինի կարևոր գործին: Մեծ Ֆուտբոլի վերադարձը մոտ է, այն անչափ անհրաժեշտ է այսօր և, որ ամենակարևորն է, հնարավոր է, միանգամայն իրականանալի: Մարզային, քաղաքային իշխանությունները պակաս մտահոգ չեն ֆուտբոլի զարգացման համար, ՀՀ բարձրագույն խմբի առաջնություններին հանդես եկող թիմ ունենալու համար պատրաստ են հիմնախնդիրներ հաղթահարել և ամենայն աջակցություն ցուցաբերել կարող ուժերին: Միայն հարց է, թե մենք կարող ուժեր այսօր ունեն՞ք, ամայության և անբերրիության տարիներն իրենց հետքը չեն՞ թողել մարդկանց հոգեբանությունում, կարողություններում, ցանկություններում, կգտնվեն՞ պատրաստակամ, շահագրգիռ մարդիկ, ովքեր ինքնա-կամ կնվիրվեն այսօր այսքան իրատապ և այսքան դժվար հարցի լուծմանը:

Լյովա Վարդիկյան («Քիմիկ», «Լոռի» թիմերի ավագ մարզիչ). – Անշուշտ, կարող ուժեր կան, հնարավոր է աստիճանաբար վերականգնել փառավոր օրերը: Մենք բոլորս «կտեղաշարժվենք», եթե «տեղաշարժող» լինի: Նայենք մեզ շրջապատող մարդկանց, մասնագետներին, կան, կարող են: Եռանդուն մարդ է, ֆուտբոլի իսկական նվիրյալ է «Իներկապ» բարեգործականի նախագահ



250

Նորայր Զուլյանը, որի ընդունակություններն անսահմանափակ են մաս կազմակերպչական հարցերում: Ես պատրաստ եմ լծվելու, գիտելիքներս, ուժերս ներդնելու այդ պատվավոր գործին: (Նշենք՝ Լ. Վարդիկյանը քաղաքի այն միակ մարզիչն է, որ համապատասխան բարձրագույն կրթությունն ստացել և որպես ֆուտբոլի մարզիչ աշխատելու իրավունք նվաճել է ուսանելով ֆուտբոլի մարզիչների պատրաստման Մոսկվայի ինստիտուտում):

Նորայր Սկրյույան (70-ականներին ՖԻՍԱ-ի թիմի խաղացող, 33 չեմպիոն – գավաթակիր, սպորտի վարպետության թեկնածու). – Տոն կլինի այն օրը, երբ նոր «Լոռի»-ն կմասնակցի համրապետության առաջնությանը: Ն. Զուլյանը ունակ է, դժվարությունների առջև կանգնող մարդ չէ, պրպտող միտք ունի: Հիշենք միայն, որ նա է 1974 թ. հիմնադրել պատանիների «Կաշվե գնդակ» քաղաքային ակումբը, կազմակերպել համաքաղաքային մրցումներ, որին մասնակցում էին շուրջ 150 թիմեր: Այդ եռուն օրերից ծնունդ առած 6 թիմեր 1978 – 1984 թ.թ. դարձել են Հայաստանի և ԽՍՀՄ չեմպիոններ և մրցանակակիրներ:

Լեոն Եղիգարյան (70-ական թվականներին 33 ֆուտբոլի երիտասարդական հավաքականի անդամ, 90-ականների քաղաքային ֆիզկուլտուրայի եւ սպորտի բաժնի ֆուտբոլի բաժնի պատասխանատու մարզիչ). – Ն. Զուլյանին համատեղ աշխատանքային գործունեությունից գիտեն: Ֆուտբոլը նրա տարերքն է: Հիշում եմ՝ 1987 թ.-ին նա է Հայաստանում առաջինը հիմնադրել և ղեկավարել «Լոռի» պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբը, որը ԽՍՀՄ-ում 6-րդ փորձն էր և հաջող փորձը: Թիմը շուտով դարձավ երկրորդ լիգայի առաջատարներից մեկը: Ֆուտբոլի համար նոր օրեր էին եկել, արդեն իրավերներ էինք ստանում արտասահմանյան երկրներից: Նրա և նորաստեղծ ակումբի համար շրջադարձային եղավ այն պահը, երբ Գերմանիա իրավերի ժամանակ նա գերադասեց իրենց հետ խաղալու տանել բացառապես ֆուտբոլիստների և ոչ թե տուրիստական շրջագայությունների «սիրահար» բարձրաստիճան պաշտոնյաների: Արդյունքում, ակումբի ղեկն ստանձնեցին այլ մարզիչ, իսկ Զուլյանը ընդունեց «Սպիտակ» թիմի գլխավոր հովանավոր Նորիկ Մուրադյանի (Սպիտակի կարի ֆաբրիկայի սեփականատեր և շրջկոմի 1-ին քարտուղար) իրավերը, հիմնադրեց «Սպիտակ» ՖԱ-ն, որին ապահովեց «ԻԿԱՐՈՒՄ» և «ՌԱՖ» մականիշի ավտոբուսներով, 1989–1990 թ.-ին «Սպիտակ» թիմին ընկերական խաղերի տարավ Ուգանդա, Իտալիա և Գերմանիա, որը մի քանի տարի շարունակ հաջող հանդես եկավ 33 բարձրագույն խմբում:

Սերգեյ Զաքարյան («Լոռու» նախկին ավագ – առաջատար խաղացող, Վանաձորի ֆուտբոլի մարզադպրոցի ներկայիս տնօրեն). – Թե մանկապատանեկան, թե մեծահասակների ֆուտբոլի զարգացման գործում ծանրակշիռ ներդրում ունի Ն. Զուլյանը: Մեր ֆուտբոլի վերածնունդի հարցում չպետք է մոռանանք նրա անունը: Մի բան էլ վստահ կարող եմ ասել, որ այսօր մեր դպրոցի փոքրաբանակ մարզիչների ջանացավ աշխատանքի շնորհիվ երեք հավաքականներ գրեթե հավասար պայքարում են Հայաստանի առաջատար լիգաների իրենց հասակակիցների դեմ: Ամենակարևորը, եթե հայտնվի այն Գլխավոր ՀՈՎԱՍՏԱՎՈՐԸ, ֆուտբոլի այն նվիրյալը, ով կֆինանսավորի թե մարզադաշտի վերակառուցումը, թե թիմի մասնակցությունը Հայաստանի առաջնություններում գոնե մեկ-երկու տարի, ապա Ն. Զուլյանը

կարող է բարձրացնել, խանդավառել և մի նպատակի՝ ֆուտբոլի զարգացմանը մղել ու ծառայեցնել բոլոր կարող ուժերին:

Գագիկ Սարգսյան (80-ականների «Լոռի» թիմի առանցքային խաղացող, թիմի երկար տարիների ավագ մարզիչ). – Տեսնում ենք, թե Գյումրիում որքան հարգի է ֆուտբոլը, երկու քաղաքներն էլ ահավոր աղետ տեսան, հասկացանք, բայց ինչպե՞ս է, որ այնտեղ պահպանվեցին ֆուտբոլային լավագույն ավանդույթները, հանրապետությունում «Շիրակն» այսօր մեծ հեղինակություն է, իսկ մեզ մոտ ֆուտբոլը հավասարվեց ցեխին: Չպահեցինք, չպահպանեցինք: Քաղել ենք անտարբերության պտուղները: Մեզ նվիրյալներ են հարկավոր, եթե ուզում ենք սայլը տեղից շարժել: Գիտեմ մի անուն, ով եթե ցանկանա, ֆուտբոլային շարժիչը գործի կգցի, և անխափան, բռնաձեռք կաշխատեն բոլոր կարող ուժերը, ֆուտբոլի ապագայով մտահոգվողները: Հարկավոր է՝ առաջինը Գլխավոր Հովանավորին գտնել, հետո ղեկը հենց նրան՝ Նորայր Զուլյանին վստահել:

Ռազմիկ Ղազարյան (Ֆիզկուլտուրայի վաստակաշատ ուսուցիչ, ֆուտբոլի մարզադպրոցի մարզիչ). – 1992 – 2008 թթ. «Ինտերկապ»-ի միջնորդությամբ և նաև հովանավորությամբ մեր քաղաքի մի քանի պատանեկան թիմեր իրավերով մեկնել են Ֆրանսիա, Վրաստան, Հունաստան, Իտալիա, մասնակցել մրցաշարերի և ընկերական խաղերի: Իմ գլխավորած թիմը Թուրքիայի միջազգային մրցաշարում 1992 թ. նվաճեց մրցանակային երրորդ տեղը: Մենք փորձ էինք ձեռք բերում, սաների մեջ ամրապնդվում էր սերը ֆուտբոլի նկատմամբ: Դեռ այն ժամանակ, երբ Ն. Զուլյանը հեռացել էր ֆուտբոլի ասպարեզից, նա գիտակցում էր արտասահմանյան մրցաշարերի և ընկերական խաղերի կարևորությունը և հոգ էր տանում այդ հնարավորությունն օգտագործելու և ֆուտբոլի զարգացմանը ծառայեցնելու: Չմոռանանք, որ Նորայր Զուլյանի գործարար, ընկերական կապերի շնորհիվ միայն հնարավոր եղավ, որ «Լոռի», «Սպիտակ», անգամ Գյումրիի «Շիրակ» թիմերը տասնյակ անգամ հյուրընկալվեն եվրոպական, ասիական և աֆրիկյան երկրներում: Հիշեցնեմ նաև, նրա բանիմացությունն ու վաստակն են գնահատել, երբ 1987 – 1990 թթ. ընտրել են ԽՍՀՄ ֆուտբոլային լիգաների միության (ՖԼՄ) վարչական խորհրդի անդամ, որի նախագահն էր ֆուտբոլային հայտնի դեմք Վիկտոր Պոնեդելնիկը, անդամներն էին փառաբանված մարդիկ՝ Վ. Լոբանովսկին, Ն. Սիմոնյանը, Կ. Բեսկովը, Բ. Պայճաձեն, Գ. Կաչալինը...: Նա անմիջական մասնակցություն է ունեցել ԽՍՀՄ ՖԼՄ առաջին կամոնադրության մշակմանը:

Ջրուցեցի նաև ֆիզկուլտուրայի և սպորտի, արվեստի ու մշակույթի բնագավառների հայտնի այլ դեմքերի հետ, նրանք նաև հիշեցին «Ինտերկապի» և նրա հիմնադիր նախագահ Ն. Զուլյանի նվիրական գործունեությունը արտասահմանյան երկրներից՝ ընկերների, բարեգործական կազմակերպությունների նվիրատված մարդասիրական օգնությունները երկրի հասցնելու և դրանց նպատակային բաշխումն ապահովելու ազգաշահ գործընթացում: Վստահ են, նրա եռանդը կբավականացնի իր գիտելիքներն ու ունակությունները ծառայեցնելու ամենամասսայական ու սիրված մարզաձևի վերակենդանացմանը:

Նորայր Զուլյան. – Մեր քաղաքում ոչ միայն չպահպանվեցին ֆուտբոլային հարուստ ավանդույթները, այլև անտերության մատ-

263

մվեցին, փոշիացվեցին բոլոր ռեսուրսները: Սակայն ամեն ինչ դեռևս կորած չէ: Իմ տեղեկություններով՝ Վանաձորի ֆուտբոլի մարզադպրոցում համառոտ են, առանց անհրաժեշտ նվազագույն պայմանների, մարզվում են 300 երեխաներ, որոնց մի մասը երեք հավաքական թիմերում մասնակցում է Հայաստանի պատանեկան առաջնությանը: Ինչ վերաբերում է իմ՝ ֆուտբոլ վերադառնալուն, սիրով կհամաձայնեմ, եթե հայ գործարարներից մեկը ստանձնի մարզադաշտի վերակառուցման գործը, ապա հովանավորի թիմի մասնակցությունը Հայաստանի առաջնությանը՝ զոնե առաջին երկու տարիների: Որպեսզի հովանավորն առավելագույն վստահություն ունենա ֆուտբոլի վերակենդանացման այս ծրագրի նկատմամբ, կարող է ակունքի կոմերցիոն տնօրեն նշանակել իր նախընտրած մարդուն: Կստահ եմ՝ ծրագրի իրականացման ընթացքում թե գլխավոր հովանավորը, թե տեղական իշխանությունները կհամոզվեն, որ ֆուտբոլը ոչ միայն մարզաձև է, այլև մեծ քաղաքականու-

թյուն և շահավետ բիզնես:

Մեծ Ֆուտբոլի վերադարձի հեղինակը՝ քաղաքում, այո, մեծ կարոտ ու հույս կա: Դրանք անմիջականորեն կապված են քաղաքի գլխավոր մարզադաշտի վերակառուցման իրական հնարավորության, Տարոններում արդեն կառուցված մարզադաշտերի, ֆուտբոլի ակադեմիա սրբեղծելու սպուլիզ փորձերի, ֆուտբոլասերների մեծագույն ցանկությունների եւ իշխանությունների պատրաստակամության հետ: Այս ամենը վկայում են, որ, այո, եկել է Մեծ Ֆուտբոլին վերադառնալու ժամանակը: Էլի համբերություն, բայց նաեւ վճռականություն է հարկավոր:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

(«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի սեփական թղթակից)
ք. Վանաձոր, Լոռու մարզ

Լուսանկարը՝ Էմիլ ՅԱՎՐՅԱՆԻ

ДОСТОЙНЫЙ СЫН ДОСТОЙНОГО ОТЦА

Такие встречи, которые никогда нельзя забыть, наверное, есть у каждого человека. Чаще всего они остаются приятными личными воспоминаниями. Но, случается, судьба порой совершенно неожиданно дарит нам такие встречи, о которых хочется рассказать всему миру. Потому что это уже не твоё личное рандеву, а эпизод в нашей общей истории.

Мне повезло, судьба достаточно часто баловала меня такими незабываемыми встречами с великими деятелями в области музыки, литературы, театра и кино, видными военачальниками. И, думаю, пришло время поделиться тем сокровищем, которое хранит моя память.

Сын отца «Королевы красоты»

А я иду к тебе на встречу,
А я несу тебе цветы,
Как единственной на свете
Королеве красоты.

Этот зажигательный твист и сегодня никому не даст сидеть на месте. Эту песню поют уже внуки и даже правнуки тех людей, которые жили в некогда огромном и счастливом государстве – Советском Союзе. Уже нет с нами великого Муслима Магомаева, чей неповторимый голос ввел эту песню в вечный ранг шлягеров, а мы помним и продолжаем петь. Во всяком случае напеваем мотив – легкий, яркий и запоминающийся, как и все, что было создано его автором, композитором Арно Бабаджаняном. «Будь со мной», «Голубая тайга», «Благодарю тебя», «Ноктюрн» – каждое название уже вызывает добрую улыбку и самые теплые чувства. Потому что эти музыкальные шедевры жилились на слова Роберта Рождественского, Андрея Вознесенского, а озвучивал их, доносил до нашего слуха и сердец король советского и мирового олимпа Муслим Магомаев.

